


ՅՈՎՆԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՅԻ

Ի ՏԱԾԿԱՅ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՅ

ԳՐՈՅ ՔԱՂԵԱԼ ԲԱՆՔ

(«ՌԱՍԱԽԼ ԻԽՎԱՆ ԱԼՍԱՏԱ»)



ՕՎԱՆՈՍ ԵՐԶՅՆԿԱՑԻ

**ВЫБОРКИ
ИЗ КНИГ АРАБСКИХ
ФИЛОСОФОВ
("ПОСЛАНИЯ БРАТЬЕВ ЧИСТОТЫ")**

Публикация текста, предисловие и словарь

С. С. АРЕВШАТЯНА

“Ուիրի” – Երևան – 2009

**PIECES FROM THE WRITINGS
OF ARAB PHILOSOPHERS
SELECTED BY
JOHANNES ERZINKATSI
("RASAIL IKHWAN AL-SAFA")**

Publication of Text, Preface and Vocabulary by

S. S. AREVSHATYAN

“Nairi” Publishing House – Yerevan – 2009

1 (17.925)
3-85

ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ

Ի ՏԱՃԿԱՑ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ
ԳՐՈՑ ՔԱՂԵԱԼ ԲԱՆՔ

(«ՌԱՍԱԻԼ ԻԽՎԱՆ ԱԼ-ՍԱՖԱ»)

Հրատարակումը, առաջաբանը և բառարանը
ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻ

447



Երևան
«Նաիրի» Հրատարակչություն
2009

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Յ – 851 ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ

Ի ՏԱՃԿԱՑ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ ԳՐՈՑ ԲԱՂԵԱԼ ԲԱՆՔ
(«ՌԱՍԱԻԼ ԻՆՎԱՆ ԱԼ-ՍԱՖԱ»)/ Հրատարակումը,
առաջաբանը և բառարանը Սեն Արևշատյանի. Եր.:
«Նաիրի», 2009, 144 էջ:

Հովհաննես Երզնկացու (13-րդ դ.) անունով պահպան-
ված սույն բնագիրը «Մաքրության եղբայրների» («Իս-
վան ալ-սաֆա») իմաստասիրական հռչակավոր հանրա-
գիտարանի (10-րդ դ.) համառոտ թարգմանություն է:

Մատենադարանի եզակի ձեռագրով մեզ հասած ամբող-
ջական բնագիրը հրատարակվում է առաջին անգամ: Նա-
խատեսված է Հայ-արաբական մշակութային կապերով
հետաքրքրվող մասնագետների և ընթերցողների համար:

ԳՄԴ 87.3

ISBN 978-5-550-01588-9

© Սեն Արևշատյան, 2009 թ.

© Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, 2009 թ.

«ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ»
ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՌՈՑ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ-արաբական մշակութային կապերն ունեն հա-
զարմյա պատմություն: Կրոնական տարբերություննե-
րը չեն խոչընդոտել դրանց հաստատմանը: Դեռևս 11-րդ
դարի անվանի գիտնական և քաղաքական գործիչ
Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (990-1059 թթ.)
նշում էր իր՝ արաբական գրականությունը ոչ միայն
քաջատեղյակ լինելու հանգամանքը, այլև նրա դերը
իր բանաստեղծական արվեստի և գիտական հետաքրք-
րությունների խորացման գործում: Իր նամակներից
մեկում նա խոստովանում է. «Յիսմայելականացն
գտեալ զսա, բազում ջանիւ կրթեցաք նախ գրոյն և լե-
զուին և ապա արհեստին»¹:

Այդ կապերի մասին են վկայում նաև արաբերենից
կատարված թարգմանությունները, ինչպես գեղարվես-
տական, այնպես և գիտական բովանդակություն ունե-
ցող երկերի: Այստեղ կարելի է հիշատակել «Հազար ու
մի գիշերների» հեքիաթաշարքի հատվածաբար թարգ-
մանությունները («Պղնձե քաղաքի պատմությունը»,
«Պատմութիւն Մանկանն եւ Աղջկան», «Պատմութիւն
Փահլուլ թագաւորի» և այլն): Թարգմանություններ
են կատարվել նաև անվանի գիտնականներ Իբն-Սինա-
յի, Իբն-Ռուշդի, Ալ-Ռազիի և այլոց երկերից (հատվա-
ծաբար)²:

¹ Գրիգոր Մագիստրոսի թղթերը: Հրատ. Կ. Կոստանեանց, Ալեքսանդ-
րապոլ, 1910, ըստ Լ. Խաչիկյան, «Հայ և արաբ մշակութային կա-
պերը դարերու ընդմեջին», Էջեր գրականության և արվեստի,
Բեյրութ, 1966, էջ 56-60:

² Նույն տեղում, էջ 58:

Լ. Խաչիկյանը այդ թարգմանությունների շարքում նշում է նաև մեր հրատարակած «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք» փիլիսոփայական աշխատությունը³, որը տպագրել էինք 1958 թ. «Բանբեր Մատենադարանի» 4-րդ հատորում: Այդ ուշագրավ բնագիրը պահպանվել է եզակի օրինակով Մատենադարանի № 6670 ձեռագրում (էջ 91ա-111ա) և վերնագրում կրում է Հովհաննես Երզնկացու անունը: Բայց, ինչպես նշել էինք մեր առաջաբանում, դա թարգմանական երկ է, «արաբ և պարսիկ փիլիսոփաների ասույթների և աշխատությունների հիման վրա կազմված իմաստասիրական մի կոմպենդիում է»⁴, այսինքն, քաղվածո մի աշխատություն, միջնադարում շատ տարածված գիտական և գրական գրականության ժանր, որը մեծ մասամբ լինում էր թարգմանական բնույթի և ունենում էր ուսումնական նշանակություն: Նշել էինք նաև, որ Հովհաննես Երզնկացին, ամենայն հավանականությամբ, Պլուզ մականունով հայտնի այն անձնավորությունն է, որն առանձնապես է բազմաթիվ Հովհաննես Երզնկացիներից և իր լայն աշխարհայացքով ամենահավանական թեկնածուն է «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք»-ի կազմողը լինելու համար: Հատուկ նշել էինք, որ «Ի տաճկաց իմաստասիրաց»-ում արծարծված գաղափարները լայնորեն օգտագործված են Հովհաննես Պլուզի կողմից և որ դա հաստատվում է նրան «անվերապահորեն պատկանող իմաստասիրական-տիեզերա-

³ Տե՛ս նույն տեղում, էջ 59:

⁴ Տե՛ս Ս. Արևշատյան, Հովհաննես Երզնկացու իմաստասիրական անհայտ աշխատությունը, «Բանբեր Մատենադարանի», Կ. 4, էջ 298:

գիտական աշխատությունների և ներկա տեքստի ընդհանուր բաղդատությունը»⁵:

Այդ վարկածը և եզրակացությունները հաստատվեցին տարիներ անց, երբ մեր հրատարակած բնագրին անդրադարձավ արաբերենի հմուտ գիտակ, Բեյրութի Ամերիկյան համալսարանի պրոֆեսոր Սեդա Բարսումյան-Դադոյանը: 1978 թվականին հրատարակած հոդվածում⁶ և այնուհետև 1991 թ. լույս ընծայած գրքում⁷ համոզիչ փաստերով նա ապացուցեց, որ «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք»-ը արաբերենից կատարված քաղվածո թարգմանություն է «Մաքրուլթյան եղբայրների» իմաստասիրական ուղերձներից՝ «Ռուսաիլ իխվան ալ-սաֆա»-ից: Նա հաստատեց նաև մեր այն վարկածը, որ Հովհաննես Երզնկացին իր երկերում, հատկապես «Յաղազս երկնային շարժմանն», «Յաղազս երկնային զարդուց» և բազմաթիվ մեկնություն-քարոզներում արծարծում է «Ի տաճկաց իմաստասիրաց»-ում շարադրված գաղափարները: Այդ բնագիրը հիմք հանդիսացավ նրա դոկտորական ուսումնասիրության, որն էլ նա հաջողությամբ պաշտպանեց Երևանի Պետական համալսարանի գիտխորհրդում (մեր պաշտոնական ընդդիմախոսությունը):

«Մաքրուլթյան եղբայրների» կրոնական-փիլիսոփա-

⁶ Նույն տեղում:

⁶ Բարսումյան-Դադոյան Ս., Հովհաննես Երզնկացիի «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք»-ին աղբյուրը «Ռասաէլ իխուան էլ-սաֆա», Հայկազյան Հայագիտական Հանդես, հատ. 9, 1977-1978, էջ 51-70:

⁷ Բարսումյան-Դադոյան Ս., Հովհաննես Երզնկացիի «Ի տաճկաց իմաստասիրաց»-ը և իմաստասիրական արձակը իսլամական աղբյուրներու լույսին տակ: Բեյրութ, 1991, 228 էջ:

յական կազմակերպութիւնը ստեղծվել է 10-րդ դարի կեսերին Բասրա քաղաքում, որպէս գաղտնի միութիւն: Առաջին հիշատակումը վերաբերում է 955 թվականին: Կազմակերպիչների անունները հայտնի չեն, բայց ակնհայտ է, որ դրանք ականավոր գիտնականների, աստվածաբանների և փիլիսոփաների մի պատկառելի խումբ էր, որը հարում էր իսմայիլական շարժմանը⁸: Դա ազատամիտ գործիչների և մտածողների, Աբբասյան խալիֆայութիւնի պայքարող, պաշտոնական մոլոսուլմանութիւնը հակադրվող, բարոյական և հոգևոր մաքրութիւնի ձգտող, ընդհատակում գործող եղբայրութիւն էր⁹: Այն ուներ բազմաթիվ բաժանմունքներ խալիֆայութիւնի ընդարձակ տարածքում: Բասրայի կենտրոնում և այլ քաղաքներում գրված «ուղերձները» լայնորեն տարածվում էին իրենց հետևորդների շրջանակներում:

Պահպանվել է «Մաքրութիւնի եղբայրների» ընդարձակ 52 ուղերձ՝ նվիրված ճշգրիտ գիտութիւնների, իմաստասիրութիւնի և կրոնի բազմաբնույթ խնդիրներին: Փաստորեն այդ ուղերձները (նամակները) ի մի հավաքված հանդիսացան միջնադարյան արաբական գիտութիւնի մի ծավալուն հանրագիտարան՝ հնում ընդունված գիտութիւնների դասակարգմանը համապատասխան: Դրանք բնական գիտութիւններին, տրամաբանութիւնը, մաթեմատիկային, փիլիսոփայութիւնը և աստվածաբանութիւնը նվիրված տրակտատներ էին, որոնք «ուղերձները» ձևով տարածվում էին միութիւն-

նը հարած անդամների միջավայրում: Վերջնական նպատակը, ըստ եղբայրութիւնի գաղափարախոսների, հոգևոր կատարելութիւնն էր, որը ձեռք էր բերվում ճշմարիտ գիտելիքի և բարոյական մաքրութիւնի միջոցով:

Ըստ «Մաքրութիւնի եղբայրների», գիտելիքի սկզբնաղբյուր են հանդիսանում չորս տեսակի երկեր. ա) մետաֆիզիկայի և տրամաբանութիւնի, մաթեմատիկական խնդիրներին նվիրված գրքեր, բ) «Սուրբ գրքերը» – Տորան, Ավետարանը և Կորանը, գ) բնագիտական աշխատութիւնները և դ) աստվածաբանական խնդիրներին նվիրված աշխատութիւնները¹⁰:

Իսմայիլական և մուտազիլյան հոսանքներին հարող «Մաքրութիւնի եղբայրները» մերժում էին կրոնական խտրականութիւնը, քարոզում հարգալից վերաբերմունք բոլոր ազգերի նկատմամբ, հավասարապես օգտվում էին երեք կրոնների՝ հուդայականութիւնի, քրիստոնեութիւնի և իսլամի ոլորտներում ստեղծված գիտական բոլոր նվաճումներից, քարոզում էին խաղաղասիրութիւն և ժողովուրդների բարեկամութիւն: Նույնը մենք տեսնում ենք նաև Հովհաննես Երզնկացու մոտ, որը Երզնկայում ստեղծված «Եղբայրութիւնի» կանոնադրութիւնի մեջ գրում է. «Եւ խաղաղասէրք լինին եղբարքս մեր ի մէջ աշխարհի, ընդ ամենայն ազգ մարդկան սիրով առնիցեն զասել և զլսել, որ յամենայն ազգէ իմաստունք լիցին՝ մեծարեսցին, և

⁸ Տե՛ս Ivanow W., A guide to ismaili literature, London, 1933.

⁹ Տե՛ս Awa A., L'esprit critique des Frères de la Pureté, encyclopaedistes arabes du IXe-Xe siècle. Beirut, 1948.

¹⁰ Տե՛ս Григорян С. Н., Средневековая философия народов Ближнего и Среднего Востока, М., 1966, стр. 136.

յիմաստութեանէ շահեացին առանց հակառակութեան»¹¹:

Այս ընդհանրությունները, գաղափարական համընկնումները և ուղղակի ցուցումները հնարավորություն են տալիս, բացի «Ի տաճկաց իմաստասիրաց»-ի և «Մաքրության եղբայրների» ուղերձների նույնացումից, որը կատարեց Ս. Բարսումյան-Դադոյանը, անել հաջորդ քայլը: Շարունակելով մեր ուսումնասիրությունը, տարբեր հրատարակությունների հիման վրա ծանոթանալով «Մաքրության եղբայրների» թողած գրավոր ժառանգության հետ¹², մենք եկանք այն համոզման, որ Մատենադարանի № 6670 ձեռագիրը, բացի «Ի տաճկաց իմաստասիրաց»-ից, որտեղ նշվում է Հովհաննես Երզնկացու անունը (էջ 91ա և 106ա), հենց սկզբից (էջ 1բ) մինչև վերջ (էջ 111ա), պարունակում է «Մաքրության եղբայրների» ուղերձների արաբերեն բնագրից կատարված ընդարձակ քաղվածո թարգմանություն:

Նոր հրատարակվող այդ մասը (էջ 1բ-91ա) ամբողջությամբ նվիրված է բնագիտությանը՝ աստղաբանությանը, աշխարհագրությունը, բուսաբանությունը, հանքաբանությունը, ալքիմիային, բժշկությունը, օդերևույթաբանությունը և դրանց հետ կապված բազմազան գիտելիքներին և տեղեկություններին: Այս բնագավառներից համառոտ շարադրանքներ կան նաև «Ի

¹¹ Տե՛ս Խաչիկյան Լ., 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «Եղբայրությունը», Հայաստանի ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, № 12, 1951, էջ 78:

¹² Friedrich Dieterici, Die Abhandlungen der Ichwan es-safa in Auswahl. Leipzig, 1883, De Lacy O'Leary, Arabic thought and its place in history, L., 1954. Избранные произведения мыслителей стран Ближнего и Среднего Востока IX-XIV вв. Составители С. Н. Григорян и А. В. Сагадеев. М., 1961.

տաճկաց իմաստասիրաց»-ում, բայց այն հիմնականում ունի փիլիսոփայական բովանդակություն:

Այժմ, դիտելով հրատարակվող բնագիրը որպես «Մաքրության եղբայրների» ուղերձներից քաղված մի ամբողջություն, կարելի է ասել, որ Հովհաննես Երզնկացին, կամ նրա հանձնարարությամբ թարգմանություն կատարողը, իր տրամադրություն տակ ունեցել է այդ հանրագիտարանի ողջ բնագիրը և քաղվածքներ կատարել նրա տարբեր տեղերից: Թարգմանություն լեզուն միջին հայերենն է, արաբերենի ուժեղ ազդեցությունը: Ինչ վերաբերում է 91ա էջում դրված վերնագրին («Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք Յովհաննէս Երզնկացին»), ապա մենք կարծում ենք, որ այն պետք է վերաբերվի ամբողջ բնագրին:

«Մաքրության եղբայրների» համայնագիտարանը բաժանված է չորս հատորների: Առաջին հատորը (14 ուղերձ) հիմնականում պարունակում է մաթեմատիկական գիտությունները (թվաբանություն, երկրաչափություն, աստղագիտություն, երաժշտություն, ընդդրկված է նաև աշխարհագրությունը) և տրամաբանությունը: Հայերեն թարգմանությունը քաղվածաբար պարունակում է առաջին հատորի աստղագիտությունն ու երկնային շարժումներին վերաբերող ընդարձակ մասերը: Զգալի չափով ընդգրկված է աշխարհագրությունը վերաբերող մասը, որն արտացոլում է արաբների այդ ժամանակաշրջանում ունեցած աշխարհագրական գիտության մակարդակը:

Ուշագրավ է, որ Հայաստանը և հայերը այստեղ հիշատակվում են մի քանի անգամ (էջ 21ա, 40բ, 59բ, 65բ), այդ տեղեկությունները բխում են Արաբական

խալիֆաթի մեջ ընդգրկված «Արմինիյա» վարչական մեծ միավորի սահմանների մասին ունեցած գիտելիքներին:

Հայաստանից հարավ-արևելք նշված է «Ատրպայեկանը» (59բ) կամ «Ատրպայձանը» (40բ), որը հարևան է Պարսկաստանի «Գիլան» նահանգին: Այս բնագիրը ցույց է տալիս, թե ինչպես Արաքս գետից հարավ գտնվող անտիկ «Ատրոպատենա» երկրի անվանումը արաբական գրության և առողանության հետևանքով դարերի ընթացքում աստիճանաբար վեր է ածվել «Ազերբայջանի» և «Ազրբեյջանի», Ատրոպատենայի տեղում հարատևող պարսկական այն մեծ նահանգի, որը երբեք չի նույնացվել նրանից հյուսիս գտնվող «Առան»-ի հետ: Վերջինս նույնպես նշված է այս բնագրում, որպես առանձին միավոր (40բ): Դա այն երկիրն է, որն այժմ բնակեցված է թյուրքալեզու «կովկասյան թաթարներով», որոնք ապօրինի յուրացրել են իրանի տարածքում գտնվող «Ազերբայջան» նահանգի անվանումը:

Հրապարակվող բնագրի մեծագույն մասը (էջ 1բ-91ա), բացի աստղաբաշխական և աշխարհագրական գիտելիքներից, պարունակում է խոշոր հատվածներ «Մաքրության եղբայրների» համայնագիտարանի երկրորդ հատորից, որն ընդգրկում է բնական և փիլիսոփայական գիտությունները, որոշ չափով կրկնելով առաջին հատորում շարադրված աստղագիտական ըմբռնումները: Այստեղ շարադրված են միջնադարյան արաբների պատկերացումները այն կապի և ազդեցություն մասին, որ երկնային շարժումները, տարբեր աստղերն ու մոլորակները ունեն երկրի և նրա վրա

ապրող մարդկանց վրա: Մի շարք գլուխներ նվիրված են մարդկանց բնավորության և ճակատագրի որոշման համար կենդանակերպերի աստղատեսերի դերին, մոլորակների՝ սաղմի և հղության վրա ազդեցությունը, պարունակում են հանքային նյութերի, հեղուկների և մետաղների, նրանց զուգակցման, փոխակերպման, մշակման և օգտագործման վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ: Հանքաբանական գիտելիքներին զուգընթաց բերվում են մանրամասն տեղեկություններ բուսաբանական, կենդանաբանական, օդերևութաբանական, բժշկագիտական իմացություններին վերաբերող ոլորտներից:

Բնագրի վերջին քսան թերթերը (91ա-11ա), որ հրապարակել էինք «Բանբեր Մատենադարանի» 4-րդ հատորում, սկսվում են «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք Յովհաննէս Երզնկացին» մակագրությամբ: Հրապարակման առաջաբանում մենք զնահատել էինք նրա փիլիսոփայական բովանդակությունը, և վերագրելով այն 13-րդ դարում ապրած անվանի հայ գիտնական և բանաստեղծ Հովհաննես Պլուզ Երզնկացուն, համենայն դեպս, ընդգծել էինք դրա թարգմանական բնույթը: Այժմ, երբ ակնհայտ է նրա արաբական սկզբնաղբյուրը, կարող ենք վստահորեն պնդել, որ այդ մակագրությունը վերաբերում է ողջ բնագրին և որ այն պետք է գրվեր նաև ձեռագրի 1ա ազատ թողած էջում, ինչը չի արվել, անհայտություն մեջ թողնելով բնագրի խոշոր հատվածը:

«Մաքրության եղբայրների» աշխատությունը այժմ մենք կարող ենք նույնացնել ոչ միայն վերջին 20 թերթերում ընդօրինակված շարադրանքի հետ, այլ

հենց սկզբից, 1բ էջից մինչև վերջ, մինչև 111բ էջը դիտել որպես մի ամբողջություն, «Մաքրություն եղբայրները» չորս հատորանոց հանրագիտարանի առնվազն երկու հատորներից քաղված թարգմանություն:

Հայերեն թարգմանության մեջ չի ընդգրկվել չորրորդ հատորը՝ հասկանալի պատճառներով, քանի որ այն նվիրված է իսլամի դիրքերից գրված աստվածաբանությունն ու բարոյագիտությունը: Ինչքան էլ «Մաքրություն եղբայրները» իրենց հայացքներով տարբերվեին պաշտոնական մահմեդական գաղափարախոսությունից և համարվեին ազատամիտներ, հայ քրիստոնյա թարգմանիչը չէր կարող այն մատուցել իր շրջապատին: Ինչ վերաբերում է գիտական, բնագիտական և վերացական իմաստասիրություն խնդիրներին, ապա այստեղ Հովհաննես Երզնկացին վեր է կանգնած կրոնական նախապաշարումներից և առատորեն օգտվում է «Եղբայրների» թողած հարուստ ժառանգությունից: Այդ են վկայում նրա ինքնուրույն գործերը և տարբեր առիթներով գրված մեկնություններն ու բազմաթիվ քարոզները:

Մատենադարանի № 6670 ձեռագիրը չափազանց արժեքավոր է հայ-արաբական մշակութային և գիտական առնչությունների պատմության ուսումնասիրման համար: Այն ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում նաև լեզվաբանների համար: Այն թարգմանվել է գրաբարախառն միջին հայերենով, Կիլիկյան Հայաստանի խոսակցական լեզվով, ընդգրկելով ժամանակի բարբառային դարձվածքներն ու բառերը: Բնագիրը ծանրաբեռնված է արաբերեն բազմաթիվ եզրերով ու անվանումներով. դրանց զգալի մասը մենք

ընդգրկել ենք գրքի վերջում գետեղված բառարանում, նկատի ունենալով ոչ միայն «Բանբերում» հրատարակված բնագրի վերջին մասը, այլև այժմ լույս ընծայվող ողջ բնագիրը: Այս աշխատանքը, հուսով ենք կշարունակեն հմուտ արաբագետները, որոնք կկարողանան վերծանել աղավաղված բառերը, հանքերի, բույսերի, դեղերի, նյութերի և տարբեր իրերի՝ այժմ մոռացված անվանումները: Բնագրում, բացի արաբական աշխարհում հանրահայտ անուններից (Արիստոտել, Պիթագոր, Պտղոմեոս, Սոկրատ ևն) հանդիպում են հին շրջանի մի շարք արաբ մտածողների և գիտնականների անուններ (Պահրամատաև, Ապոմաշար, Սապիթ պին Կուռան, Թանկալաշան, Իպն Իաշեան ևն), որոնք կարող են արաբական գիտություն պատմության մասին զբաղվող մասնագետներին հուշել դրանց ճիշտ ձևերը:

Ձեռագրի ուղղագրությունը անկանոն է: Մենք այն թողնում ենք նույնությամբ: Դյուրացնելու համար ընթերցումը ուղղում ենք բացահայտ վրիպումները, մեր ուղղումները վերցնելով փակագծերի մեջ, բայց չենք ուղղում գրչական շեղումները: Դրանք հետաքրքրական կարող են լինել լեզվաբանների, քերականագետների և ուղղագրության պատմության հարցերով զբաղվող մասնագետների համար: Պարբերությունների բաժանումը կատարել ենք՝ նույնպես դյուրացնելու համար հոծ շարադրանքով ընդօրինակված բնագրի ընթերցումը, և տալով տրամաբանորեն արդարացված կետադրություն:

Գրիչը երեք անգամ հիշատակում է իրեն, սակայն չի տալիս իր անունը: 111ա էջում, որտեղ վերջանում է

այժմ հրապարակվող ամբողջական բնագիրը, գրիչն ասում է – «Եւ Քրիստոսի՝ տվողին ամենայն իմաստնոյ՝ փառք. եւ զանպիտան գրչակս յիշեայ»: Երկրորդ, ավելի կարևոր հիշատակարանը գտնվում է 180ա էջում – «Գրեցաւ գիրքս ի թվին Հայոց ՌՃԻ (1671 թ.). եղեւ կատարումն սորայ ի յունիս ամսոյ Բ(2), օրն շաբաթ, ի վայելումն քաջ քարտուղարին»: Իսկ վերջում գրված է ինքնանսեմացնող՝ «Եւ զանպիտան գրիչս յիշեայ» (էջ 303ա):

Այդ եզակի ձեռագիրն, անտարակույս, ընդօրինակվել է ավելի հին ձեռագրից՝ ոմն «քաջ քարտուղարի» համար, որի շնորհիվ այն փրկվել է կորստից, լրացնելով հայ-արաբական գիտական և մշակութային առնչությունների բովանդակալից էջերից մեկը:

«Մաքրության եղբայրների ուղերձները» («Ռասաիլ իխվան ալ-սաֆա») հատվածաբար թարգմանվել ու հրատարակվել են պարսկերեն, թուրքերեն, եբրայերեն, հինդի, ռուսերեն և այլ լեզուներով: Այդ շարքին այժմ ավելանում է նաև հայերեն թարգմանությունը:

Սեն Արևշատյան

Ի ՏԱՃԿԱՑ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ
ԳՐՈՑ ՔԱՂԵԱԼ ԲԱՆՔ

ՀՀԿԿ



(1բ) Յանուն Աստուծոյ գթածին և ողորմածին:

Եւ Աստուած կատարէ զփառաբանութիւն իւր: Իմաստութիւն Աստուծոյ զամենայն ինչ պարագրեալ ունի և զօրութիւն յամենայն տեղի մտեալ իշխանութեամբ, եւ օրհնութիւն Նորա կացցէ ի վերայ սրբոց իւրոց:

Եւ ի վերայ այսր ամենայնի ժողովեցաք զայս զիրքս յամեն ազգեաց զիտութեանց:

Եւ այս հեռի է և զատ կաէ յամենայն բանից, զոր հակառակ կամ ներհակ գտանի Աստուածպաշտութեանց:

Եւ այլ պարտ է մեզ յառաջ քան զմտանելն ի խորհուրդս և ի միտս զրոց, ցուցանել պարտ է մեզ զզրունս զայնոքիկ:

[Դուռն առաջին]

(2ա) Զի է դուռս առաջին վասն առաջին աւելութեան զիտութեանց, զի իմաստութիւն կենդանութիւն է հոգոյ և բանականութեան և փարատիչ սրտից խաւարելոց:

Զի զխաւարն և անգիտութիւն ծածկեալ է զհոգի որպէս զվայրագոյր, որ ոչ կարէ տեսանել ճշմարտութիւն: Եւ զի այս զիտութենէս և ի փառացն էառ Սուղրան և ասաց, եթէ հոգի զօրութիւն առնու ի գիտութե-

նէ, որպէս մարմին ի կերակրոց և ըմպելեաց: Եւ գիտութիւն իմաստասիրութեան լուանա զհոգին ի յաղտէ բնութեանց, որպէս (2բ) զՋուր զհանդերձ: Եւ յորժամ հասանի հոգէգիտութեանց, թեթեւանա ամենայն ծանրութեանց և ցանկեա աշխարհին կենդանութեան և հրաժարէ յամենայն ցանկութեան կենցաղոյս և հրաժարեալ փախչի յայնցանէ, որ սպանանէ զհոգին, որ կենդանի է բնութեամբ և փրկէ զինքն յամենայն կապից սղալանաց բնութեամբ կենցաղոյս:

Զի ասաց Պուղրատն, թէ չգիտութիւն, որ հագանի զհանդերձ անգիտոյ. և այլ թէ ոչ կենդանի որո ցանկա և ջանա իմաստութիւն և փրկութիւն հոգոյ իւրոյ:

Զի լաւագոյն է անգիտին մեռանիլ քան զանգիտութիւն անմտութեան իւրոյ: Վասն այնորիկ զի յորժամ ժողովի անգիտութիւնն ի խորհուրդ հոգոյ իւրոյ ի վատ մտաց իւրոց, յայնժամ մեռանի (3ա) զմահն երկրորդ:

Զի է, որ կացցէ և մնասցէ ի նոյն անգիտութիւնն, կապեալ է որպէս ծառայ կապեալ, ի նոյն յայս տեսեալ եղև զմահ հանգիստ նորայ անգիտութիւնն: Եւ այլ ասէ Սուղրատն, թէ չէ կենդանի այն որ ուտէ և ըմպէ հանապազ աճախութեամբ և կատարէ զիւր ցանկութիւնն և սպանանէ զիւր կենդանի հոգին: Ապա այնորիկ են կենդանի, որք զրկել են իւրեանք ամենայն հեշտութեանց և ամենայն ինչ մեծութեանց:

Զոր ունի թագաւորաց, դուզնաքէայ է առ ամենայն իմաստասէր և իւրոց ցանկութիւն: Եւ թէ այնորիկ, որ իշխանք են, թէ հասեալ էին իմաստութեանն, նոքա կարծեալ յիմանային, զի աղքատն և աշխատեալ գտանի յամենայն գործս ի ցանկութեանս իւրեանց: Եւ այլ

ասէ Սուղրատն, թէ են ոմանք, որ յորժամ (3բ) հասանեն ի ցածութենէ ի միջակ բարձրութիւն, և այնպէս թվի նոցա, որ ոչ կարէ տեսանել զիւր վերայգոյն և զբարձրագոյն: Եւ ապա այնորիկ որ կարեն յիմանալ զիւր վերայգոյնն, նա ապա խոնարհագոյն թվի: Զոր ինքն հասեալ է թագաւորք, որ գտել են զիւրեանց կամացն զհեշտութիւն, թէ վասն կերակրոյ և կամ ըմպելեաց, կամ վասն զարդարելոյ հանդերձութիւն, կամ վասն պահելոյ կամ վասն ամուսնութեան, և զայսոսիկ գտայք ի յանասունք, ապա որպէս առաւել է մարդ քան զանասուն:

Դուռն երկրորդ վասն առաւելութեանն գիտութիւնք այսորիկ: Զի ոմանք ասացին ի գիտութիւնս, թէ զօրաւոր է այս գիտութիւնս քան զամենայն իմաստութիւնն: Զի գիտութիւնս այս ցուցանէ քեզ վերին խորհուրդն և զերկրիս (4ա) գիտութիւն, և խորհրդակից առնէ զքեզ վերնոցն, հանց որ տեսանես զուհանրիաթն. և զրուցէ ընդ ինքեան և խառնես ի դասս նոցա և լինիս դու մի ի նոցանէ, և զինչ կամիս, ամենայնի հասանիս և բժշկես զամենայն չար հիւանդութիւն, զոր հաքիմն ոչ կարէ բժշկել, որպէս զգողութիւն կամ զկոմնատար, և առաւել ցաւ սիրոտրութեան բժշկես: Զի այս գիտութեանս տէրն հրեշտակօք բժշկէ և հաքիմն ղեղերով, և այս իմաստութեանս տէրն և հետեօղն կործանէ զիւր հակառակորդն առանց պատերազմի:

Եւ այլ ասաց Արիստոտէլն թէ Պահրամատաւան մի է իմաստասիրացն, հակառակութիւն ընկալաւ ընդ ինքն և ընդ Պնդօղսն, և Պնդօղսն ազգաւ քորք էր ի Պաղտատա աշխարհն: Յուղարկեց Պնդաւղս առ Բահր-

մատ(4բ)աւսն և ասաց, թէ ոնց կարաս դիմանալ ինձ, զի Զօհալն և Մառեխն իմ դիմացէ չկարեն դիմանալ: Յորժամ լսեց զայս Պահրամատաւս, արար այն արուեստէն, որ այրող Մառեխին արուեստոյն և Մառեխն օգնական, և կործանեաց զինքն վատ կորըստեամբ, և փրկեցան ժողովուրդք բազում ի նորայ չարութեանց: Եւ այլ ասաց Ապոմաշարն, թէ կայր ոմն յաշխարհն Հնդկաց, որ գիտէր զխորհուրդ աստղաբաշխութեան և հնազանդեցուցեալ էր զՄառեխն: Եւ յարեալ իւր չարախորհ մի և կու գայր ի վերայ իւր աշխարհին, և ինքն վասն իւր առաւել գիտութեան անհոգ կայր, մինչև մօտեցաւ իւր յերկրին: Ապա դարձաւ Մառեխն և գանկտեցաւ և զետ պահ մի կեցաւ և ինքն իւր մեծամեծօքն կայր ի խումբ, տեսան (5ա) յանկարծակի իրքմն կու գայր ի յօդիցն և անկաւ ի մէջ նոցա: Եւ յորժամ տեսան պղընձէ աման մի երեքանկուսի և ի ներս մարդոյ գլուխ մի նոր կտրած, և յորժամ տեսին մարդիքն, զայնպիսին յահէն և երկիւղէն փախըստական եղեն: Եւ իւրեանց թագաւորն տեսանէր և ծաղրառնէր զնոսա, և մինչև պահ մի անցաւ, հրամայեաց կոչել: Եւ եկին առ նա, երկիւղիւ ժողովեցան, ապա ասաց ընդ նոսա թագաւորն, թէ ուրախութիւն ընդ ձեզ, զի այս է գլուխ այն թագաւորին, որ հակառակ կայր մեզ և կամէր աւերել զաշխարհս մեր, և այս իմ գիտութեան պտուղն է, զոր տեսանէք, գիտէք դուք որ յառաջն ես առանձնանայի այս գիտութենէս, դուք բանբասէիք, թէ յիմար է, և ոչ գիտէիք զինչ գործէի և զայնպիսին թողեալ եմ ձեզ:

(5բ) Եւ ապա խոնարհեալ երկիր պագին և օրհնեցին զթագաւորն իւրեանց: Եւ ապա էառ թագաւորն գա-

մանն ի ձեռն և ասաց ընդ ժողովեալսն, թէ գիտեք էս ամանս ընդէր երեք անկուսի, վասն այնորիկ է, զի յորժամ բռնեցի ես զայն բանն, նա Արեգակն և Մառեխն թաթլիթ է ընդ իրար եւ մնաց այն թագաւորին, որ սպաննաւ որդին և բնդուէր, վասն էր եղև այս գործս և յիմացաւ զկատարեալն: Եւ ժողովեաց զիւր աշխարհին զամէն գիտնականքն և ասաց, թէ զՄառեխին արուեստն և զմօտեցուցութիւն և զհնազանդիւն ի գործ արկէք: Եւ էին գիտնականքս մինչև չորս հարգար, և չանցաւ աւելի բան մինչև ի մի ամիս և անկաւ կայծակ և այրեաց զայն թագաւորն: Եւ ով այս գիտութեանս տէր է, այլ հանց լինի զոր ինչ լինելոցն է: Ասեն (6ա) ընդ ինքն հրեշտակք և այնիւ կարէ մարդ պահել զիւր յորոգայթից: Եւ այլ ասաց Սապիթ պին Կուռան, թէ Զաւհալին հրեշտակքն ծանօթեցել է ընդ իս, և ով հակառակ կենայ ընդ ինձ, նոքա օգնող էին: Եւ եղև օր մի յիմ հակառակորդացն մատնութիւն արար առ խալիֆայն վասն իւր որդոյն, որ մեռեալ էր, թէ նայ եսպան: Բարկացաւ խալիֆայն ի վերայ իմ և կամէր սպանանել զիս և ես ննջեալ էի ի տան իմում: Նայ եկին այն հրեշտակքն և զարթուցին զիս ի քնոյ իմոյ և ասացին, «զի՞ կաս, արի և փախիր»: Եւ ելայ իմ տնէն և իմ սիրելոյն տունն մտայ: Եւ յորժամ առաւօտ եղև, եկին մարդիկքն խալիֆային և խնդրէին զիս և ոչ գտան իմում և ոչ փողոցին այնմիկ: Ապա եկին ի տանէ իմում առ իս, թէ եկին մարդիք խալիֆային ընդ առա(6բ)ւօտն, խնդրէին զքեզ և ոչ գտին. և զորդին այլ էին խնդրել և ի տան իմում ոչ էին գտել, զի չին տեսել Չահք նոցուցն անցեալէն և չին գտել, և ապա իմ որդին ելեալ փախչէր, և ապա ընդ այն ըռաւհա-

նիաթն, թէ զիս ընդէր ոչ պահեցիր ի տան իմում որպէս զորդի իմ, զի ոչ տեսին նա, ասացին ընդ իս, թէ քո հիւաճն ի Մառեխին մուղապիլան կայր և քո որդոյն ի խաղաղութիւնն, նայ ի վերայ այն որ անհոգ էաք, ապա ի վերայ քո չէաք: Ապա յետև քառասուն աւուրն արար արուեստն իմ չարկամուն, որ զոր նայ ինձ էր արել, ապա օգնեցին ինձ, ի Մսիր Մառեխի էր, նա կործանեցաւ իմ չարկամն, և վատ կորստեամբ: Եւ ապա ի սիրտ ելան ինձ իմ ըռաւհանիաթնին և սպառնացան հանց որ ես վախեցայ, որ ինձ կործան(7ա)ումն չառնէին, ես աղաչեցի զիւրենքն, թէ ես ձեր մեծութիւն ի յանչափ մի փոքր բանն չկարացի ձգել, ապա ես շատ մատաղ և ծխանելիք արարի նոցա, որ այն բարկութիւնն անցաւ յինէն և ապա ուխտեցին յիրմենցնէ, որ աղէկ կացուցին զսիրտն, մուաֆիղ արարին յիմ վերայ:

Ջօհալն աստղմ է հով բնութիւն և յոյշ առնէ զմարդոյն բանն, և իմ բանն կու յիմէր: Նա ես օգնական կոչեցի Ջօհրային ըռօհանիաթնին և զիմ ըռօհանիաթն, այլ որ զի վախեցայ որ վատութիւն չառնէին, նա իմ բանն կատարեցաւ իմ սրտովն: Եւ ով այս գիտութեանս տէր լինի, նա կարէ փրկել զանմեղն ի ձեռաց զրկողնուն: Եւ այս գիտութեամբս կարէ տես առանել զհեռո բաներն: Ասաց Թապիթ պին Կուռայն, թէ այս գիտութեանս տէրն զու(7բ)գել է ծարուր, յորժամ ի յաչքն դնեն ի հեռոյն տեսանէ իբրև զմօտոյ:

Ջուգեց մէկմն ի Պաղտատայ յերկիրն և եզիր իւր աչքն և տեսաւ զամէն աստղ իւր պուռճն և ի դաղիղայն և այնչափ մի զօրացաւ աչից լոյսն, որ ընդ թանձր պատն թափանցիկ տեսանէր և հանց տեսանէր

որ զէտ զիր յառջև երևէր, և խուստապլուզա փորձեցաք և մտայք ի տուն մի, և մեք զինչ ի ներս կու գրեաք, նա ի դրուցէ կու կարդայ, և զամէն տողի զէտ զառաջն կու ասէր մեզ հանց որ զէտ զառջևն էր, և առաք թուխթմն և կու գրէաք, և ի մեր մէջն թանձր պատմն կայր, նա զինչ մեք կու գրեաք, և էառ թուխթմն և կու գրէր զէտ մեզ, նա հարցաւ խուստապլուխայն վասն իւր եղբօրն, որ (Տա) այլ քաղաք էր, նայեցաւ և ետես և ասաց, թէ հաւն կայ, հիւանդ է ինքն, և իւր որդի ելել և յերկիրքն նայեցաւ և ասաց, թէ Տուլ էլէլ երեք տարաճն, երփ փնդոեցաք, նա հանց է ճշմարտութեամբ:

Դուռն երորդ որ ցուցանէ, թէ որպէս կառնեն զայս գիտութիւնս: Եւ է երկոտասան դուռն:

Առաջին դուռն ով առնէ բանմն յայս բաներուս, որ կարծեօք առնէ, նա այս գիտութիւնս չօգնէ իւր, վասն այնորիկ հրեշտակք կու յիմանան զխորհուրդ մարդոյն: Ջոր օրինակ մին յաշխարհս և մին մէկիմ չհաւատա թէ զայս կարէ կատարել: Նոյնպէս և հրեշտակ կարծեօք գտանեն առ նոսա մարդիկքն, նա չկատարէն զիւրեանց խնդրուածքն և ըզհոգոյն զօրութիւն մի է ի յայս զօրութեանցս, որ ամէն կարծեօք լինի բանն, նա ոչ կատարի բանն:

(Տբ)Երկրորդ դուռն, որ ժտեւորցնէ զհրեշտակքն, որ յորժամ բան առնէ այս արուեստիս և չկատարի, նա չլինի անհաւատ, երկու տարպայ երեք առնէ, որ հրեշտակք որ զօրութիւն որ ունին յայս արուեստիս վերայ, ընդ ելանէն և կատարեն զխնդրուածն. և այս արուեստս և իմաստութիւնս այսպես է, ով կարէ յառաջ քիչմն գտանել, ի մեծն և ի կատարեալն հասանի:

[Դուռն երրորդ՝ չիք]

Ձի ասացեալ Ստալենոս իմաստասերն, թէ ես գտիւ և զգիշերն պարապեալ էի հետ այս արուեստիս և էին որ կատարէին զիմ խնդրուածքն, և էին որ չկատարէին: Բայց յորժամ չկատարէին, ես անհաւատ ոչ գտանէի: Եւ էր որ շատ առնէի ու չկատարէր, իմ խորհուրդն կրէի: Եւ այլ ասէ ըՍտալինոս իմաստասէրն, թէ ես էի ցանկ(9ա)ացօղ այսմ գիտութեան, և ոչ գայր իմ տալեհն կամ իմ բախտն հասանել այսմ գիտութեանս, այլ վասն բազում ջանից իմոց հասա և եղև ինձ այսմ գիտութիւնս:

Դուռն չորրորդ այս է, զոր հաստատեցին իմաստասէրքն, թէ չէ պարտ ամենայն մարդոյ ցուցանել կամ ուսուցանել: Ձի ասացին իմաստասէրքն, թէ հրեշտակաց լուաք զոր ասեն, թէ ամենայն անարժանից և տգիտաց մի ուսուցանէք զգիտութիւնս զայս, վասն այսորիկ յորժամ անարժանք և տգէտք գիտենան զիմաստութիւնս զայս, բազում վնասն չար գործեն յերկրի, զի հրեշտակք ոչ կամենան, որ ամենայն անարժան գիտենայ զիմաստութիւնս զայս և բազում վնաս գործէ, և յորժամ հասանեն այսմ գիտութեանս նայ ել(9բ)անեն ի մարդկային ցածութենէն ի վերնային բարձրութիւն, և այլ գիտենայ զայս գիտութիւնս՝ նա ամենայն խնդրուածոց իւրոց զօրութեամբ հրեշտակաց:

Դուռն հինգերորդ, որ այսպէս հաստատեցին իմաստասերքն թէ գիտութիւնս զայս գիշերն լաւ է գործել քան գտիւն, վասն այսորիկ որ Արեգակն զօրաւոր է, նա խափանէ զհրեշտակաց զօրութիւն, և այլ զի գործօղ ի խորհուրդն արուեստիս այսօքիկ գիշերն ժողովէ քան գտիւն: Ձի ասաց Հուրմուզ իմաստասէրն, թէ

տլսմաթին զօրութիւնն այսպէս է, որ իւր գործօղն հահանդարն է, որ արեգական շողն ի վերայ չցաթէ, զի մարդկան շողն պիտի զայս հրեշտակիս փախցնէ ի տեղաց: Ձի ասացած է, թէ մարդ որ ուզէ նարինջաթ առնէ վասն կապելոյ զմա(10ա)րդն, կամ արձակելոյ, կամ վասն սիրոյ, կամ վասն կուվոյ, և վասն թշնամութեան զայսօք զամէնն գիշերն առնէ և զտլսմաթն և զսանիաթն, որ ի քիմիայն, և զհրեշտակ ժողովելոյ և յամենայն ժամ ի գիշեր և ի ցորեկ պատրաստեցոյ զայս դործս ի շատ և ի օտար աչաց. զի այլ տեղի չար է աչքն՝ հանչափ մի վնասի այս արուեստս:

Դուռն վեցերորդ, զոր ասացեալ են իմաստասէրքն, թէ այս արուեստիս տէրն պարտ է, որ ինքն հանապազ զաղէկն և զբարին գործէ և զիր անձն սուրբ պահե յամենայն չարեաց և ի պոռնկութենէ ի զատ կենայ:

Եւթներորդ դուռն, զոր ասացին իմաստասէրքն, թէ պարտ է այս գիտութեանցս տէրն պարկեշտ լինի ի կերակրոց և ոչ ուտէ միս, այլ իւր կերակուրն ի բուսոց և ոչ միս անասնոց:

(10բ) Ութերորդ դուռն, որ չէ պարտ յամէն բան և ի գործ, որ զամէն հրեշտակացն չեբեր, բայց զգործոյն տէրն և զարժանն, որ չլինի որ Մուշթարէ տեղն զՄառիսին հրեշտակն բերէ, ապա զամէն մէկ իւր տեղն:

Իներորդ դուռն, յորժամ բանմն առնես կամ բարի կամ չար, այլ մի առնիր այն բանին վերայ կատարեալ լինի, զի չէ պարտ այն բանն և այն մարդոյն վերայ իրք առնել:

Տեսներորդ դուռն, որ պարտ է այն մարդոյն, որ այս գիտութեանս տէր լինի, գիտենա զաստղաբաշխութեան գնջումն և զտալեհն զիւրեանց յամէն տարածայ և զտաղիղայ և զուստուռլապն:

Մետասան դուռն, որ մարդ սուրբ լինի և անձն լվա-
ցած և անուշահոտ պուխուր լինի արել իւր անձնին:

(11ա) Երկոտատասան դուռն, որ մարդուն կենդանի
հոգի լինի և ուժով, զի յորժամ բանմն սկսանի առնել
և ժողովէ հրեշտակքն և իւր բանն կատարել, և ժողո-
վին հրեշտակքն, նա ինքն փշանայ և քսմտի, այնպէս
ցուցանեն թէ կատարի, ապա յում այս նշանս չլինի,
իր զօրութիւնս պակաս լինի:

Այլ դուռն վասն տլսմաթին, որ տլսմաթն գիտու-
թիւնն, որ զվերին աստղերուն զզօրութիւն կու բերէ
յերկիր, իրքմն կու խառնէ կամ ի քար, կամ ի պղինձ,
կամ այլ իրք ի մարմին, զինչ որ լինի, որ հակառակ ա-
ռաջի սովորութեան գտանի, և ամէն աստղ ի տլսմն ի
զատէ զատ է: Զի իւրեանց բնութեներն չեն մէկ, այլ
ազգի ազգի և ի զատէ ի զատ: Զի առաջինքն որ տուն
զուգէին յաս(11բ) տեղացն ի յանուն //¹³ պատկեր, զօ-
րութիւն աստեղացն զտլսմաթին ի ներս դնէին և այ-
նիւ առնէին զբաներն տլսմաթին: Եւ այլ մարդ որ կա-
մենայ տլսմաթ որ զուգել, թող ջանա որ եփ զուգէ նա
չզուգէ ի վերայ մէկ աստղի, այլ այն աստղերն, որ
այն բանին զօրութիւն ունի, նա նոցա հայեցքն ի վե-
րայ լինի ապա այն աստղերուն, որ հակառակ է նոցա,
հայեցք չկենա, թէ չէ պատլէ և մարդոյն, զոր կարէ և
իր գիտութիւն կայ, նա ջանայ որ հաստատ լինի
զմարդն, յիւր չափ գիտութենէն չյիմանա, զի մարդն
չկարէ զամենայն աստղաբաշխութիւն յիմանալ կա-
տարելութեամբ, զուգել կամենա զամենայն նիւթ
պատրաստէ, որ յորժամ հասանի ժամանակն, որ կամ

¹³ Մի բառ ընթացած է:

զօրութիւն(12ա) տալ կամ զհաստատութիւն, նա գոր-
ծարանն պատրաստ լինենա և բնակարանն պատրաստ,
որ բընակին յինքն զօրութիւն ֆալաքին, և ապա տայ
և հաստատի գործն:

Զի բնութիւն յերկնի գործիչ է, նայ յորժամ գտանէ
իւր յըշտեմարանն, նայ ի յաւն տայ զիր զօրութիւն,
զոր կամի այլ տեղի տայ:

Զի յորժամ նիւթն գործարան պատրաստ լինի և զօ-
րութիւն, նա տայ զզօրութիւն և գործն կատարել: Եւ
մարդ որ կամենա տլսմաթ զուգել, նա պիտենայ որ
զվերին զօրութեներն յիմանայ կատարեալ և զիւրեանց
միաւորիլն ընդ միմեանց, և զբաժանումն, և զհայեցք
ընդ միմեանց, և զայնոք որ առանձին են և չունին
միաբանութիւն ընդ միմեանց, և զնիւթ որ իւր բնու-
թեամբն պատրաստէ և զիւր հակառակն ի զատ պահէ
ի նիւթոյս և ի ֆալաքէն ի հակառակ աստղերուն հա-
յեցուածոցն, որչափ (12բ) կարողութիւն է մարդոյն:
Զի չար է յամենայն կատարեալ իմանալ, այլ իմաստ-
նաբար: Եւ յորժամ մերձեցնէ զգործօղին զօրութիւն ի
գործարանն, նա բազում սքանչելիք գործէ, որ աւարէ
ի բնութենէ, զորս կամենա զի լինելոցն խափափանէ և
նորին հակառակն գործէ: Եւ այս է որ ասաց Պտղո-
մէոսն, թէ աստղաբաշխութիւն ի քենէ և յաստեղացն
գործն է զայսպիսիս:

Երկրորդ ֆասլն, զոր յիշեմք, թէ կարէ մարդ բա-
ւանգակ զամենայն աստղ իմանալ, թէ ոչ, և զկենդա-
նակերպն: Զի իմաստասէրքն միաբան ասացին, թէ
մարդ չկարէ հասու լինել ամենայն կենդանակերպացն
և բաւանդակ աստղերոյն որ կատարեալ յիմանայ զիւ-
րինքն, եւ զիւրեանց բնութենէն թէ որպէս են: Եւ ա-

ուաջին պատճառն այս է, որ մեք աչից տեսանելով կու-
յիմանանք զաստղերն, նա կայ բազում աստեղք, որ ի
ուլթն երկինս է, եօթն բարձրութիւն, որ մարդ զայն
(13ա) չկարէ տեսանել այսքան ի զամէն ցամաք աշ-
խարհս կամ տասն, կամ քսան, կամ հարիւրապատիկ
լինի: Եւ բազում այնոքիկ են, որ աշխարհս գործ և
զօրութիւն ունին, և նոցա իսկի մեք չեղաք հասու: Եւ
ի վերայ այսոր ասաց Թանկալաւչանն, որ առաւել է ի
Դուվանէ իմաստասիրէն, թէ շատ աստեղք մնաց յեր-
կինք, որ չկարացին յիմանալ և ոչ Ըռաստն բերել
վասն իւր փոքրութեան:

Ապա չէ պիտի ասել թէ փոքր է քան զայլ աստղերն,
ապա իր զօրութիւն առաւել շատ է աշխարհս: Եւ նոյն-
պես Ըռասն և Դանապն որ քան զամէն առաւել փոքր
են և իւր գործքն և զօրութիւն առաւել է աշխարհս:
Երկրորդ այն է որ կու տեսնեմք զան, որ Արդգող կա-
սեն, և ասեն իւրն յարապ լեզուն Մճրա, որ թարգմանի
զնաց կամ յերկայնութիւն: Թէպէտ կու տեսանենք, ա-
պա չենք ի կարել յիմանալ զինքն, թէ որպէս կամ քա-
նի են, (13բ) զի բազում և խիթ աստղեր են: Երրորդն
այն, որ աստղերս որ յիմացել են և Ըռաստ է բերած, նա
այս այնոքիկ են, որ ուլթն երկինքն են և երկրորդ մե-
ծութիւն, կամ ի մին կամ երեք, և զայսոց բնութիւն
զամենայն կատարել անթերի չեն կարացել յիմանալ:

Չորրորդ այն է, որ զայս աստղերուս բնութեններն
միաւոր առանձին կու կարենք յիմանալ, ապա յորժամ
կու միաբանին և խառնակումն կու լինի, նա զայն կա-
տարել առանձին չենք ի կարել յիմանալ եօթն եր-
կինքն, որ կու մտէ ի մեր գիտութիւնս, և է իրք որ չէ
մտել ի մեր գիտութիւնս:

Հինգերորդ այն է, որ եփ ըռաստ կու կապենք, նա
զթուանի և զթուալիթն չենք ի կարել բերել ի թիւ, և
առաջին թուանին երկնուց քանի զցամաք աշխարհս
հազարապատիկ լինի և այլ աւելի լինի, որպէս կարեն
կատարելաբար զամենայն յիմանալ: Զի այս ի թիւ չեն
ի կարեն արկանել, և վեցն այն է, եփ մենք(14ա) տալեհ
կու առնենք. այն առաջին տալեհն ամէն մարդոյ վերայ
մի ազգ հուքմ չառներ, այլ ամէն մարդոյ վերայ ազգ
մի թէպէտ զամէն կատարել չենք ի կարել գտանել, ա-
պա չէ պարտ որ ի բաց թողի առնեմք զամէնն, թէպէտ
որ իմաստութիւն մարդոյ նըւազագոյն գտանի այս ան-
չափ իմաստութիւնս ըստ չափոյ մարդկան, զոր կարէ
յիմանալ բազում, և առաւել գիտութիւն է մարդոյ
զանչափն ի գործ արկանել և է գտանել և իմանալն ար-
հեստիս այսոքիկ: Եւ են ոմանք որ տեսլեամք իմացան.
և են ոմանք որ ժամանակաւ բազմօք փորձելով գտան,
և են ոմանք, որ հրեշտակէ ուսան, զոր օրինակ յորժամ
կամենա բժիշկն դեղ տալ հիւանդին, է որ օգտակար
եղև և է որ վնասեցէ իւր փորձելոյն, ապա չէ այնպէս
որ թէ չօգտէ նա չվնասէ, որպէս զայն դեղն բժշկին:

Ապա թէ ոք ասիցէ թէ զինչ է աստ(14բ) զաբաշխու-
թեան արուեստս, թէ զինչ գրած է դիպուած մարդոյն,
հարկ է պատահիլ ի բարի և չար, ոչ կարէ պատրաստել
կամ փախչել, զինչ օգուտ է: Պատասխանի. ոչ այդպէս
բազում այն է որ կարէ զլինելոցն խափանել և զչեղե-
լոցն գործել, թէ այդ այսպէս էր, նա չէր կարիք որ
մարդ արդարութիւն առնէր վասն արքայութեան: Զի
թէ գրած էր նորա, չէր կարիք արքայութիւնն, զի ոչ
արդարութիւն փրկէ ի մեղաց և ոչ դժոխոց և ոչ մեղքն
զրկէ արքայութեանէ ապա ոչ այդպէս է:

Ֆասլն այն է, որ ոմանք որպէս գտան զայս արուեստս և են ոմանք որ նոցա ամենայն աստղ զիր զօրութիւն ցըցուց և ուսուց, և են ոմանք որ փորձելով գտան, և են ոմանք որ տեսլեամբ իմացան: Եւ նոքա ասացին զայս պիտուրս և զայս անուանքս հրեշտակաց է(15ա) և աստեղաց գովասանութեամբ: Ով որ ասէ զայս անուանքս հրեշտակաց և զգովասանութիւնս աստեղաց և այն լեզուէն, որ ինքն հասկնայ և առնէ զպիտուրն տալեհովն, նա իր խնդրուածքն կատարի: Եւ մարդ որ կամենա, որ զայս արուեստս գործ արկանել նա պարտ է որ զիր կամն ի խորհուրդն ի հաւն պահէ և այլ տեղի չցրուէ, որ կատարի բանտ: Եւ են ոմանք յորժամ առնեն զայս արուեստս, նա շուտով կատարի, և են ոմանք որ յուշ կատարի. ամ գիտենաս որ այն տալեհեն է մարդոյն:

Ապա չպիտի որ յերկբայիլ, զի թէպէտ ի տալեհն չկայ, ապա ժամանակաւ կատարի: Եւ ասաց Իպն Իաշեան, թէ մարդոյն տալեհն ի ջատին լինի կամ ի տալվուէն, Կոյսն կամ Առիւծն լինի, կամ ի Զօհալ կամ ի Մառեխն լինի, ի տալեհն լինենա, կամ ի տասն տուն կամ երկու և երեք ուժով լինի. և որ վատուժութեան կամ Արեգակն(15բ) լինի տասն տունն, նա այն մարդն զինչ նարինջաթ առնէ, նա խիստ լինի և շուտ կատարի առաւել, թէ Կոյսն լինի և կամ ի Զրհոսն և յՕտարիտն ի ներս լինի կամ իւրեանց մուղապիլայն նա խիստ զօրաւոր լինի, և թէ Լուսինն հայեցք ունենայ ի Մառեխն, նա գործն իսկի չի յիմէ. և թէ այս մարդս զայս ի գործ առնէ և պուխուր առնէ և հրեշտակ ժողովէ, նա ի նմանէ շատ զարմանալի իրք ելանէ: Եւ ով կամենա զայս արուեստս ի գործ արկանել, նա պիտի

որ պաք կենայ քառասուն երկու օր և չուտէ մսեղէն և ոչ ինչ որ շնչաւոր լինի, և օրըստօրէ պակասեցնէ զկերակուրն և զանձն սրբէ յամենայն խլտէ և չուտէ հանց կերակուր, և պուխուր առնէ անձինն և ի ուղիղն և զերտ զբակլան և զերդ զաղաւնոյ ճագն, և պակասեցնէ զշատ ուտելն և զշատ խմելն, և զինչ որ ի մտվի գլուխ, զեն առնէ և չուտէ, և(16ա) զամէն անուշահոտութիւն առնէ: Եւ ով կամենայ զայս արուեստս ի գործ արկանել, նա առանձին պիտի իւր վերայ շատ հոգք չըլինի: Վասն այնորիկ է դրած այն քառասուն երկու օր պաքն, որ խորհուրդն սրբի աշխարհիս ի ցնորհացն:

Եւ այլ պարտ է այն մարդոյն, որ այս արուեստիս տէր լինի, նայ պիտի որ ի այն քառասուն երկու օրն զԱրեգականն և զԹերին, որ է Օտարիտն, զպիտուրն առնէ և ամէն օր վաղվէն առնէ և զիւրեանց գովասանութիւն ասէ և զխնդիրքն ուզէ և զիւր խորհուրդն հանապազ ի այն աստղն պահէ, որ զխնդրուածն կատարէ: Եւ այն մարդն, որ կամենայ զայս արուեստս ի գործ արկանել և կատարել, նա ամուսնութենէ սուրբ կենայ և պատրաստ յաճախ կերակրոց, որ խորհուրդն սրբի յամենայն աճախ խորհրդոց և յերկիւղէ յահէ: Եւ այս ամեն վասն այնորիկ է, որ մարդ զիւր խելքն և խորհուրդն այն աստղն(16բ) պահէ անխափան ու զխնդրուածն ուզէ:

Այս օրինակաւ, որ թէ կամենաս՝ առնես, որ մէկ մի խիստ սիրէ կամ զայն ուզես հիւանդցնել, դու սուրաթ մի զուգէ զայն մարդոյն և զքո մտիլն յինքն հանց պահէ, թէ վստայհի այս այն մարդն: Թէ ուզես սիրոյ զուգէ, այսպէս արա և զիւր փորն տաք դեղերով լից և

ի կրակն ի մոտ զուզէ: Եւ թէ ուզես որ մեռցնես, նա ասեղ հրէ իւր զօգւածնին և փաթէ յինք պատանք, որ մեռել էլել: Եւ տար զինքն ի հին հողվարք թաղէ: Եւ թէ ուզես, որ զինքն մանլուճ առնես, դու զիւր զօգւածնին հով գեղեր լից, զէտ զքաֆուր կամ աֆիոն, և զսիրտն վստահացոյ, թէ այս եղև այն մարդն և կատարեցաւ, նայ յայնժամ խիստ լինի: Եւ երբ ուզես որ Զօհալովն հիւանդացնես, դու հով գեղերով արայ: Ապա թէ Մառեխ(17ա)ովն ուզես հիւանդացնես, դու տաք գեղերօք և սիրտդ հաստատ կալ, թէ եղև, և գիտեա զի ամէն մարդոյ խասիաթ կայ, որ զայն որ օձ մի կայ, յորժամ մարդ յինքն հայի և մեռնի:

Նոյնպէս և դեղերուն այլ հանց ամէն մէկի իրքմն, զի ամէն շնչաւոր ամէն սուրաթ ազգմի խասիաթ ունի և զօրութիւն, որպէս զառիւծն, որ յորժամ սալտակ խաւսող տեսանէ՝ փախչի և զկրակն գիշերն տեսնու՝ փախչի: Նայ այսիւ իմացաւ Թանկալաւչան, զիր պատկերն զուզեց և յիշեց զսուրաթնին, որ ամէն մէկ ի զօրութիւն և խասիաթ ի մէ դիր և ասաց, թէ ամէն պատկեր գործքմն կատարէ աստեղօք: Եւ այլ թէ կամենաս, որ իմանաս զայս պատկերնիս, թէ որպէս կամ որպէս է գտած, նայ այս հանց է, որ զայս իրքս նոցա հրեշտակք ուսուց և ուստանիքն հանց կու ասեն, և ոմանք կերևնային հրեշտակքն, և կասէին և (17բ) կու ցուցանէին ոմանց զայս և այլ: Երրորդ ազգ է, որ կու ցուցանէ առաջնորդութիւնս. զայս ելմիս ասացել են տլսմաթին տէրքն միաբան, թէ զինչ աշխարհս կայ այն որ օրինակին ի ֆալաքն, այլ կայ և այս սուրաթնիս, որ ի վերո է, այն որ հրամանքն է, ի վայրս է: Աւձըն օձին և կորն կորուն և առիւծն առիւծոյ և ամէն

իրք իր նրմանակն, և այս ճշմարիտ է, զի բազումք են զայս ասացել:

Եւ կասեն, թէ զինչ ի վայրս կայ, այն ի վերն այլ կայ, և զինչ ի վայր կու լինի, այն ի վերն կու լինի: Նայ վասն այնով է, որ ուզենա բանմն առնել, նա զինչ իրաց վերայ կամենայ առնել, նայ տեսնու զայն սուրաթն և զայն բանն, ապա առնէ:

Երեք ազգն այս է, որ ամէն իմաստնասերքն ասացել են, թէ զինչ աշխարհս կայ իրք, նա ամէնն բաժանած է այս եօթն աստղիս վերայ, և ասացել են օրինակն օրերոյն և գուներոյն այսպէս, և ի կերակրէ(18ա) զայս ինչ և ի տեղաց զայս ինչ և ի ճօհարուն զայս ինչ: Եւ ձևայ զայս ինչ, և ով կամի բան մի առնել, որ ինքն աստղմն թալուղ ունի, նայ պարտ է, որ ժողովէ զամենայն ինչ, որ այն աստղն թալուղ ունի, և ի կերակուրն անկից ուտէ և հալաւ զան աստղին հագնին և զիւր պիտուրն առնէ և զիւր գովասանութիւն ասէ, և զանուն նայ յայնժամ իր բանն ուժով լինի: Չորրորդ մուհիսն այն է, որ այս պատկերնիս կու հանեն, շատ ազգ է: Կայ որ նախն հանած է ի վերայ թխթի, կայ որ ի վերայ մագաղաթի և կայ ի վերայ մարդոյ, որպէս քար կամ արծաթ կամ ոսկի: Ապա այնպիսի, որ ան աստղն հաշիւ ունի, ի վերա հանց իրաց հանէ զիւր պատկերն: Հինգերորդ կարիքն այն է, որ կարգան զաւուրն, և թէ հասկնալի լինի հասկնան, և այն որ չհասկվի իւր օգտութիւն, ազգի ազգի է, այն է որ լինի որ այս նաղչերս որ հանեն, նայ հրեշտակք ընդել են, նայ ի հաւն կու(18բ)գան ի նաղչն, նայ այնոր համար զբանն կու կատարեն և իւրեանք ի վերայ այն բանին են փորձել, շատենք որ եփ երեք երեք կու գրենք ի վե-

րայ խեցտին, որ ջուր յինքն չէ հասել, պատեղվոր կնկան ի մօտ տանինք՝ արձակի ծնունդն: Մեք գիտենք որ այն գրեթե հետ իւրոց հրեշտակք կան, կու ժողովին ու զտղայն ի մօրէն կու բաժանեն: Երկրորդն այն է, որ այս ավսուենիս յիշէ զԱստուծոյ անուանքն և է ինքս երգումն մեծ, որ եփ հրեշտակնուս տան, նայ գան ի հնազանդութիւն: Երրորդն այն է, որ յերբ հոգին լսէ գան ավսուենն և յիրմէն իրք չհասկնայ, նայ գինքն թողու աշխարհիս բաներուն և հասանի ի վեր երկնից խորհուրդն և զամենայն բան կատարէ: Վեցերորդն¹⁴ այս է, և է ազգ և ազգ ժամ առնու աստղերուն պատկերացն նման և առնէ յիր առջևն զպիսուրն և ժամ առնու մարդ նման, զում ուզէ զպուխուրն(19ա) առնէ իր առջևն զիր արժանն և ժամ մատնէհար զուզէ, և պուխուր առնէ զինչ իր պատիհն է, և ժամ գրէ զավսուենն ի թուխթն և կամ այլ իրք և առնէ իր առջև զպիսուրն, զինչ իւրն արժանն է: Եօթներորդ այն է, որ կապեն ի չուան և զավսուենն կարգան, ի վերայ թքնուն ի կապն, և ժամ այլ կապեն երբ ուզեն որ արձակեն, նայ թքնուն ի վերայ: Եւ այլ իմացիր, որ այս բաներս քանի ժողով լինի, նայ բանն ուժով լինի, և այն հանց պիտի որ աստղերին բնութիւնն և զպուրծին իմանաս, և զԼուսնին մանազիլնին և զտաղպն և զտարածանին, յայնժամ տեսնուս զաստղն, որ այն բանն նրման լինի, յայնժամ տես, որ այն է աստղերն հայեցք ունենան որ օգտող են այն բանին: Եւ յայնժամ ժողովէ զամենայն ինչ որ աստղերուս յաշիւ ունի և կերակրոց և ի գունից և ի պուխրաց: Յայնժամ առ պատ-

¹⁴ Բնագրում՝ երրորդից հետո վեցերորդը:

կերմն զուզէ այն մարդոյն օրինակն, յորում(19բ) կամենաս առնել ի վերայ թխթի և կամ ի վերայ մագաղաթի, կամ հանց իրաց, որ այն աստղին բնութիւնն է: Յայն ժամ դիր ի վերայ այն զօղվածին դեղմ, որ ուզես բանն յինքն առնել դեղմ, որ այն բանին լայեիս լինի, նայ քո բանն կատարի Աստուծով, ամէն:

Երկրորդ դուռն գիտութեան աստղաբաշխութեան, նուճումիս գիտութեան, զոր հարկ և պարտ է գիտել մարդոյ: Յառաջին այն է, զոր ցուցանեմք, զոր աստղերուն երումն և նշան կարնէ յաշխարհս: Յառաջի մեծ լուսաւորն, որ կու տեսանեմ յաշխարհս, որ նորա զօրութիւն, բայց արձակէ յամենայն տեղի, և Աստուած այսպէս է սահմանել, զի այս եօթն աստղէս ի յԱրեգակն է կապած, զի յորժամ կու հեռանան յիրմէն, ըստն կու լինան, որ է ապաղարծիկ: Եւ երկրորդն այն է, որ Լուսնին լուսն յԱրեգակնէն է: Զի յորժամ(20ա) մուղապիլայ կու լինի, որ է ընդդէմ պարապար, նայ լուսն կու յաւելնու և բազում ոմանք կասեն իմաստասիրաց, թէ Արեգակէն ունի զլուս ամենայն աստղերուն: Երկրորդ այն է, որ յորժամ Արեգակն ելանէ, նայ այլ աստղ չերևիլ, և այս է առաջինն, որ գիշերն զինչ կենդանի կայ, կու տեսնում զամէնն զէտ մեռած և ամէն անասունք իւր բնակութիւնն և իր դարքն կու մտնու մինչև ծագել Արևուն, և ապա ամէն կենդանի կենդանութիւն և զօրութիւն առնու մինչև այն, որպէս Արեգակն ի մէջ երկնից կերթայ, նայ մինչև ի յայն ամէն կենդանի շարժումն և զօրութիւն առնու, և այն, որ ի հետ պակասումն լինի և երթայ ի պակասումն, մինչև յերեկուն կու դառնան գերդ մե-

ուեալ: Երկրորդն¹⁵ այն է, որ թէ Արեգական ի մէկ տեղ կանկներ, նայ զայն տեղն այրէր ջերմութենէն, ապա կելնէ յարեւելից և կու գայ մի(20բ)նչև յարեւմուտս և անկից յարեւելք, նայ ամենայն աշխարհիս օգնութիւն կառնու յԱրեգականն ի զօրութենէն. և թէ հանց որ չերթար ժամ ի հիւսիս, ի հարաւ և ամենայն տեղաց վերայ ի տեղի մի, որ Արեգական ի վերայ շուրջ կուգայ, նայ այն տեղացն խոնաւութիւն յայտնէր և կենդանի չմնայր. և այն տեղն, որ չհասանէր Արեգական զօրութիւնն, նայ ի ցրտոյն ի հօն չկենայր կենդանի ու ի տեղն լինենայ բովանադակ տարին ամսուն և ի տեղն լինենայ ձմեռն և ի տեղ մի գարուն և ի տեղ մի աշուն, և թէ այսպէս էր, նայ յաշխարհս ոչ բուս լինէր և ոչ կենդանի ապրէր:

Երրորդն այն է, որ այն տեղն որ Արեգական հեռու է գէտ զայն տեղն, որ երկնուցն ցրցին ներքեւն է, նայ ի հօն ոչ բուս կայ և ոչ կենդանի, որ ի հօն վեց ամիս ցորեկ և վեց ամիս գիշեր, ու քամի լինի զօրաւոր(21ա), քեզ օրինակ Շամբին ծովն և Հայոց ծովն. հանաւք ինքն ձմեռն քամուն նաւ չի շարժիլ ու ի այն, որ Արեգական ի Կարիճն կու մտէ, մինչև ի Չուկն հասանի չկարե հասանիլ ի խրատութենէ քամուն:

Չորրորդ այն է, կու տեսնում ի հարաւոյ դէհէն տեղեր, որ Արեգակին ջերմութենէն շէն և մարդաբնակ չկայ տեղեր, որ շէն են. և այն աշխարհն ի մօտէն այն մարդիք սև են հանօք, որ Արեգական կայրէ զիւրեանց մարմինն: Եւ այն դեհն, որ հիւսիսոյ դեհն է, ի ցրտուն ոչ կենդանի կայ և ոչ մարդ և ոչ շէն: Նա այսով իմա-

¹⁵ Երկրորդն կրկնվում է:

ցաք, որ թէ Աստուած զԱրեգական ի վերի երկինքն էր դրել, ի ցրտոյ մարդ չէր ապրիլ ի աշխարհս և թէ ներքի երկինքն էր դրել, նա տաքութենէն զաշխարհս այրէր: Վասն այսորիկ եղիր զինքն ի մէջ երկնից, որ ի սահման կենայ: Եւ առաջի խլիմին մարդն սև է Արեգ(21բ)ական ջերմութենէն: Եւ երկու խլեմին մարդն ցորենամորթ է: Վասն այն Արեգական շողն ի հօն պակաս է: Երեք խլեմին և չորս խլեմին մարդն միջակ է, վասն այն այս խլեմին մարդն գեղեցիկ լինի: Եւ վեց խլեմին և եօթն խլեմին վասն այն զի Արեգական յերմէն հեռու է: Նա հովութիւն և գիճութիւն աւելի է իրենց վերայ, լինենայ երեսն մեծ և աչքն կապուտ:

Եւ այսով իմացաք, որ մարդկաց բնութիւն ազգ ազգ է Արեգական շնորհիւն, զի ի մօտ և հեռու է: Եւ այն որ Արեգակի շողն միջակ են, ուր երեք խլեմին և չորս խլեմին և եօթն, իրենց մարդն գեղեցիկ լինենայ (և) խելօք, այնօք որ Արեգական յերմէնց հեռու կու լինի, մարդն պուր և անգէտ կու լինի, և այլ օգտութիւն Արեգական որպէս կու փոխի ի չորս եղանակ, և այս չորս եղանակով կու բուսանի ծառ և կանանչ: Եւ այլ կու տեսնում, որ այն տեղն որ շուք կու(22ա)լինի, յինքն բուս չի լինիր, և որ կու լինի, չի հասնիր: Եւ կու տեսանեմք իրք, որ ի տեղմն կու լինի և տեղմն չլինար, որպէս զամբրաւն, որ ի շող տեղ կու լինայ և ի հով չի լինիր, որպէս տաք տեղրանքն, որ առաջի խլեմն կու լինի և այլ տեղվանք չի լինի, գէտ փեղն և կամ ըզմէմունն և խազալն, և զինչ քանի որ լինի, յամէն Արեգական զօրութենէն ու անձրև, և ամէնն Արեգակէն, ու զխոնաւութիւն ի վեր կու քաշէ և ամպ կու տայ, որ զաշխարհս կու ցօղէ, և այլ ի հետ որ Լուսին

որ խիստ երևումն և գործ ունի աշխարհս, որ Արեգակին բնութիւնն տաք է և չոր, և Լուսինն հով և գէճ: Զի յորժամ Արեգակի մօտ լինի, գտաքութիւն և ըզչորութիւն առնու:

Եւ յորժամ Լուսինն ի մօտ լինի, զհոգութիւն և զգիծութիւն աւելցնէ: Եւ այսպէս իմացաք զայնոք ի ծովն են և քննութիւն արարին փորձելով և ասացին, թէ յորժամ Լուսինն ծնունդ առնէ, (22բ) օր ըստ օրէ աճէ և աւելնայ, և յորժամ փլէ, յետ պակասումն նայ ծովն այլ պակասի, ու այն Հնդից ծովն է և Պարսիս և անուն սոցին այս է՝ Մատ և Զաղր, և մատան է, երբ Լուսինն յարեւելք ելնէ, նայ ինքն սաստիկ հողմ ելանէ և ալեկոծութիւն լինի, մինչև այն որ Լուսինն ի մէջ երկնից գայ և ապա դադարի ծովն մինչև ի յայն, որ Լուսինն մտանէ մինչև այն որ Լուսինն ներքև երկնիս չորս տուն հասանէ, և այնկից ի վեր դադարէ ալէկործութիւն, ու այնոք, որ նաւավարքն են և պահարիքն են, ի յայս ծովերս յայն տեսանեն և ճանաչեն, թէ մօտևոր է վասն այլէկոծութիւնն, նոյն զվճարն ճանաչեն վասն դադարման ծովին:

Եւ երկրորդն այն է, որ եփ Լուսինն նոր կու լինի, նայ ինչ շնչաւոր կենդանի կայ, իւրեանց մարմինն զօրաւոր կու լինի և ըղեղն ի լիքն մինչև (23ա) փուլն, և այնուհետէ ի տկարութիւն կու երթայ և ըղեղն կու թերանայ:

Երկրորդ¹⁶ այն է, որ զհիւրնդին պօհրանին ի Լուսինն էն է առած ու կայ ի հէքըմնոյն քտպերն գրած:

Երրորդն այն է, որ ամէն շնչաւոր կենդանու յոր-

ժամ Լուսինն ի յաճ կու լինի, նայ իւրեանց մազն կու աճէ: Եւ յորժամ Լուսինն փուլ լինի, պակաս կու աճէ:

(Զորրորդն) նոյնպէս, և հաւկիթն ՚ի նոր ի լիքն լինի, երբ փլէ, թերի լինի: Նոյնպէս անասնոյ կաթն յորժամ նոր լինի Լուսինն, նայ առատ լինի, և յորժամ փուլ լինի, նայ սակաւ լինի:

Հինգերորդն այն է, որ երբ մարդ ի Լուսնկան պառկի, մարդոյ մարմինն թուլանայ և զուքամ լինայ, ու միսն որ ի Լուսնին կախեն, նայ համն կու փոխի:

Վեցերորդն այն է, որ զճուկն որ բռնեն, ի նորն գէր լինի և ի փուլն միսն (23բ) թերի լինայ:

Եօթներորդն այն է, որ ծառն կամ ի ցանն, որ կու տնկեն և ցանեն, ի նորն աղէկ բուսնի և պտուղ տայ, և ի փուլն վատ լինայ, և եթէ յարեւելից ելնէ մինչև ինչ և ի մէջ երկնիցն թէ ցան թէ տունկ աղէկ լինի, քան զայն որ կամարն ի վայր իջնու մինչև յարեւմուտս:

Ութներորդն այն է, որ Լուսինն յորժամ յարեւելք ելած լինի և նոր ամենայն բուսք և ծաղիկք ի յաճ և ի յաւելուած կու լինի, յորժամ փուլ լինի սակաւ աճէ:

Իններորդ այն է, որ երբ ուրդի որ աստղմ հետ իրաց մուղարինայ առնէ և Լուսինն ի հեռու, նայ իւրեանց հայեցքն յաշխարհս պակաս լինի:

Եւ այսպէս իմացաք, որ Արեգակն յաւելի թասխիր ունի յաշխարհս: Զի նոցա գործքն յաւելի զօրութիւն ունի ի յաշխարհս, վասն երեք պատճառի յաւելի զօրութիւն Լուսնին ի վերայ երկրի: Առաջին այն է, որ ցած է յաշխարհս, և միւսն այն է, որ շուտ կու պատէ զեր(24ա)կինքն ի երկոտասան կենդանակերպ, և միւսն այն է, որ զաստղերուն լուսն մէկ ի մէկ կու տայ աշխարհս հաստատուն այնով է: Եւ այնով տե-

¹⁶ Երկրորդը կրկնված է:

տաք, որ այլ աստղեր գործ և զօրութիւն ունի յաշխարհս այսպէս, միւսն այն է, որ կու տեսնու՞մ ամառն շող քան զամառն, այլ զձմեռն ցուրտ քան զձմեռն:

Այլ երբ տեսաք զայն, նայ ամառնամուտն, թէ Արեգակն հետ տաք աստղի կու լինի, նայ ամառն շող լինի: Եւ թէ հետ հով աստղին լինի, նայ ամառն կակուղ լինի: Թէ ձմեռնամուտն Արեգակն հետ հով աստղին լինի, ձմեռն ցուրտ լինի. թէ հետ տաք աստղին լինի, ձմեռն տաք և կակուղ լինի: Երկրորդն այն է, որ Զօհրայն ունի յաշխարհս ի վերայ ուրախութեան, ի վերայ գուսնութեան, յորժամ մեկմն կնիկմն առնու, որ Զօհրայն գտնու ի Չուկն ու զԼուսին ի Յուլն, որ թէ թասթիս, կամ լինի(24բ) Լուսին ի Խեցգետինն և Զօհրայն ի Յուլն, ու կամ Լուսին մուղարինայ՝ հետ Զօհրային:

Այս կենդանակերպս, որ ասացաք, որ երկուն ասեն, հայեցք չունենան, նայ այն երիկն և կնիկն միաբան լինին ու սիրեն զիրար: Ով որ կնիկ առնու Զօհրայն ի Սումբուլան լինենայ կամ ի Խոյն կամ ի Կարիճն, և Մառեխն իրենց մուղապիլան և կամ թարպեհ որ այսպէս լինենայ, Զօհալն ի Մուշթարին հայեցք չունենայ, նայ երիկն և այն կնիկն իրաց կու լինայ և զիրար չժառանգեն:

Երկրորդն այն, որ ով ուզէ, որ գիտենայ, որ մարմնոյն զօրութիւն լինենայ, երբ Լուսին ուժով լինի և մարմինն վատուժնայ, երբ Լուսին վատուժ լինի, թող հայի Լուսինն, և երբ մուղարինայ առնէ հետ Զօհրային ի Յուլն, երբ տեղ տաս մարդոյն, նայ բանն պա(25ա)կաս առնէ, և եփ դեղ քսէ՝ մազն ի վայր չգայ. երբ Լուսին ուժով լինի, նայ մարդին բնութիւն ուժով լինի: Նայ վասն այնորիկ պակաս բան առնէ, ու նոյն-

պէս եփ Լուսինն ի Խեցգետին լինայ և Մուշթարին ի մօտ, նայ դեղն բան չառնէ: Ով որ ծառ տնկէ և կամ ցան առնէ, որ Լուսին յԱյծեղջիւրն կամ ի Զրհոսն կամ ի Կարիճն, և Լուսին մուղարինայ լինի հետ Զօհալին, որ Մուշթարին հայեցք չունենայ, նայ տունկն և ցանն վատ լինի:

Նայ այսպէս իմացաք, որ աստղերն զօրութիւն ունի յաշխարհս: Ով որ ուզէ բան մի առնէ, պիտէ տեսնու, որ Լուսինն հանց աստղ հայեցք ունենայ, որ այն բանին հաշիւն է, և վայելուչ է որ յայն աստղերն հայեցք չունենայն, որ հակառակեն:

Ասացին ոմանք թէ՛ այս աստղագիտութիւնս (25բ) աղէկ ուզէ լինէլ հետ մարդոյ, նայ կամի լինի ութէ, վատ ուզէ՛ գայ նայ իւր կամ ի գայլ: Ամենայն ինչ շահ է իւրեանց գիտենալ: Պատասխանի այս է, ութէ այս իրքս կու գայ վատ է, նայ մարդ իմանայ որ իւրմէն պատրաստ կենայ, մեք կու տեսնուք զայնոք, որ ի ծովն են, որ երբ գիտենան յորժամ վատ հողմ ելանէ, նայ իրենքն պատրաստ կենան որ փրկին յառաջակային վնասին: Զոր օրինակ, որ ոք պատահեալ է ի մէջ դաշտին, և տօթ Արեգակն և ջերմութիւն նորին անկանի ի վերայ մարդոյն, նայ ի շուք կանգնելով փրկի յառաջկայ ցասմանէ: Եւ օրինակաւ է եխթիարն և պատրաստութիւն գիտութիւն, որպես մենք յառաջագոյն գիտացաք, լինի զգայլ ձմեռնային և պատրաստել զհանդերձս և զտեղի, և փրկիմք յայնմն դժարութեանէ:

(26ա)Եւ այլ ցուցանեմք դռներ, որ մտանէ յաստղագիտութիւնս: Առաջին այն է, որ պրճերն ցուցանեմք քեզ: Երկրորդ, որ զաստղերն գիտենաս, որպէս աստղերուն այլ որպէս Ըռասն և Դանապն, որ է գլուխ Վի-

շապին և տուտն: Երրորդ այն է, որ կացուցանէ զաստղերուն ու պոճերուն զհտուտնին և զուճուճն: Չորրորդն այն է, որ ցուցանէ զհուլմն ամենայն իրաց: Հինգերորդն այն է, որ ցուցանէ զտարածնին և զիրեանց բնութիւնն: Եւ մեք այս որ ամէն մէկին դուռն մի կուզենք ասել, ուզենք երկրորդիլ զայս դուռիս:

Առաջին դուռն այն է, որ ցուցանեմք, թէ էր եղև երկինքն երկոտասան կենդանակերպ: Վասն այսորիկ զի գտաք զտարին չորս եղանակ ամ, մենք բաժանեցաք զերկինքն չորս բաժին: Եւ արարաք զամէն բաժին երեք պուրճ, և երկու այն է, որ երկու լու(26բ)սաւորն խիստ թասխիր ունի յաշխարհս, ու տեսաք, որ երկոտասան յեղ զԼուսինն մուղարինայ կու լինի հետ Արեգական, որ ամէն մուղարինայ ամիսն դրին, նայ եղաւ տարին երկոտասան ամիս, և երեք այն է, որ Ապումաշար իմաստնասէրն ասաց, թէ չորս է տարերքս, և չորս է՝ հուրն, հողմն, ջուրն և հողն, և զինչ ի գոցանէ գոյանան երեք ազգ են. յառաջին՝ սկիզբն է, երկրորդ՝ լինելութիւն է, երրորդ՝ կատարած է. և սոքայ մութալիթայ են, որ սկիզբն և հաստատութիւնն, որ են խոյ և Յուլն, Եկաւորն և Խեցգետինն:

Զի է խոյն հրային և Յուլն հողային, Եկաւորն հողմային և Խեցգետինն ջրային: Երկրորդ՝ Առիւծն և Կոյսն, Կշեռն և Կարիճն, նոյն օրինակաւ սոքայ միջակք են: Երրորդ մութալիթան՝ Աղեղնաւորն և Այծեղջիւրն, Զրհոսն և Զուկն: Նոյնպէս և սոքայ կատ(27ա)արումն: Եւ յառաջին չորսն, որ ասացաք, ամենայն բանի որ սկիզբն է բանին: Եւ երկրորդ չորսն, որ ասացաք, առաւել է քան զսկիզբն, զի միջակ է: Եւ երրորդ չորսն, որ ասացաք, աւելի է ի վերայ կատա-

րածի և ի վերայ վաղճանման: Եւ այլ պարտ է մեզ զամենայն կենդանակերպ առանձին և մէկ մէկ ցուցանեմ: Զի են հրայինքն այսոքիկ, և այսպիսիք և զիւր բնութեներն:

Առաջին բուրճն, խոյն դալիլ առնէ ի վերայ տաքութեան մի, որ իւրմէն գոհացութիւն մի հաստատի: Առիւծն դալիլար առնէ տաքութեան մի, որ առաւել է, ապականէ զկենդանիքն և զբուսքն: Եւ Աղեղնաւորն դալիլ առնէ ի վերայ տաքութեան մի, որ առաւել չորութիւն տայ և այրումն տայ կենդանեացն և բուսացն:

Հողայինքն են այսոքիկ. Յուլն և Կոյսն(27բ) և Այծեղջիւրն: Յուլն դալիլ առնէ տեղաց մի, որ աղէկ և պարարտ և սպրիկ և բուսուցիչ լինի: Կոյսն դալիլ առնէ ի վերայ հողի մի, որ առաւել չէ պարարտ, զի կիսոյ վերայ բուսուցիչ լինի և կիսոյ վերայ ոչ: Եւ Այծեղջիւրն դալիլ առնէ ի վերայ հողի մի, որ լինի և չբուսնի յինքն բուս:

Հողմայինքն են այսոքիկ. Եկաւորն, Կշեռն, Զրհոսն: Եկաւորն դալիլ առնէ հողմոյ մի, որ ինքն աղէկ լինի և յորժամ հասանի բուս, պարարտութիւն և ուժ տայ: Եւ Կշիռն դալիլ առնէ հողմոյ մի, որ միջակ է ի բարի և ի չար: Եւ Զրհոսն դալիլ առնէ հողմոյ մի, որ ապականիչ և վատ լինի ամենայն շնչաւոր կենդանեաց և բուսուց:

Եւ ջրայինքն են այսոքիկ. Խեցգետին, Կարիճն և Զուկն: Խեցգետին դալիլ առնէ ի վերայ ջրի մի, որ աղէկ անուշահամ(28ա) լինի ի վերայ հովութեան և գիւճութեան, որ աղէկ լինի: Եւ Կարիճն դալիլ առնէ ի վերայ ջրի մի, որ միջակ լինի և համն փոխել լինի ի չո-

րուծիւն քիչ, որ աղէկ լինի և ոչ վատ: Զուկն դալիլ առնէ ի վերայ ջրի մի, որ վատ լինի և լեղի և վատ համ, որ մարդ չկարէ խմել և աղի ապականիչ բնութեան ի վերայ գիծութեան և հովութեան, ու ինքն աղէկութեան մասն չկայ:

Ճասլ է հինգն, որ ցուցանէ զբնութիւն կենդանակերպաց միաբան խօսք իմաստասիրաց, որ երկնուց բնութիւն հինգ է և չէ այս չորս բնութեանց, և ի Փալաք, որ ոչ տաք կայ և ոչ հով կայ և ոչ գէճ և ոչ չոր, ապա թէպէտ որ իրենք չկայ, ապայ իրենց գործքն կայ, նա վասն այսորիկ են իւրեանց ասացել, թէ մէկ տաք և մեկ հով և մեկ գէճ և մեկ չոր, ու տաքութիւն լաւ է քան զհովութիւն վասն այն, զի առաջին կենդան(28բ)ակերպն տաք եղաւ, և ապա երկրորդն հով, ու տեսան, որ չորութիւն լաւ է քան զգիծութիւնն: Յայնժամ դրին զԽոյն, որ է տաք և չոր, և այլ ի հետ զՅուլն, որ է հով և չոր: Եւ դրուավ երկու կենդանակերպ չոր և երկու կենդանակերպ գէճ: Վասն այն եղաւ Խոյն, Յուլն չոր, Եկաւորն և Խեցգետինն գէճ, որ կենդանակերպքն ամէն այսպէս եղան: Յայնժամ այն որ տաք չոր է, որ յաշխարհս զսաֆրան, և ով որ հով չոր է, ունի ու զսավտան: Եւ այն որ տաքութիւն գէճ, ունի զարիւնն և զօդն: Եւ այն որ հով ու գէճ է, ջրային է, ունի զպալղամն: Վասն այնորիկ ասացին, թէ Խոյ կրակային է և Յուլն հողային, Եկաւորն հողմային և Խեցգետին ջրային, և այն որ կրակային է, այնոք է, որ զսաֆրայն ունին, և այնոք, որ հողային է, այնոք է որ զսավտան ունի, (29ա) և որ հողմային է, ունի զարիւն, և որ ջրային է, ունի զպալղամն:

Ասացել են ոմանք իմաստասիրաց, թէ երբ Փալաքն

տոսպի(°) յաղթի՝ խամրասաւոր է հինգ բնութիւնն: Եւ այս այսպէս էր, նայ պիտէր ամէն մէկ բնութիւն ունէին, ամ այն ինչ է, որ մէկ տաք ասէ և մեկ հով ասէ, և մեկ չոր ասէ և մեկ գէճ ասէ: Պատասխանի, զի յորժամ Աստուած ստեղծեց զսոքայ, թէպէտ որ ի մէկ նիւթ և մեկ բնութիւն ստեղծ զսոքայ, ապա ամէն մէկի զատ զօրութիւն երես և գործ: Եւ մենք այլ տեսաք որ աստղերն ի կենդանակերպն կու անցանի: Յորժամ կենդանակերպն տաք լինի, զտաքութիւն կու շարժէ, երբ ի հով լինի, զհովութիւն շարժէ, և նոյնպէս զչորութիւն, և նոյնպէս գէճն: Եւ երկրորդն այն է, որ զտաք զհովն ուժով տեսաք, և զչորն (29բ) և զգէճն վատուժ, զի որտեղ տաքութիւն լինի, չորութիւն հետ լինի, զի որտեղ հովութիւն՝ գիծութիւն ի յետն լինի: Վասն այն եղաւ մեկ տաք, մեկ հով, երկու չոր, երկու գէճ, որ այնոր մուղապիլ կայր: Մեք տեսաք զԽոյն, որ երբ յԱրեգակն յինքն կու մտնէ, նայ հաւան կու փոխվի հովութեանն ի տաքութիւն, նայ մեք այնով իմացաք՝ տաք հետ հովին լինի: Եւ մեք իմացաք, որ ամէն կենդանակերպն յառաջէն մինչև ի վերջն մէկն տաք և մէկ հով: Եւ այլ տեսաք, որ երբ Արեգակն ի Խոյն և ի Կշիռն կու մտնէ, նայ իւր երևումն յաշխարհս խիստ կու լինի: Վասն այնու հաւան փոխեցաւ ի Խոյն, ի հովութեանէ ի տաքութիւն, ու ի Կշռն ի տաքութեանէ ի հովութիւն, ու մենք իմացաք, որ Խոյն լաւ է քան զԿշիռն, որ ի շտաքութիւն փոխէ: Զի կենդանութիւն այնով է, (30ա) նայ մենք հանօք ասացաք, թէ Արեգակն բարձրութիւն յինք եղաւ:

Ասեն ոմանք, թէ հուր և ջուր հակառակ են միմեանց կենդանութեան: Դուք է՞ր դրիք Զուկն ջրային

և խոյն հրային: Եւ պատասխանի, որ մենք ասենք, թէ հօն ոչ կրակ կայ և ոչ ջուր, ապա Աստուած ամէն մէկի գօրութիւն և գործ է տվել, որ ամէն մէկ գօրութիւն մի գործ են, ուրիշ ուրիշ չասենք, թէ խոյն կրակային և ինքն կրակ է և այլ իր գօրութիւն և գործն կրակային է: Եթէ ոք հարցանիցէ, թէ տեսանեմ զԱղեղնաւորն բնութիւնն կրակի ու եփ Արեգակն յինքն կու մտնայ, նայ հաւան հով կու դառնայ: Որպէս խեցեօտին, որ ջրային է, երբ Արեգակն յինքն կու մտնայ, նայ հաւան կու տաքնայ խիստ, նայ վասն այսորիկ է, որ թէ Արեգակն յԱղեղնաւորն կու մտնայ, նայ թէպէտ տաք է, ապա ի (30բ) մեր յաշխարհէս հեռու է, նայ վասն այն չի տալ աւելի տաքութիւն և շողութիւն: Եւ խեցեօտինն մեր աշխարհիս վկայ է: Նայ թէպէտ, որ ինքն ջրային է, ապա Արեգակն մեր աշխարհիս դիմաց է ի վերայ, և է նայ իր շառաւիղքն զիր տաքութիւն ի մեր աշխարհէս կու տայ: Եւ թէ յորժամ յԱղեղնաւորն լինի՝ ի հարաւոյ կողմանէ ի Հնդուստան, յայնժամ հօն շող լինի և այս օրինակաւս, որ խեցեօտինն է, թէպէտ ունի գտաքութիւն Արեգակին, ապա ոչ գետ զայն, որ երբ Առիւծն երթայ: Նայ վասն այնորիկ առաւել տաք բնութիւն կուտայ մեզ յաշխարհս, թէ ոմանք հարցանեն, թէ պիտէր որ երեք կրակային, որ մէկ տեղ լինէր և երեք ջրային մեկ տեղ լինէր, և երեք հողային ի մէկ տեղ լինէր, և երեք հողմային ի մէկ տեղ լինէր:

Պատասխանի, թէ հանց որ այս հանց էր, նայ ժամ (31ա) լինէր խիստ շող և ժամ լինէր խիստ ցուրտ և ի տեղմն լինէնար խիստ շող, նայ ի վերայ երկրի ոչ կենդանի ապրէր և ոչ բուս լինէր, և այլ տեսաք, որ տաքութիւն լաւ է քան զհովութիւն: Վասն այն դրաք ա-

ռաջին պուրճն խոյն և յետ զՅուլն, որ է հով, և հետ զԱռիւծն, որ է տաք, և դրաք զԱռիւծն, կրակային մութալիթայ հայի ի խոյն զառաջին շիբն, որ կենէ ի Հնդուստան: Մութալիթայն է, որ է եռանկունի:

Փասլ է, որ ցուցանէ զկենդանակերպաց զիգականն և զարվականն: Նայ մենք տեսաք, որ փարտն լաւ է քան զուզն: Նայ մենք դրաք զխոյն եզական և արուական և Յուլն զոյգ և իգական, ու տեսաք որ տաքն լաւ է քան զհովն, ու տեսաք, որ ցորեկն աղէկ է քան զգիշերն, մենք դրաք գործն ցորեկ և զէգն գիշեր, ու մեք(31բ) ասեմք, թէ զինչ տաք կայ, աղեկ է ի պոճերն: Ու զինչ հով, նայ վատ է ի պոճերն: Եւ հնդիք կու ասեն, թէ զինչ տաք կայ, վատ է, և զինչ հով կայ, աղեկ է: Եւ այլ ասեն, թէ զինչ որ ի տալեհն է, այն որձ է, և ի երկու էգ է: Եւ այսպես համբերեն մինչև երկոտասան տունն: Եւ այլ առնենք ի տալեհն, որ լինի յարեւելից մինչև ի մէջ երկնից, և անտի մինչև յարեւմուտ էգ է, և յարեւմտից մինչև ի չորս տունն որձ է, և ի չորս տանէն մինչև յարեւելք էգ է: Եւ աստղ մի իւր կենդանակերպն կու մտէ, որ ի բնութիւնն լինի, նայ ուժով լինի և զօրանայ, և երբ ի պուրճ մի մտէ, որ իր բնութեան հակառակ լինի, նայ տկարացնէ, երբ որձ աստղի որձ պուրճ մտանէ, նայ ի վերայ որձ բանի առնէ իշխանութիւն, և երբ էգ պուրճ մտանէ, տկարանայ իշխանութիւն (32ա) ի վերայ որձ բաներու:

Փասլ է, որ ցուցանէ զկենդանակերպաց զգործն գրարին և զչարն, որ պրճերոյն կայ և որին զօգւածն կտրած է, և են այսօքիկ՝ խոյն, Յուլն, Առիւծն և Զուկն: Եւ այս վասն այնոր տեսաք զխոյն, որ պճեղ չունի, և ըզՅուլն տեսաք, որ կէս Յուլն է և ի միջացն ի

հետ չկայ, և զԱռիւծն տեսաք որ բաշ չունի, և զՁուկն տեսաք որ իսկի անձն չերևի, լքանի երկու աստղ:

Երկրորդ ցուցումն կենդանակերպացն են, որ մարդապատկեր են այսոքիկ: Եկաւորն, Կոյսն, Կշեռն, Զրհոսի կէսն, և կայ իւրենք որ չորէք ոտի են: Խոյն, Յուլն, Աղեղնւորին վերջի կէսն, և այս պոճերոյս կայ, որ իշխանութիւն ունի ի վերա անասնոց, որպէս Առիւծն ի վերայ առիւծոց, և Կարիճն ի վերայ կարճ(32բ)աց, և Ձուկն ի վերայ ձկանց, Եկաւորն և Կոյսն, որ Ձուկն որ երեք բաժնէն, երկու յետի բաժին ունի իշխանութիւն ի վերայ թռչնոց, և որպէս Խեցգետինն և Կարիճն և Ձուկն իշխանութիւն ունի ի վերայ ջրային կենդանեացն:

Երրորդ ցուցումն այն է՝ Խոյն, Յուլն, Եկաւորն, Առիւծն, Կոյսն, Կշիռն՝ այսոք ձայնաւորք են: Եւ Այծեղջիւրն, Զրհոսն վատուժ է ի ձայն: Խեցգետինն, Կարիճն, Ձուկն իսկի ձայն չունի և մենք այսիւ հանենք զմարդոյն զամեն որպիսութիւն, թէ բանական լինի, թէ զինչ ազգի լինի:

Չորրորդ ցուցումն կենդանակերպացն որ ջրային են, որ է Խեցգետինն և Կարիճն, Ձուկն և յետի կեսն Այծեղջիւրն, այսոք իշխանութիւն ունին ի վերայ տղայոց: Խոյն, Յուլն, Կշեռն, Աղեղնաւորն և Զրհոսն ի վերայ տղայոց քիչ հուքմ առնէ: Առիւծն, (33ա) Կոյսն, առաջի կէսն Այծեղջիւրին ամուլ են:

Շինգերորդ ցուցումն՝ Խոյն, Յուլն, Առիւծն, Այծեղջիւրն և Ձուկն ի վերայ կանանց, ի վերայ ցանկութեան ցանկացող լինի ի կանեց: Յուլն, Առիւծն, Կարիճն, Զրհոսն ի վերայ սրբութեան հուքմ առնեն: Խոյն, Խեցգետինն և Կշեռն ի վերայ աւիրման հուքմ

առնէ: Եկաւորն, Կոյսն, Աղեղնաւորն և Ձուկն միջակ լինենայ ընդ սրբութիւն և ընդ անսրբութեան:

Վեցերորդ ցուցումն, Առիւծն և Կարիճն և Այծեղջիւրն և Կշեռն և Կոյսն կայ յիրենք մթնութիւն որ հոգ կուսայ:

Եւթներորդ ցուցումն, ամէն մէկի այս կենդանակերպացս բաժին մի ունի յաշխարս կողմանցնուն, յամէն կոմն այս կողմերուս ունի յաջ դեհ ու ձախ, նայ այսպէս բաժանեցաւ երկոտասան բաժին յաշխարհս: Եւ Խոյն ցուցանէ ի վերայ արեւմտից մջին, և Առիւծն ի վերայ իւր ձախ դեհն հիւսիսոյ դեհն, Առիւծն ի վերայ աջ դեհն հարաւոյ կողմն և Յուլն ցուցանէ ի վերայ մէջ դեհուն հարաւոյ կողմն, Այծեղջիւրն աջ դեհն արեւմտից, Եկաւորն ի վերայ մէջ յարեւմտից դեհն, ու Կշեռն ի վերայ ձախ դեհուն դիպի հարաւոյ, Զրհոսն ի վերայ ձախ դեհուն հիւսիսոյ, և Խեցգետինն ի մէջ հիւսիսոյ, և Կարիճն ի վերայ ձախ դեհոյ հիւսիսոյ ի վերայ արեւ(33բ)մտից մջին և Առիւծն ի վերայ իւր ձախ դեհն հիւսիսոյ դեհն, Առիւծն ի վերայ աջ դեհն հարաւոյ կողմն և Յուլն ցուցանէ ի վերայ մէջ դեհուն հարաւոյ կողմն, Այծեղջիւրն աջ դեհն արեւմտից, Երկաւորն ի վերայ մէջ յարեւմտից դեհն ու Կշեռն ի վերայ ձախ դեհուն դիպի հարաւոյ, Զրհոսն ի վերայ ձախ դեհուն հիւսիսոյ և Խեցգետինն ի մէջ հիւսիսոյ և Կարիճն ի վերայ ձախ դեհոյ հիւսիսոյ ի վերայ արեւմտից և Ձուկն ի վերայ աջ դեհուն արեւմտից: Եւ գիտացիր, որ ամենայն քամի ի մէկ պոճէ կուգայ և դերկոտասան հողմն բաժին է արած երկոտասան կենդանակերպաց, և ամեն կենդանակերպ մեկ քամի ունի իշխանութիւն: Եւ այն հողմն, որ յարեւելից փչէ՝ Խոյն

է, և տապուրն Եկաւորին, և ճանուպն Յուլին, և շամլն (34ա)՝ Խեցգետնին: Եւ այս կերպով կերթայ մինչև երկրորտասան կենդանակերպն: Եւ քամի որ յարևելից և արևմտից մէջն փչէ հարաւոյ մէջն, թէ արևելք փչէ՝ նայ գուշակէ, որ Աղեղնաւորին է, եւ թէ հարաւ լինի մօտիկ, նա գուշակէ, որ Կուսին է, և այլ բաղին այլ այս ձևովս կու երթայ:

Դուռն որ ցուցանէ զկենդանակերպին, որ իշխանութիւն ունի ի վերայ անասնոց զօղվածին: Եւ ասացել են ոմանք իմաստասիրաց, թէ մարդուն զօղվածին ի վերայ այլ իշխանութիւն ունի: Գլուխն և երեսն Խոյին է, վիզն Յլին է, Եկաւորն երկու ուսն է և ձեռքն է, Խեցգետնին ունի զկուրծքն: Եւ Առիւծն ունի զսիրտն, և Կոյսն ունի զփորն և զինչ ի մէջն կայ: Եւ Կշիռն ունի զերկու անդամն: Եւ Կարիճն ունի զծածուկ մարմինն: Աղեղնաւորն ունի զ(34բ)ծնկերն ի վերի դեհն: Այծեղջիւրն ունի զծուռնկն: Եւ Զրհոսն ունի զջղերն: Եւ Զուկն ունի զոտվին:

Յասլ ութնեորդ, որ կատարեցաւ խօսք իմաստասիրաց վասն մարդկաց բնութեան: Խոյ ի վերա ծաղրի իշխանութիւն ունի և ասուն և խօսուն, և սիրէ զարքունաք, և խօսքն անյոչ լինի՝ և ճիկրոտ և պայծառ, և պահատուր լինայ: Յուլն մըգլոտ և հիլաքար, և սուտ զրուց և խաբող և կարմիր: Եկաւորն ողորմած և քնքուշ սիրտ, և սիրէ զգուսանքն և սիրէ զմեծութիւն, և սիրէ զերկնային ուսուսմն և առատասիրտ լինի, և փառաւոր լինի, և սրտասիրտ լինի, և անզգամ լինի, և հեղաքար լինի, և հոգս շատ լինի, և վնաս շատ առնէ, և ծաղրոտ լինի, և պահատուր լինի: Կոյսն ունի զծօմարտ մարդիք, և սիրտն անուշ լինի, և ըղո(35ա)րդ

զրուց լինի, և խոնարհ լինայ, և շատ խորհուրդ լինի, և զօրաւոր լինայ, և թեթև լինի, և նենգաւոր լինի, և խաղցող լինի:

Խեցգետնին ունի զհելաքարն և մուսն լինի, և սգաւոր լինի: Առիւծն ունի զթագաւորք և ճիկրոտ լինի: Կշեռն ունի զծօմարտքն և հիլաքարն և ամիչկոտ լինի, և հնազանդ, և յատիլ, և զուսուսմն սիրէ, և պաշտօղ լինի: Կարիճն չարմիտք լինի, և հոգսոտ լինի, և խաբող լինի, և պահատուր: Աղեղնաւորն ունի զթագաւորին բնութիւն և պահող լինի, և ճրի տփող, և զինքն անհարկի առնէ, և պահատուր լինի, և մաքար և ճիկրոտ, և շինող լինի, և հնճարող լինի, և զվերջն անդիճե զբանին, և սիրէ զչորս ոտանին, և սուրբ կերակուր ուտէ և խմէ, և աղէկ սուրբ հալաւ հագնի, և վնասկար լինի, և ծաղրոտ լինի, և զինքն (35բ) տեսնու և պահատուր լինի: Այծեղջիւրն ունի զայնոք, որ աւիրողք են և բլցնողք, և սուտ զրուց և ճիկրոտ, և շրջմոլիկ և վաղանդէճ լինի և շատ հոգս ունենայ, և բարկացող լինի, և անուշ բառք լինի, և սիրէ զիմաստութիւն, և թլահարար լինի, և զով ուզէ սիրէ, և զգուսանք այլ սիրէ, և ապրանքն աղէկ լինի, և բարերար լինի, և պահատուր լինի: Զրհոսն ծածկող լինի և գանձն զարդարող լինի, և սիրէ զմարդավարութիւն, և սուրբ կերակուր ուտէ, և ծօմարտ լինի ի կերակուրն և սիրէ զուզակ ժողվելն և չմսխէ, և հանգիստ լինի, և վախելուն ժամն վախկոտ լինի, և զմահու օրն անդիճէ և յուլ լինի: Զուկն ունի զքնքուշ մարմինն և շատ իր վտանք ուզենայ, և ի մեկ բանի վերայ չկենայ, (36ա) և ամենայն գործ միջակ լինի և խաբէութիւն այլ յիմար լինի խիստ:

Դուռն, որ ցուցանէ զմարդոյ կերպն:

Խոյն ունի զմուր մարմին և վատ կերօք լինի, և աչքն ծարուրած լինի, և կապուտ և հարկեոր լինի, և բերանն մեծ լինի, և մազն աղեկ լինի, և կարմրագոյն լինի:

Յուլն ունի գերկայն մարդիքն և ճակատն լայն լինի, և ունքն կարճ և աչքն սև լինի, և թարթիչքն քիչ լինի, և զիւր տեսն պահէ և քիթն տափակ լինի, և քիթն սուսն սուր լինի, և ի դուրս բերանն տափակ լինի, և պռունկն թանձր լինի, և վիզն հաստ լինի, և մազն գուռ լինի և սև, և փորն մեծ լինի:

Եկաւորն բոլոր լինի և անձն գեղեցիկ, և տեսն սիրուն, և մօրուքն գեղեցիկ, և աչքն սուր, և թիկնեղ լինի, և ջղերքն յերկայն:

(36բ) Խեցգետինն ունի զմիջակ յերկանութիւն և ցորենամորթ լինի, և մազն բարակ և քիթն ծուռ, և ալուատն ծուռ, և գտեսութիւն պահէ ի մարդովէ, և միջացն ի վայր մեծ լինի, և ջղերքն յերկայն լինի:

Առիւծն կուրծքն տափակ լինի և երեսն և մատներն հաստ լինի, և ջղերն բարակ և վերի կէսն մեծ լինի, և մազն դեղձայն և գեղեցիկ լինի, և կապուտ աչք լինի և կամ խաժաչք լինի, և քիթն սուր լինի, և մազն դեղձայն, և փորն մեծ:

Կուսն ունի զմիջակ գիրութիւն և քիչ յերկայն լինի, և մազն գուռ և երեսն աղէկ, և սպին ունի կուրծքն և ի փորն և վիզն:

Կշեռն ունի զմիջակ մարմինն և երեսն գեղեցիկ, և անձն գեղեցիկ և սպիտակ, և քիչմն դեղնագոյն, և աչքն ծարուրած և կապուտ, և քիթն գեղեցիկ և վիզն նշան (37ա) ունի, և ոտվին գեղեցիկ լինի:

Կարիճն ունի զգուսն ճակատ և բաց երես, և բերանն փոքր և աչքն փոքր և դեղին, և ձեռքն բոլոր, և ոտվին և ջղերն բարակ և ուսեղ, և կուրծքն տափակ, և ի կունակն նշան, և փորն մեծ:

Աղեղնաւորն ունի զվատուժ մարմին և գեղեցիկ և յերկայն, և երեսն գեղեցիկ, և մազն և մօրուքն կուռ, և մազն քիչ և քիթն սուսն հաստ և կարմրագոյն, և փորն մեծ և շատ նշաննի ունի, և երեսն մազոտ, և մօրուքն բոլոր, և ի գլուխն մազ շատ, և ջղերն բարակ և քայլող լինի:

Այծեղջիւրն ունի զբոլոր անձն և միջակ և ճակատն փոքր, և աչքն ծարուրած, և պռունքն թանձր և բարձրատեսակ, և ջղերն մէկն յերկայն մեկն կարճ, և կուրծքն տափակ և երեսն բաց:

Ջրհոսն ունի զգեղեցիկ երեսն և ոս(37բ) կերքն կակուղ և բացերես, և միջակ անձն և կուրծքն տափակ և կարճատեալ, և փոքր ճակատ, և թանձր քրթուք, և ծաղրերես:

Չուկն աղէկ մարմին, կակուղ զօղված, լայն կրունկ, փոքր գլուխ և նեղ ճակատ:

Դուռն զհիւանդութիւն:

Խոյն՝ գլուխն շատացաւ, պիտի խուժր և պիտակ, խլութիւն, յիւր առաջի տարածն վատ գայ յանդամնոյն:

Յուլն՝ յառաջն ուժով է և վերջն վատուժ է, իւր ընալն ի շինքն լինի զէտ խոզք և զէտ խնաղ, որ է խեղթունկն, ու հոտած քիմք և վատ հոտ գայ յոտացն, և նշան կայ ի կուրծքն և ի մէջքն:

Եկաւորն՝ անարատ զօղված և աղեկ հոտ և պակաս

հիւանդութիւն, գինչ որ լինի՝ իւր հիւանդութիւնն նուզլայ և նղրիս լինի:

Խեցգետինն լինի վատուժ, զմարմինն շատ ըռանջ(38ա) հասնի իրենն, խոց մի կայ, որ խչիփար ասեն, և սուենկն լինայ:

Առիւծն լինի ուժով և շատ ըռանջ հասնի, իր յաւելի մատանով իր առաջի տասն տունն ծնանի, հոտած բերան լինի:

Կուսն թանձր և ինաւոր միջակ լինի և պակաս ըռանջ հասնի իրենն, քանչալ լինի:

Կշեռն ուժով լինի և թանձր, և ինաւոր միջակ լինի, և անարատ զօղված:

Կարիճն յառաջին առողջ է և վերջքն վատուժ է, և շատ ըռանջ լինի իւր առաւել խլութիւն, և մնջութիւն և պիսակ հերքուն, և ջուրն պակաս, գիշահոտ գայ յամօթացն:

Աղեղնաւորն առաջին մինչև ի տասն առողջ է, վերջն վատուժ է ու հիւանդցնօղ գէր վինիհար միջակ է, յաւելի ըռանջ նղրիս և կուրութիւն լինի և հասանի իւրն անասնոց վնաս:

Այծեղջիւրն վատուժ մարմին և խացակ, և խուլ (38բ) լինի և մոռնջ, ու արուն երթայ ի փորոյն, և նուզլայ լինի և նիկրիս, և սավտան յիւր վերայ զալիպ լինի, և աչացաւ լինի, և հոտած քիմք լինի:

Ջրհոսն յառաջին ուժով լինի և վերջն վատուժ հիւրնդկոտ, և դեղն ցաւ լինի:

Ձուկն ճվաղ և վատուժ, և շատ հիւրնդութիւն, աւելի քոս և քանչալ, և նուզլայ, որ է իջվացքն:

Յուցումն չորս, որ ցուցանէ զգուներն:

Խոյն որպէս կարմիր գուն է:

Յուլն սպիտակ գուն է:

Եկաւորն դէղին ու կարմիր գարնէ:

Խեցգետինն թխմորթ:

Առիւծն կարմրագուն:

Կոյսն դէղնագոյն որպէս գայն:

Կշեռն ով ծնանի որպէս լինի:

Աղեղնաւորն ով ծնանի կարմրագոյն լինի:

Կարիճն ով ծնանի որպէս:

Այծեղջիւրն որ ծնանի խառնագուն լինին:

Ջրհոսն ով ծնանի կանանչագոյն(39ա) և դեղնագոյն լինի:

Ձուկն ով ծնանի որպէս:

Յուցանէ զիւրեանց արուեստնին:

Խոյ ունի զարուեստն, որ թագաւորաց զարբննին և զմսագործերն, և զոսկերչերն, և գինչ կրակի բան հաշիւն ունի:

Յուլն ունի զդերձգերն և զչափողնին, և զբրդնին, և զցանողնին:

Եկաւորն ունի զուսուամն և զդպիրքն և զվարդապներն, և զոսորդնին, և զդերձկերն, և ըզխաղցողնին:

Խեցգետինն ունի զլեղորդնին և զչաքանին:

Առիւծն ունի գայն արուեստվորքն, որ գինչ որ ի բանէ ելնէ, ի բան տանին:

Կուսն ունի զոգիրնին և զիշխանքն, և գայնոք, որ գրագետք են ու գայնոք, որ հաւատարիմ լինին:

Կշեռն զմեծունաք և այնոք, որ խորհրդական է արուեստն, և զվաճառականքն և զգիտնականքն: (39բ)

Կարիճն ունի զլեղվորդնին և զկախարդնին և զնաւավարերն:

Աղեղնաւորն ունի գայնոք, որ ի ձիոյ ծառայեն և միջակ մարդիկք:

Այծեղջիւրն ունի զոսորդնին և զծառանին:

Ջրհոսն ունի զկտրիճ ծառանին և աղչկներն:

Չուկն ունի զհաքիմնին և զլեղորդնին և զնավավարերն:

Դուռն որ ցուցանէ զտեղերն:

Խոյ ունի զայն տեղերն որ լեռն է և քար է և տեղի ոչխարաց արծին:

Յուլն ունի զայգէստանն և զառիկողերն և զեզանց արօտն և զտեղերն:

Եկաւորն ունի զլերուկնքն և զտեղերն ոսորդաց և թագաւորաց քօշքերն:

Խնցգետինն ունի զջրոց ահուկնքն և ըզջահնին և զծովեզերքն և զտեղեր որ ցան լինի:

Առիւծն ունի զլերուկնք և զ(40ա)բերթերն և զամենայն բարձր շենք թագաւորաց քաւչքերն:

Կոյսն ունի զտեղեր որ կնանիք նստին և զինչ հող որ ինք ցան լինի:

Կշեռն ունի զեկեղեցիք և զմզկթնի և զամենայն աղօթից տեղեր և զամենայն որսու տեղեր, և զղրախտն, և զան լերուկնքն որ ցան լինի:

Կարիճն ունի զվատ տեղեր որ հոտած է և վատ ջրեր կենայ և զնդանի և զամենայն գերեզմանաց տեղեր:

Աղեղնաւորն ունի զայն տեղերն որ շեփքար լինի և զեկեղեցիք և զայն տեղերն, որ ինքն սլեհ լինի:

Այծեղջիւրն ունի տեղեր որ ծառայք կենան և զախոռնին և զայն տեղերն, որ շէն կենայ և կապով լինի:

Ջրհոսն ունի զտեղերն որ գետ է և առուք է, և զայն տեղերն, որ կանկնած ջուր կենայ, և զայն տեղերն, որ կրակ վառվի և բաղնեստանն, և զայն, որ ամեն իրբ կրակ լինի:

(40բ) Չուկն ունի զայն տեղերն, որ ինքն ջուր կանկնած կենայ, և զայն տեղերն, որ ինքն լաց կենայ:

Դուռն որ ցուցանէ զքաղաքնի և աշխարհն:

Խոյն ունի զՊաղտատ և զԱտրպայիճան ու զԱռան և զՖլաստին:

Յուլն ունի ըզՀամատան ու զայնոք, որ ի լերուկնք լինի, ու զՍքանդարիայ և զԿոստանդինոյպալիս և զԱման և զՌան:

Եկաւորն ունիտ զՄոր և զՀայոց տուեն և զԳիլան և զՔրման:

Խնցգետինն ունի զՄայարալֆայ ու զՄուղան ու զԱւհրիզիայ և զԽորասան:

Առիւծն ունի զԹուրքիստան մինչև ի յԱճուճ Պաճուճն ու զԳերեզման և զՄէլտենի և զՄիքրան և զՏիլամն և զՆշանաւորն և զԼտուս և զՀրմուս:

Կոյսն ունի զԶանօրոյս և զՇամբ և զՀալապ և զՍանհայ և զՔուֆ(41ա)այ և զՔրմանու Զնջատան մինչ ի Հնդկիկքն և զամենայն ինչ որ ի ջրոյ գոյանայ, որպէս զմարգարիտն և զսատաֆ:

Կշեռն ունի զՀուք մինչև զԱւհրիկիայ և զՏօսն ու զՄաքքայ ու զՏալիս ու զՊալիս և զՀրե ու զՔչմիր և զԼէինն:

Կարիճն ունի զՀեճազ մինչև ի Մաղրիպայ դեհն մինչև յԱւման և Մատինայ և զԸռայի և զՊարպար:

Աղեղնաւորն զԸսպահան և զՊաղտատ և զՏինաւանդ ու զՊապլապուլապ մինչև յարեմուտք:

Այծեղջիւրն ունի զՄաքրան և զՍնդ և զՄայիման մինչև ի Հուսնդըստան:

Ջրհոսն ունի զՔուֆայ և զԽպտկից երկրնին մինչև ի Չին:

Ձուկն ունի զՏապարիստան և Կուրկան և զՀնդկաց
դէհն մինչև Պուխարայ և զՍմրղանդ և զՃէզիրայ և
զՀամուծովն և զՀնդիկք, որ արևելից դեհն:

Դուռն որ ցուցանէ.

(41բ) Խոյն ունի զպղինձն և զերկաթ և զառծիճն ու
զթագն:

Յուլն ունի զմագեղեն հալվինին ու զսուֆ և զչու-
խան:

Եկաւորն ունի զմրուլթն ու զինչ այլ ինքն լուրջ լի-
նի ու զանուշ հոտերն:

Խեցգետինն ունի զսպիտակ հալաւն և զարծաթն և
զշաքրեղեգն:

Առիւծն ունի զճօշանին և զինչ որ ի կրակն հալի ու
զոսկին և զեաղուլթն:

Կոյսն ունի զանդիկն ու զինչ հուսնդ որ ինքն ի պէտ
չկայ:

Կչեռն ունի զապրիչուճն և զտանպուռն:

Կարիճն ունի զինչ որ ի ջրէն ջոհար ելնէ, որպէս
զմարճանն:

Աղեղնաւորն ունի զկլայեկն և զոսկին:

Այծեղջիւրին ունի զինչ որ հողայէն իր վերայ յա-
ւելի է:

Ջրհոսն ունի զինչ որ ի ջրէն կելնէ և զամենայն որ
ի ջուր գոյանայ, որպէս ըզմարգարիտ և զսատաֆ:

Ձուկն ունի ոչ:

(42ա) Դուռն, որ ցուցանէ, կայ որ շնչաւորի է:

Խոյն ունի զայնոք որ պճեղքն ճեղքած է՝ ոչխար և
ուղտն:

Յուլն ունի զպախրէ և զգօմէշ և զփեղն:

Եկաւորն ունի զթռչունք:

Խեցգետինն ունի զայն կենդանիքն, որ ջուրն կու
կենան, և զայն ճիճվորիքն, որ շատ ոտվի ունին:

Առիւծն ունի զգագանքն՝ զառիւծն և զուծն և զինչ
որ վնասկար կենայ, և զինչ որ պճեղն ունենայ:

Կոյսն ունի զակուսն և զպլպուլն, և զճնճուկն, և
զմեծ օձերն:

Կչեռն ունի զթռչունք և զուսնն:

Կարիճն ունի զինչ որ խայթող իրք կայ՝ զկարիճն,
զկորն, զօճն, զմեղուս և զպիծեկն, և զվատերեկն, և
զջրային կենդանիքն:

Աղեղնաւորն ունի զայնոք, որ սմբակ ունին, և զձի,
և զջորի, և զէշ:

Այծեղջիւրն ունի զինչ երկուտանի կայ, և զկատուս,
զայ(42բ)ծերն, և ոչխարն, և զմէկմն դնին, և զմորեխն,
և զճիճվորիքն:

Ձուկն ունի զինչ որ ջրային կենդանիք կայ և զինչ
որ սմբակ ունի:

Դուռն որ ցուցանէ զինչ բուսք կայ աստանորս:

Խոյն ունի զինչ բուս կայ, որ հուսնդ չուսնի:

Եկաւորն ունի զբարձր ծառերն:

Խեցգետինն ունի զբարձր ծառերն և զբարձր լե-
րունքն:

Կարիճն ունի զինչ բուս որ փուշ ունի:

Այծեղջիւրն ունի զայն խոտերն, որ հուսնդ և պտուղ
չունին:


Ջրհոսն ունի զերկայն ծառերն և զապանօսն:


Ձուկն ունի զշաքրեկն և ըզխնճորին և զսալորե-
նին և զինչ աղեկ պտուղ կայ և զմշմիշն:

Դուռն որ յիշէ զթիւներն:

Խոյն ունի զամէն վառման կրակ:

- Ցուլն ունի գայն տեղն որ կրակ վառի:
- (43ա) Եկաւորն ունի գաղհովերս:
- Խեցգետինն ունի գանձրև գանուշ ջրեր:
- Առիւծն ունի գայն դաշտն, որ խիստ շող լինի և կրակին տեղ կայ:
- Կոյսն ունի զգետեր և գառվնի:
- Կշեռն ունի զաղեկ հողմերն, որ կու սնուցանէ զպտղաբերքն:
- Կարիճն ունի զինչ գէշ ջուր կայ և զինչ հեղեղ կայ և զգնացման ջրերն:
- Աղեղնաւորն ունի զկրակն և գտաքութիւնն, որ ի մարդ կենայ:
- Այծեղջիւրն ունի գանհունդ խօտերն:
- Ջրհոսն ունի զծովերն և զգնացման ջուրերն և զինայ խիստ վնաս քամին, որ յորդ լինայ:
- Չուկն ունի զկանկնած ջրերն ու զինչ ժողված ջրեր լինի:





Դուռն աստղայբաշխութեան. հայեցք աստեղաց ընդ իրար. սայ է գանձ անչափ:

Հայեցք կենդանակերպից ընդ իրար, հայեցք է լաւ և պատուական ըստուգ:

Հայեցքն յիրար յիր երեք և ի մետասան թաստիս կոչի, ի չորս և ի մետասան թարպեհ կոչի յիրար, և հինգ և ինն պիտի թաթլիթ հայի և ի (44բ) մեկ և ի եօթն մու-

ղապիլայ է, և ի թաստիսի մէջ վաթսուեն տարաճայ պիտի լինի, և ի թարպեհին մէջն եօթանասուեն տարաճայ է, և ի թաթլիթն հարիւր քսան տարաճայ է, և մուղապիլէն հարիւր ութսուեն տարաճայ է: Եւ ի երկրորդ պուռնն, և յութերորդ պուռնն, և վեցերորդ պուռնն, և երկոտասաներորդ պուռնն հայեցք չունին և սաղիթ կոչին: Եւ թասթիսն և թաթլիթն սիրելութեան հայեցք է և թարպեհն և մուղապիլան չարկամութեան հայեցք է: Ու մուղարինան, թէ աղեկ աստղ է, նայ աղեկ, թէ վատ աստղ է, նայ վատ: Ու թաստիսն այսպէս է ու խոյն կու հայի Եկաւորն և ի Ջրհոսն, և թարպեհն այն է, որ խոյն հայի Առիւծն և յԱղեղնաւորն: Եւ մուղապիլէն այն է, որ հայի Կշեռն և այն պուռնն, որ սաղիթ են և հայեցք չունին: Յուլն, Չուկն, Կուսն, Կարիճն(45ա) զինչ պուռն որ ցերեկն երկուքն մեկ ազգ լինին և կամ յարեկից երկուքն մեկ ազգ լինին և երկուք յիրար հայեցք չունենան, և այն զէտ Եկաւորն և խեցգետինն լինի: Եւ զետ Յուլն զետ Առիւծն լինի և զետ խոյն և զետ Չուկն լինի և այս այսպէս է, որ զխոյին յառաջի տարաճն ի Չկան երեսուեն հայեցք չունի և երկու և ի մետասան, այլ ամէն պուռնն այս ցեղ ոճով են: Պիտի մեկ դեհն յառաջ կերթայ և մեկ դեհն յետ: Եւ Ապուամաշարն թէ ամէն երկրորդ պուռն, որ մէկ աստղ եր, մուֆեխի տաղիլայ կոչի: Եւ ի խոյին յառաջի տարաճն հիւսիսային կոչի: Եւ յառաջի տարաճայէն Կշուին մինչև առաջի տարաճն խոյին հարաւային կոչի, և այս որ հիւսիսի է, լաւ է քան հարաւային, և զինչ շէն կայ ի հիւսիսոյ դեհն է, և այս պուռնն որ բարձր է, և այն որ հար(45բ)աւոյ դեհն է, ցած է: Եւ յառաջի տարաճայէն խեցգետինն մինչև յառաջի տարաճն:

Այծեղջիւրն յԱրեգական ի ցածութիւն կերթայ, որ է հարաւային: Եւ յառաջի տարածէն Այծեղջիւրին մինչև յառաջի տարածն Խեցգետինն, այն որ ավճ ասեն Արեգականն, որ ի բարձրութիւն կելնէ, և բարձրութիւն լաւ է քան զցածութիւն:

Այլ ցուցումն մութալիթային:

Խոյն, Առիւծն, Աղեղնաւորն հրային են: Եւ Խոյն և զինչ կրակ որ կայ ի վառման է և Առիւծն ունի զայն որ ի ծառն է և ի քարն է, և Աղեղնաւորն ունի զտաքութիւն ի կենդանիքն: Յուլն և Կոյսն, Այծեղջիւրն հողային է: Եւ Յուլն ունի զայն որդն, որ ունդ չունի և Կոյսն ունի զհնդովն և ապա դեռ չէ լինի հասել: Եւ Այծեղջիւրն ունի և զայն հնդովն, որ հասած լինի: Եւ Զավզան և Կշեռն (46ա) և Զրհոսն հողմային: Եկաւորն ունի զինչ վնասակար քամի կայ, Կշեռն ունի զինչ անուժ հողմն կայ, որ սնուցանէ զպտղաբերքն, և Զրհոսն ունի զգնացման ջրերն:

Խեցգետինն և Կարիճն և Զուկն ջրային է: Խեցգետինն ունի զինչ աղի ջուր կայ և հոտած: Եւ Կարիճն ունի զգետերն և զառվնին որ կու ջրեն և զհեղեղն:

Զուկն ունի զինչ ժողված ջուր կայ և զանուշ մրգերն:

Ապա և ցուցումն վասն աշխարհիս: Զինչ շէն կայ՝ չորս բաժին է արած զինչ լայնքն է ի խատիստիվայէն վաթսուն վեց տարածայ դէպ ի հիւսիս շէն կայ, և իր յերկայնքն յարեմտից դիհէն, որ շէն կայ, մինչև յարեւելք որ շէնն կու հատնի՝ հարիւր ութսուն տարածայ է, և որ շինուցն մէջն իր յերկայնքն իննսուն տարածայ է և լայնքն երեսուն երեք դարածայ է: Եւ այն տեղն, որ լայնքն քան զերեսուն երեք պակ(46բ)աս է

և իւր յերկայնքն քան զիննսուն պակաս է, նայ այն արեմտից և հարաւոյ կոչի, եւ այն որ լայնքն քան զերեսուն երեք յաւելի է և յերկայնքն քան զիննսուն՝ նայ այն յարեւելից և հիւսիսոյ կոչի: Եւ այն տեղն որ իւր լայնքն յաւելի է քան զերեսուներեք և յերկայնքն պակ(46բ)աս է քան զիննսուն, այն տեղացն յարեւելից ասեն և հարաւոյ, ամ զայսոքիկ իմացիր, որ զինչ կրակային մութալիթ կայ, այն զայն բաժինն ունի, որ յարեւելից և հիւսիսոյ է: Եւ այն որ հողային է, որ ունի յարեւելից և հարաւոյ է: Եւ այն մութալիթային, որ ջրային է, ունի զարեմտից ի հիւսիսոյ կողմն է: Այն մութալիթային, որ հողային է, ունի զարեմտից զ(հ)արաւոյն:

Այլ դուռն վասն երկնուցն, որ զերկինքն չորսի բաժնած է, և այն որ տեսաք զտ(47ա)արին չորսի բաժնած է: Խոյն, Յուլն, Եկաւորն գարնան է: Խեցգետինն, Առիւծն, Կոյսն ամառն է: Կշեռն, Կարիճն, Աղեղնաւորն աշնան է: Այծեղջիւրն, Զրհոսն, Զուկն ձմեռան է: Եւ այլ տեսաք զայս բաժինքս, որ յառաջ կայ, և մէջ կայ, և վերջ կայ, նայ հանօք իմացաք որ երկինքն տասներկու կենդանակերպ կայ: Եւ տեսաք զԽոյն յերբ յԱրեգական յինքն կու մտէ, ձմեռան գարուն փոխի, և տեսաք զԽեցգետին, երբ Արեգական յինք կու մտէ, գարնան ամառն կու լինի, և տեսաք զԿշեռն երբ Արեգական յինքն կու մտէ, նա ամառն աշուն փոխի և տեսաք զԱյծեղջիւրն, որ երբ Արեգական յինքն կու մտէ, նայ աշնան ձմեռն կու փոխի: Եւ մեք այնով իմացաք որ այս չորս պուռճի մուկալիպ է, որ կու փոխի տեղաց տեղ, որ(47բ) կոչի փոխ: Յուլն և Առիւծն և Կարիճն և Զրհոսն տեսաք, որ չէր փոխիր ի ժամանակէն,

նայ մեք այնով իմացաք, որ թէպէտ է որ կոչի հաստատա: Եկաւորն, Կոյսն, Աղեղնաւորն, Զուկն տուլծասատան է, որ կոչի երկու մարմին, զի Եկաւորն կէս գարուն է, որ Արեգակն ի ներս է ու կէսն ամառն: Եւ նոյնպէս Կոյսն կէսն ամառն և կէսն աշնան: Նոյնպես և Աղեղնաւորն կէսն աշնան և կէսն ձմռան, և նոյնպէս զԶուկն կէսն ձմռան և կէսն գարնան:

Մուկնդապիլ պոճերն ցուցանէ ի վերայ սպրկութեան և գիտութեան և անդ ի ճիւղորու, և այն որ թէ պէլթն պրճերուն ցուցանէ ի վերայ հաստատութեան և խելօքութեան ունսեֆ և սիրելութեան, և սապու և զտուլծասատանն լինի թեթև ու սիրէ զթամաշայ և ծաղր և փոխի իրաց իրք(48ա) շուտ, և թէ պիթ պրճերն լաւ է քան զտուլծասատան և զմուկնդապիլն:

Ասացաք զինչ պոճերոյն կայ, և ասկից ի վեր ասենք զաստղերուն զգործքն: Ասենք և իմացիր, որ աստղն զէտ հոգի է և պուրճն զէտ մարմինն, և որպէս մարմինն որ ազգեազգէն և նոյնպէս և հոգի է, նայ մարմնոյն շնորհիւն ազգեազգ կու դառնայ և այլ հանց ցեղ յորժամն կու խնդայ և ժամ կու աղճի, և մարդկանց բընութենէն ազգ ազգէն՝ նայ հոգին այնոր շնորհիւն ազգ ազգ կու դառնայ, նոյնպէսն աստղերն ամէն պուրճ ազգմն աւուրք կառնեն:

Ծապ որ ցուցանէ զսիֆաթն յոթ աստղին: Եւ այլ իմացիր որ յերկինքն ոչ հով կայ և ոչ տաք և ոչ չոր և ոչ գէճ, և այն եօթ բնութիւն, ապա իրենց աւուրքն ոչ առն(48բ) են, այն առնէ հովութիւն և տաք, և գէճ, և չոր: Եւ են այս աստղերս կենդանի խօսուն և իւրեանց եխթիարովն, որ կոչի կամք, և այնով կառնեն զբանն, և այլ իւրեանց բնութեներովն կառնեն զայս բաներն,

որպէս կրակն, որ իւր բնութիւնն այն է, որ տաքցնէ, և ջուրն հովցնէ, և այլ թէ ասեն ոմանքմն, թէ աստղերն ամեն լուս ունին, որ զինչ որ լուս լինի զինչ տաքցնէ և տաքցնող է, նայ պիտէր ամեն աստղերն տաքցնող լինային, դուք է՞ր ասէք, թէ կէսն հով է և կեսն տաք:

Պատասխանի, որ կու տեսնու՞մք, զէտ Զոհայլն որ իւր լուսն քան զայլոց քիչ է և մթնագուն է, նայ մեք այնով գիտենք որ նայ քան զայլն հով է, ամպատեհն է հիմայ որ յիշենք զբնութեներն զաստղերուն, թէ ամէն մեկ ինչ իր ունին, (49ա) ամ տեսաք զկրակին գունն կարմիր և ունի մաղձերուն զսաֆրան: Եւ տեսաք զջուրն որպէս ունի զպալղամն: Եւ տեսաք զհողին գոյնն մթնագոյն ունի զսավդայն, և տեսաք զհաւան, որ գունն չունի, ունի զարիւնն, և այլ երբ տեսաք Զոհայլն, որ մթնագուն է, նայ մեք յիմացաք որ ունի զհողն ու զսավդան, ու տեսաք զՄուշթարին որ իւր լուսն քան Զոհայլն պայծառ է և իւր դեղնութիւն քիչ մի, նայ մեք այնով իմացաք, որ ծայր մի տաքութիւն կու զարնէ, և տեսաք զՄառեխն, որ ի գոյնն կարմիր է զէտ զկրակ, նայ ամէնք զկրակին բնութիւնն ունի, որ է տաք և չոր: Արեգակն այլ վայր կարմիր է զետ կրակ, նայ մեք ասացաք տաք և չոր, ու տեսաք զմեզ, զոր կու տաքցնէ և կու ցամքցնէ, ու տեսաք Զօհրան որ իւր գունն (49բ) խառնած է սպիտակութիւն և ի դեղնութիւն, և սպիտակն յաւելի է ինք, նայ մեք այնով իմացաք, որ իւր բնութիւնն միջակ է ընդ տաք և ընդ հով, և հովութիւնն աւելի է: Տեսաք զՕտարիտն, որ ամէն ժամ ազգ մի կու լինի, նայ մեք այնով իմացաք, որ ինք բնութիւնն չունի: Ամէն աստղ որ հայի՞ զիւր բնութիւնն առնու: Եւ տեսաք զԼուսին որպես էր, այ-

նով իմացաք, որ ինքն հով ու գէճ էր: Եւ այլ տեսաք, որ Արեգական քան զամէն աստղեր մեծ էր, նայ մենք ամէն այնով իմացաք, որ նորայ Ֆելն յաւելի է յաշխարհս, այլ գտաք քան զնայ պակաս զՄուշթարին և այլ պակաս քան զնայ Ձոհալն, և այլ պակաս քան զնայ Մառեխն և այլ պակաս Լուսինն, և այլ պակաս Ձոհրայն, և այլ պակաս Փայլածուն, և այլ գտաք զԱրեգական, որ կու տաքցնէ և կու չորցնէ(50ա) և Լուսին հովցնէ և զիճցնէ: Եւ տեսաք զԱրեգական, որ ի չորրորդ երկինքն է, ոչ խիստ հեռու է և ոչ խիստ մօտ:

Մեկ տարին զՓայլաքն զամէնն ի շուրջ կու գայ: Վասն այնորիկ գործն յաշխարհս յաւելի է: Եւ տեսաք քան զերկինքն ի վեր զՀրատն, և չէ շատ ի հեռու յաշխարհէս այնով իմացաք, որ նայ յաւելի գործք ունի: Եւ տեսաք Ձոհալն յոթներորդ երկինք է և հեռու է և յուշ ի շուրջ կուգայ զՓայլաքն, և յամէն պուրճ երկու տարու կէս կու կենայ, վասն այն յուշ առնէ զիւր թասխիրն, ապա եփ առնէ՝ խիստ առնէ: Եւ այլ տեսաք զԼուսնթագին, որ ի Ձոհալն ի մօտ է և ինքն մեծ է, նայ մեք այնով իմացաք, որ նորա Ֆելն քան զնորայն շատ է, և զԼուսին տեսաք որ աշխարհիս ի մօտէ և զերկինքն շուտ ի շուրջ կուգայ, նայ մեք այնով իմացաք, որ նորա Ֆելն յաւելի է, ապայ (50բ) յաւելի ջուր, և ի հողոյ հանօք եղաւ, որ Լուսինն շնորհաւոր եղաւ, ամբն և կայծակն և այլ ի հետ իւրենն Փայլածուն և Լուսաբեր և իւրենց բնութեներն գէճ են. հանօք այս երեք աստղս անձրևային կոչի: Եւ Լուսաբեր ներքև Արեգականն է, գտաքութիւն Արեգակէն կառնու, հանօք ոմանք ասեն իւրն թէ տաք և գէճ, ու տաքութիւն կենդանութիւն է: Վասն այն ասացին, թէ

ինքն աղեկ է, և Լուսին հեռու է Արեգակնէն, հանօք է հով, և Փայլածուն, որ ինքն փոքր է քան զամէն աստղերն, նա իւր փոքրութեան համար ոչ կարէ տաքցնել և ոչ կարէ հովցնել, քաւել թէ այլ աստղի ըթիսալ առնէ, որ զնորայ բնութիւնն առնու, և զնորայ Ֆելն հանօք ասացին, թէ հետ աղէկին աղեկ է և հետ վատին վատ է, և հետ որցուն որց և հետ էգին էգ, ու հան(51ա)օք որ ինք ի պոճէ պուրճ շուտ կերթայ և յոր պուրճ կու մտնոյ, որ զնորայ բնութիւնն կառնու ու ըռահճեճ և մուստաղիմ շուտ կու լինի, մեք այնօք ասաց(աք), թէ ինքն հողմային է:

Այլ դուռն և ճանապարհ աստղերուն: Հուքմին տեսաք Ձոհալն, որ երբ ի վերա տարուն տալեհին հուքմին ուժով կու լինի և Մառեխն ի ինքն ուժով հայեցք չկա լնուլ, նայ այն տարին խիստ ցուրտ կու լինի ու ճմեռն յերկար, երբ Հրատ ուժով լինենայ, ի տարուն տալեհն զՁոհալն ոչ ուժով կու կալնու և ոչ հայեցք, նայ այն ճմեռն ցուրտ պակաս լինի և ամառն խիստ շող լինի, և հանցեղ որ կենդանիք հալաք կու լինան ի շողուն, որ երբ Մուշթարին և Ձոհրան ի տարուն տալեհն ուժ կալնու և Արեգական հայեցքն Ձոհալին(51բ) և Լուսնթագին յիւրենք չհային, և մենք կու տեսնունք, որ այն տարին ոչ խիստ ցուրտ և ոչ խիստ տաք լինի, միջակ լինի, և երբ Փայլածուն տարուն տալեհն ուժով կու լինի և Արեգական հայեցք կալնու, նայ այն տարին հաւայն խիստ ազգ ազգ կու փոխի, ու Լուսին յայնժամ կորուստ կու լինի հետ Արեգական մինչև յայն ժամ, որ թարպեհ առնէ յետ Արեգականն: Նայ իւր բնութիւն հով ու գէճ է ի թարպեհէն մինչև ի յայն, որ կու լցվի տաք և գէճ, և ի մուղապիլայն

մինչև ի մուս թարպեհն տաք է և չոր: Եւ անկից մինչև լրումն հով է և չոր: Մեք գայս այսով իմացաք, որ երբ Լուսին ի վերայ տարուն տահլեհին ուժով կու լինի ու հայեցքն Արեգական է, նայ յայն ժամ Ֆէյլն նոյնպէս լինի, որ ասացաք գառաջին, ու Զոհալ ու Լուսնթագ ու Հրատ յայն ժամ (52ա) որ Արեգակնէն կու բաժնին մինչև այն, որ կու կանկնի, նոր ըռաջէ հուգեն լինել իւրեաց բնութիւն գէճ, և անդի մինչև ի յայն որ մուղապիլայ կառնեն հետ Արեգական իւրեանց բնութիւն տաք է, և ի մուղապիլայէն մինչև ի յայն որ կու կանկնին, որ մուսթախիմ լինին, որ կոչի ըղորդումն, չորութիւն կառնեն և անդի մինչև ի յայն, որ Արեգակն կու գան, հովութիւն կառնեն, և Լուսաբեր ու Փայլածուի ի յայնու, որ ի հետ Արեգակէն կու բաժնին մինչև յայն ժամն, որ կու կանկնին, որ է ըռաճէհ լինին, ալվար մօտ Արեգակ կու գան ըռաճեհէն, կու տաքցնէ և անկի մինչև ի վերջ Արեգական կու երթան, մինչ որ կու կանկնին, չորութիւն կառնեն, և ան ի վեր մինչ որ մօտ Արեգակն կու գան՝ կու հովցնեն:

Այլ դուռն որ ցուցանեմք զաղէկն և ըզվատն աստղերուն: Տեսաք որ Զոհալն և Հրատն (52բ) վատ են և այնով իրենց վատ ասացաք, որ Զոհալին բնութիւն հով է և չոր և կենդանութիւն տաքութենով և գիճութենով է, և այն կենդանութեան չարկամ է, հանց Հրատ յաւելի տաք և չոր է և այրող է, ու Մուշթարին և Զոհրեն տաք են և գէճ միջակ, վասն այն աղեկ են կենդանութեան: Թէ հարցանեն ի քեզ, գիտունք ասացել են, թէ գինչ յերկինքն կայ՝ ամէն աղեկ են, և վատն ի յաշխարհս է, ի վերն չկայ, ամ դուք է՞ր ասէք թէ Զոհալ և Հրատ վատ են: Պատասխնի. Զոհալին և

Հրատին բնութիւնն հանց կուգէ, որ հողն հող կենայ, և ջուրն ջուր, հողմն հողմն կենայ, և կրակն կրակ, ու խառնակումն չի լինի, և այսոց ոչ կենդանութիւն լինի և ոչ բուս, և Մուշթարուն և Զոհրեին բնութիւն կու բերէ, որ խառնակումն լինի և կենդանի և բուս, և Զոհալն և Հրատին այն իւրեանց (53ա) բնութիւն յաւելի հով և չոր է, ու տաք և չոր կու աւիրեն գայս խառնակումս, նայ մօտ ի խառնիլն վատ են և մօտ ի միաւորելն են և Զոհրե և Մուշթարի մօտ ի խառնակումս աղեկեն և մօտ միաւորիլն վատ է: Եւ Աստուած ստեղծեց զԶոհալն վեր քան զամենն, զի նայ զիմաւորութիւն ունի, ու միաւորութիւն յառաջ է քան զխառնակումն: Եւ այլ ի հետ զԼուսնթագ եղիր, զի յետև միաւորելոյ խառնակումն եղև, և դրին զՄուշթարին մեծ աղէկ և Զոհրե փոքր աղեկ վասն այն, զի նայ մեծ է քան զԶոհրե և յուշ ի շուրջ կու գայ, ու դրին զԶոհալն մեծ վատ և զՀրատ փոքր վատ վասն այն, զի Մառեխն շուտ շուրջ կու գայ և Զոհալն յուշ: Եւ եղ Աստուած զՄուշթարինն ներքև Զոհալին, որ զիր շառն պակասեցնէ, որ չի թողու որ խիստ շատ առնէ ու զԶոհրե յանդիման Մառեխին, որ չթողու որ խիստ շատ առնէ (53բ) և մեծ աղէկ, վասն այն եղաւ Լուսնթագ, որ գինչ հաւատք կայ ու նամայ, զհաշիւ ինքն ունի, ու Լուսնթագ է տաքութիւն զԶոհալին հովութիւն կու կտրէ, ու Լուսաբերին գիճութիւն զՄառեխին չորութիւն կու կտրէ, ու Արեգակն ու քան զամենն մեծ եղաւ աստղերն, որ մօտ ինքն երթայն՝ այրին, և երբ գատ կենան՝ յիւր լուսոյն մահրում լինին: Եւ այլ որ ի տեղմն, որ Արեգակն յինքն խիստ ի մօտ կու լինի, նայ զինքն կու այրէ, որպէս ի Հունդըստան

և այն տեղերն, որ յիւրմէն հեռու է, շէնք չկայ և ոչ կենդանի, որպէս ի հիւսիսոյ կողմն, և Լուսին և Արեգակ ի թաթլիթ ու թազթիս գաղէկն, և թարպեխ և մուղապիլէ և մուղարինէ վատ են Լուսնին: Վասն այն եղաւ զէտ Արեգակն զիրենն ընկերէ, և Զոհրե հետ աղեկին աղեկ է և հետ վատին վատ:

Այլ դուռն, որ ցուցանէ զաստղեր(54ա)ուն զգործքն, ի աղէկ և ի վատ: Երեք ազգ է. առաջին այն է, որ մի մի աղէկութիւն առնէ, որպէս այն որ մեկ մի մեկիմն իրք առնու, նայ առնողին աղէկ է և տվողին վատ: Երկրորդ այն է, որ մեկ աստղէն երկու ֆել կու ելնէ, մին աղեկ և մեկ վատ, որպէս Զոհալն երբ ի վերայ տարուն ուժով լինի, նայ զայն տարին խիստ ցուրտ, այն է նայ այն երկիրն որ հով է՝ խիստ ցուրտ լինի, և վատ է այն երկիրն, և այն որ տաք է անշող է, նայ անուշ լինի, և այն աղէկ է: Այլ ուրդի աստղեր ի պուրճ մի որ երկիրմն բաժին ցորեկվան լինի և երկիրմն գիշերվան, նոցա ազգմն հուքմն առնեն և նոցա ազգն: Երրորդ այն է, որ երբ Արեգակն ի պուրճն մտէ՝ ի յայն երկիրն մօտ է, նայ կու տաքցնէ զհաւան և կու բուսցնէ զբուսն և զպտուղն, և երբ ի պուրճ մի այլ կու մտնոյ, որ ի յերկիր մի մօտ, այլ է կու (54բ) տաքցնէ զհաւան և աղէկ կու լինի, և այն երկիրն որ հեռացաւ, այն կու պաղի: Եւ այլ աստղերուն հուքմն ազգ և ազգ կու լինի որպէս աստղմն, որ ի տալեհն լինի, ազգ մի հուքմն առնէ և երկու տունն, ազգ մի և երեք տունն, ազգ մի և այլ նոյնպէս: Եւ աղէկն և վատն աստղերոյն երկու ազգ. ասվի մեկն այն որ վատ է՝ զամէնն վատ է, և որն աղէկ է՝ զամենն աղէկ է: Եւ որ վատ աստղն իւր տունն լինի կամ իւր շարաֆն, նայ աղէկ դառնայ, որպէս Զոհալն,

որ վատ է, և երբ ցորեկն վերև գետնիս լինի ու լինի արեւելից և լինի աղէկ տեղ, յայնժամ փոխի աղեկութիւն: Զի վասն այնոր, որ իւր բնութիւն հով է, երբ արեւելից ելանէ և որ պուրճ լինի, նայ տաքցնէ զիւր տեղն և զհովութիւն և աղեկցնէ, ու երբ Զոհալ ի հպուտն լինի և կամ ի ոպալն կամ ի էք (55ա) պուռճեր, նայ այլ վատնայ: Եւ այսպէս զամէն աստղերն հուքմն արաք: Լուսնթագ և Լուսաբեր աղեկ են, ապա յերբ ի հպուտն ուրդին և կամ ի վուպալն կամ ի էգ պուռճ, նայ իրենց աղէկութիւն որ տան, յետև վատ լինի, ու երբ աղէկ տնվի լինի իւր շարաֆին տունն, նայ զինչ աղէկութիւն խիստ լինի և աղէկ: Եւ կան աստղերուս որ շատ փոխին իւրեանց բնութէնէն ի այլ բնութիւն, կայ որ յուշ, որպէս Զոհալն, որ երբ յիւրմէն ֆելմն գայ կամ վատ կամ աղէկ, նայ յերբ այլ աստղ հայի, յինք չկարէ զիւր ֆէյլն պատլել, նոյն մէն որ Մուշթարին, որ երբ այլ աստղ յինք հայի, չկարէ զինք պատլել, և այլ պաղի աստղերն շուտ փոխին ի բնութենէն ի յայլ բնութիւն: Եւ այլ իմացիր, որ երբ վատ աստղն թէ զինք աղէկութիւն տայ՝ ինք աղէկ չի կոչվի, զի իւր (55բ) բնութիւն ի վերայ վատութեան է, և այն աղէկութիւն, որ տայ մարդուն, իւրն ըռանճն բերէ, և վատ, որ ան աղէկն զայն վատն չաժենայ: Եւ իսկի ինք խնդումն չտեսնու և նոյնպէս աղեկ աստղերն, եփ ի վերայ վատի հուքմ առնես, զվատութիւն հեշտացնէ և վատ տեսնուն:

Այլ դուռն, որ ցուցանէ զաստղերուն զբնութիւն:

Զոհալն հով է և չոր, և իւր հովութիւն յաւելի է քան զչորութիւն:

Լուսնթագ տաք է և գէճ, և իւր տաքութիւն յաւելի է քան զգիճութիւն:

Հրատն տաք է և չոր, և իւր չորութիւն յաւելի է քան զտաքութիւն:

Արեգակն տաք է և չոր, և իւր տաքութիւն յաւելի է քան զչորութիւն:

Լուսաբերն հով է և գէճ, և իւր գիճութիւն աւելի է քան զհովութիւն:

Փայլածուն բնութիւն չունի, ուր հայի՝ զիր բնութիւն առնու:

Լուսինն հով է և գէճ (56ա), իւր գիճութիւն յաւելի է քան զհովութիւն:

Ռասն տաք է, աղէկ է, տալիլ առնէ ի վերայ թագաւորաց և գլխաւորաց, ու Լուսին յիւրմէն կու կայծանայ: Եւ ասացել են ոմանք, թէ Ռասն հետ աղէկին զաղէկութիւն կու աւելցնէ և հետ վատին զվատութիւն կու աւելցնէ, և Դանապն յետ աղէկին զաղէկութիւն կու պակասեցնէ և յետ վատին զվատութիւն, եւ զինչ ասող կայ, որ ի պուրճն կու մտէ՝ զիւր բնութիւն կու փոխէ, և յերբ յարեւելից լինի՝ տաքցնէ, և թէ տաք է կու տաքցնէ և թէ հով է՝ կու հովցնէ, ըզվատն աղէկ փոխէ ու զաղէկն՝ վատ:

Այլ դուռն, որ ցուցանէ զորճն և յէգն ասողերուն:

Ձոհալ, Լուսնթագ, Հրատ և Արեգակն որց են: Լուսաբեր և Լուսին՝ էգ: Եւ Օտարիտն հետ որճին որճ է և հետ էգին էգ է, յոր ասող որ հայի՝ զիր բնութիւն առնու: Ռասն որճ է (56բ) և Դանապն էգ է, և ամէն ասողէր որ մաղրիպի լինի, որ կոչի յարեւմտից, էգ է, և ամէն ասող, որ մաշրիղի լինի, որ կոչի յարեւելից, որճ է, և ամէն ասող, որ ի տալեհին մէջն և ի տասն տանի մէջն լինի՝ էգ է, և այն որ ի չորս տունն և ի եօթն տանն մէջն լինի՝ որճ է, և որ ի չորս տունն և տալեհին մէջն՝ էգ է:

Այլ դուռն, որ ցուցանէ զցորեկվան և զգիշերվան ասողերն:

Արեգակն և Լուսնթագն ցորեկվան են, զի տաք են, ու Լուսաբերն և Լուսինն՝ գիշերվան, զի գէճ են: Եւ Փայլածուն, թէ յարեւելից լինենայ, ցորեկվան է, և թէ յարեւմտից՝ գիշերվան: Ձոհալն և Հրատն: Ձոհալ՝ ցորեկվան և Հրատն՝ գիշերվան: Ու Ձոհալին հովութիւն կոտրէ զտաքութիւն, և Մառեխին (Հրատին) չորութիւն կոտրէ զնոցա գիճութիւն: Ռասն ցորեկվան է և Դանապն գիշերվան: (57ա) Ցորեկվան թագաւորն Արեգակն է և ցորեկն աղէկ Մուշթարին (Լուսաբերն) է, և վատն Ձոհալն է: Եւ գիշերվան թագաւորն Լուսին է և վատն Հրատն, և աղէկն Լուսաբերն և Օտարիտն, մէջ տիւ և գիշեր:

Այլ դուռն, որ ցուցանէ, թէ յարեւելից ասողն ինչ ցեղ է և յարեւմտից ինչ ցեղ է:

Եւ այն ասողն, որ քան զԱրեգակն յառաջ ելնէ, յարեւելից կոչի, և այն որ քան զԱրեգակն յետե իջնու՝ արեւմտից կոչի, և Ձոհալն և Հրատն մինչև վաթսուն տարածայ յառաջ ելնելուն և յետե իջնելուն յարեւելից և յարեւմտից կոչին, Ձոհրան քառասուն հինգ տարածայ, յՕտարիտն քսան հինգ: Եւ այս երկու ասողիս հեռութիւնն ի Արեգակէն հանչափ է:

Այլ դուռն, որ ցուցանէ զոր ինչ աստ նորս կայ:

Եօթն ասողիս բաժնած է և է իրք, որ մէկ ասող ունի զինքն, և է որ երկու ասող, և կայ, որ այլ շատ, որպէս զԱֆրոն (57բ) Ձոհալին իր հովութենին համար և Փայլածուն իւր լեղութեան համար, որպէս Ձոհրան, որ ունի զամեն ծաղիկ: Ու զէտ Մառեխն որ ունի զվարդն և զփուշն և կարմրութիւնն, եւ այլ յոթ ասողն բաժին

ուսին ամենայն իրք, որպէս գծառիտակն Արեգակին է, և մազմզուկն Զոհալին է, և փուշն և կեղևն և ճիւղն Մառետին է, և ծաղիկն Զոհրային է և պտուղն Մուշթարէ, և տերևն Լուսինն և կուտն Օտարիտին:

Առաջին դուռն, որ յիշենք զհամերն, որ աստղերն ունին:

Զոհալն ունի զփոթոթն և զթըթուն ու զծանր համն և զհոտածն: Եւ Մուշթարին ունի զքաղց(ր) և զանոյշ և զմուզն: Եւ Հրատ ունի զլեղին, Արեգակն ունի զգազանն, Լուսաբերն ունի զգէրն: Փայլածուն ունի զինչ համ կայ որ իրար լինի խառնած: Լուսին ունի զաղի և զանհամն և զայ(58ա)նոք, որ քիչ թըթու լինին:

Երկրորդ դուռն, որ ցուցանէ ըզգուններն: Զոհալն ունի զսև ու զառճիճ գոյն և զմթնագուն: Լուսնթագ ունի զկապուտ գուն, և որպէս դեղին, զայն է և բաց գուն: Հրատ կարմրագուն: Արեգակն ունի զխարտեշութիւն ու զգեղնութիւն և զաղվորութիւն: Լուսաբեր ունի զսպիտակ և զկանանչ: Փայլածուն ունի զխառնած գուններն և զջրագոյն: Լուսին զսպիտակ գուն՝ խառնած հետ դեղնի և կարմրի:

Երրորդ դուռն: Զոհալն ունի զինչ որ հոփու պինտ և չոր կայ: Լուսնթագ ունի զինչ որ աղէկ կայ և կակուղ: Հրատն ունի զինչ որ թեզ իրք կայ: Արեգակն ունի զինչ մեծ իրք կայ: Լուսաբերն ունի զինչ կակուղ իրք կայ և աղվոր: Փայլածուն ունի զինչ խառնած իրք կայ, և Լուսին ունի զինչ թանձր կայ և գէճ:

Չորրորդ դուռն, որ ցուցանէ զչափն: Զոհալն ունի զերկանութիւն և զպնդութիւն և զծանր հոգութիւն: (58բ) Լուսնթագն ունի զայն որ ոչ յերկան է և ոչ կարճ, Հրատն ունի զերկայնութիւնն և զչորութիւն և

զխոշորութիւն: Արեգակն ունի զբոլորութիւն և զինչ որ փայլայ: Լուսաբեր միջակ լինի և կակուղ: Փայլածուն ժամ յերկան և ժամ կարճ: Լուսին հաւասար լինի և գէճ բնութիւն:

Հինգերորդ դուռն, որ յիշէ գտեղերն: Զոհալն ունի զչոր լերունք, որ ի հօն իրք չի բուսնիլ: Լուսնթագ ունի զկակուղ գետին: Հրատն ունի զխոշոր գետին: Արեգակն ունի զլերունք, որ քաներ կան: Լուսաբերն ունի զգետին, որ ինք ջրեր և գետեր կան: Փայլածուն ունի զինչ որ աւազ տեղ կայ: Լուսին ունի զինչ որ դուր գետին կայ:

Վեցերորդ դուռն ցուցանէ գտեղերն և զկեցուածքն: Զոհալն ունի զգետն, փորերն և զգերեզմանքն, ու ջրհորներն և զհին շէնքերն, և զքար տեղերն և զախորներն, որ կապվին ի յինք (59ա) պախր և էշ և փեղ: Եւ Լուսնթագ ունի զշէն տեղեր և զայն տեղերն, որ մեծ մարդիկք նստին, և զեկեղեցիք և զմըզկըթնի, և զամենայն աղօթից տեղեր, ու զայն տեղերն, որ ինք իրք ուսնին: Հրատ ունի զայն տեղերն, որ կրակ վառվի, և զայն, որ կրակ ելնէ, և զայն, որ կաւէ աման գուգեն: Արեգակն ունի զայն տեղերն, որ այն թագաւորք նստին: Լուսաբերն ունի զբարձր տեղեր և զայն տեղերն, որ ինք ջուր ելնէ: Փայլածուն ունի զփողոցներն ու զայն տեղերն որ գրագէտք մարդիք նստին, և զայն տեղերն, որ նաղչ առնեն և զածվնիքն: Լուսին ունի զփոյթ տեղերն ու զայն, որ ծառ շատ բուսնի:

Եւթներորդ դուռն, որ ցուցանէ զերկրներն:

Զոհալն ունի զՍնդ ու զՀնդիք մինչև և ի գնճն, և զՀապաշ, ու զԽպտիքն, և զՍևերն, զայն դեհն, որ արեմտից և հարաւոյ մէջն է, ու զԱման (59բ) և զարեմուտք: Լուսնթագն ունի զՊաղտատ և զԽորա-

սան և զՊարպար մինչև յարևմուտք: Հրատն ունի զՇամ և Հոամք և զայն տեղերն, որ արևմտից և հիւսուսոյ է մէջն է: Արեգական ունի զՀէճագ և զԶին և ըզԳերեգման և զԼենան և զՀայոց Տունն և զՏայլամ: Լուսաբերն ունի զԱրապ և զՀճագ և զԾովեգերքն: Փայլածուն ունի զՄաքայ և զՄատինայ և զԵրախ և զԿելան և զՏապարիստան և Մար: Լուսին ունի զՄուսուլ և զԱտրպայեկան, զամէն մարդ ի ամէն տեղ:

Ութերորդ դուռն, որ յիշէ զքաներն:

Զոհալն ունի զմուրտասանք և գերկթին քաֆն և զինչ սև քար լինի: Լուսնթագ ունի զմարդաշիթան և զմարագին և զքուքուրթն և զառնեխն: Հրատ ունի զխնդմնդ քարն ու զՂոսն բատինճն և զզնաջաֆրն: Արեգական ունի զլաճվարդն, զրուխամն, զապիկին, զսանդալօսն:

(60ա) Լուսաբերն ունի զմարդաշիթան և զծարուրն: Փայլածուն ունի զպիզական և զքարուպան և զառնեխն: Լուսին ունի զապիկին և ըզգահնան ի ֆուանգին և զինչ որպէս քար կայ:

Ինն դուռն, որ յիշէ զինչ քարերուն ելնէ:

Զոհալն ունի զառճիճն, Լուսնթագն ունի զկլայեկն ու զսպետրոն և զալմագն և զգեղին պրղինճն: Հրատն ունի զգերկաթն և զպղինճն: Արեգական ունի զեհաղութն և զպէճուտակն ու ոսկին: Լուսաբերն ունի զմարգարիտն և զճուզն և զինչ հալաւ, որ ինքն ականերով լինի զուգած և զինչ որ ոսկով աման լինի: Փայլածուն ունի զփերուզան և զգէղին պղինճն: Լուսին ունի զմարգարիտ և զպլատն և զարծաթն և զինչ որ մատնի լինի:

Տասներորդ դուռն, որ յիշէ զմարգանգն և զհնդրանքն:

Զոհալն ունի զպղպեղ և զճիթապտուղն և զսինծն և զթրթու, (60բ) զքաղցր նուռն և զխնծորն, ցորենն, զգարին, զբրինծն, զշուշման, զսիսեռն: Հրատն ունի զինչ կրակ իրք կայ և չոր, Արեգական ունի զինչ կարմիր կայ: Լուսաբերն ունի զթուզն և զխաղող և զխիար և զշինխիար և զսեխ: Փայլածուն ունի զբակլան և զմաշն և զքարաւէն: Լուսին ունի զխիարն և զշինխիարն և զսեխն:

Մետասան դուռն, որ յիշէ զծառերն:

Զոհալն ունի զգղթորն և զհելիլէճն, զինչ ծառ, որ պտուղ գէշ հոտ ունի: Լուսնթագն ունի զամենայն ծառ, որ քաղցր պտուղ բերէ, և զթուզ և զմշմիշ և սալոր, Զոհրային ընկերն և զինչ նայ ունի և նայ: Հրատն ունի զինչ ծառ կայ, որ պտուղն տաք է և փուշ ունի, և լինի համն սուր: Արեգական ունի զինչ պտուղ, որ համն սուր լինի, որպէս ամբրաւն: Լուսաբերն ունի զինչ ծառ կայ, որ անուշ պտուղ ունի և հոտ որպէս խնծոր և սէրկեիլ: Փայլածուն ունի (61ա) զինչ որ խիստ ծառ կայ և քաղցր նուռն և խաղող:

Երկոտասան դուռն, որ յիշէ զբուսերն:

Զոհալն ունի զինչ հով և չոր հունդ կայ: Լուսնթագ ունի զինչ ծաղիկ, որ անուշ հոտ տայ, և վարդ, և զինչ խոտ որ անուշ հոտ ունի: Հրատն ունի զմանեխ և զքուռաթ և զսոխ և զսխտոր, զպատինջան և զկոտիմն և զսպանդն և զբողկն: Արեգական ունի զչաքրեղեգն և զինչ որ մանանայ իջնու և զթարանկուպինն: Լուսաբերն ունի զայն հունդն, որ ձէթ ելանէ: Փայլածուն ունի զինչ կանանչ խոտ կայ, որ բուսնի, և զհղէգն: Լուսին ունի զինչ ծառ, որ նկուն չի լինի, որպէս զբակլան և զբանբակ:

Երեքտասան դուռն, որ յիշէ գկերակուրն և գդե-
ղերն:

Ձոհալն ունի զինչ հով և չոր դեղ (61բ) կայ
թմրցնօղ, որ չորս տարածան լինի: Լուսնթագ ունի
տաք և գէճ կայ, որ մուհտատիլ լինի և ինքն օգտա-
կար մարդկաց: Հրատն ունի զինչ որ չորս տարածան
տաք և չոր կայ գենարար և մահաբեր: Արեգակն ունի
զինչ տաք, որ օգտակար լինի և ամէն տեղ զինքն բան
տանին: Լուսաբերն ունի զինչ որ մուհտատիլ հով ու
գէճ լինի, օգտակար և անուշ: Փայլածուն ունի զինչ
հով և չոր կայ և ժամ ժամ ինքն տնկին: Եւ Լուսին ու-
նի զինչ հով և գէճ կայ և բան զամէն չերթան:

Չորեքտասան դուռն, որ յիշէ գուժերն:

Ձոհալն զինչ զխոյաթի մասիքան, որ թարքմանի
ուժ բռնօղ: Լուսնթագ ունի գուժն գկերակրողն գաճե-
ցուցանողն: Հրատն ունի գայն, որ սիրտ հանէ: Արե-
գակն ունի գուժ գկենդանութիւն: Լուսաբերն ունի
գուժն (62ա) գամուսնութիւն: Փայլածուն ունի գուժն
գանդիճելոյն զխելացն: Լուսին ունի գուժն զբնութե-
ներուն:

Տասնհինգ դուռն, որ յիշէ ի վերայ չորեքոտանաց:
Ձոհալն ունի գայծն, գպախրէն, գկատուն, գմուկն,
գսամուրն, գսնճուֆն, գմեծ սև օձերն, գկորերն,
գլուն, գոթիսն, գբգեզն: Լուսնթագն ունի զինչ որ
կճղակաւոր է, գմարգն, զինչն որ անասուն աղուոր լի-
նի, սիրուն և անուշ միս: Հրատն ունի զինչ գունճն,
գխոզն, գճանճն, գչունն, զինչ վնասարար գազան կայ,
գօձերն: Արեգակն ունի գճիան, գոչխարն: Լուսաբեր
զինչ սիրուն անասուն կայ: Փայլածուն գլորին, գա-
ղուեսն, գլապստակն, զինչ փոքր էրէ կայ: Լուսին ու-

նի գուղտն, գպախրէն, զինչ որ հետ մարդոյն սովոր
լինի:

Տասնվեց դուռն, որ յիշէ զթուչունքն:

Ձոհալն ունի գայն(62բ)ոք, որ գիշերն թուչին,
գբուն, գմաշքթեն, գագուան, գճիճեուն, գճանճ: Լուսն-
թագն ունի զինչ կայ որ սև չէ և ուտի, որպէս գտու-
ուած և գաղաւնի, գտայուս, գհաւ: Հրատն ունի զինչ
որ կեռ կտուց կայ ու մսակեր և գկարմիր և գպիճակն:
Արեգակն գարծիւն: Լուսաբերն գարտուտն և գտատ-
րակն, զինչ որ ուտուի: Փայլածուն ունի գաղաւնին,
գճընճղուկն և զինչ ճագ, որ ի վերայ ջրի թուչի: Լու-
սին ունի գբազն ու գսագն:

Տասնևյոթ դուռն, որ յիշէ գօղուածնին:

Ձոհալն ունի գմագն, գմորթին, գըղունկն, գթեն,
գոսկրտին, գեղջրուին: Լուսնթագ ունի գչերիանին,
ըզղեղն, գաղեկ երեսն սիրէ, լինի խելօք: Հրատն ունի
գերակնին: Արեգակն ունի գսիրտն և գջղերն, գաջ դեհ
ի մարմնէն: Լուսաբեր ունի գմիսն և գճրագուն,
գլերզն և գսերմն: Փայլածուն ունի գգլուխն և գղեղն
և գայն երակնին սրթառ(63ա)նուն: Լուսին ունի
գմարմինն ճախ դեհն:

Տասնևութ դուռն, որ յիշէ զթուածնին:

Ձոհալն ունի աղէկ ճորտերն, գփայծաղն, գճնկներն:
Լուսնթագն ունի գանդամներն, գխոջակն: Հրատն ու-
նի գլլերքն, գլերթն և գլեղին, գերիկամունքն, որ է
պալջակն: Արեգակն ունի գգլուխն, և գկուրծքն, և
գաչքերն, և գբերանն: Լուսաբեր ունի գամօթն: Փայ-
լածուն ունի գլեգու: Լուսինն ունի գլլնիքն և գճեով-
նին:

Տասնևինն դուռն, որ յիշէ գզրուցն:

Ձոհալն ունի զլսելիքն: Լուսնթագն ունի զշօշափելիքն: Հրատն ունի զհոտն, Արեգական ունի զտեսն, Լուսաբերն ունի զհոտն, Փայլածուն ունի զդեմքն, Լուսին ունի զտեսն:

Քսան դուռն, որ յիշէ զանդամնին:

Ձոհալն ունի զաջ ականջն: Լուսնթագն ունի ճախ ականջն: Արեգական ունի զաջ աչքն: Լուսինն ունի ճախ աչքն: Հրատն ունի քնթի զաջ դեհն: Լուսաբեր՝ ճախ դեհն: Փայլածուն ունի լեզուն:

Քսանեմէկ դու(63բ)ռն, որ յիշէ զչափն և զկերպն:

Ձոհալն ունի զհալևորն, Լուսնթագն ունի զմիջական, Հրատն ունի զայն որ յառաջ ծաղկնուն, Արեգական ունի զկարծութիւն, ունի զմիջակ ումրն, Լուսաբերն ունի զպալղն, Փայլածուն ունի զտղայութիւնն, Լուսինն ունի զերախայութիւնն:

Քսանեկերկու դուռն, որ յիշէ զազգերն:

Ձոհալն ունի զաւաք պապն և զբարայն և զծառանին: Լուսնթագն ունի զտղայքն, Հրատն ունի զմեծ եղբայրքն, Արեգական ունի զհայրն զպարունայք, Լուսաբերն ունի զփոքր եղբայրն, Փայլածուն ունի զկնիկն և զկնկան ծառանին, Լուսինն ունի զքեւերքն և զմայրն, զմօրաքեւերքն:

Քսանեկերեք դուռն, որ յիշէ զմարդուն շաքլն:

Ձոհալն ունի զայն մարդն, որ վատատեսակ և վատ երես, մեծ գլուխ, փոքր աչք, արձակ բերան, թանձր շրթունք, շատ մազ սև (64ա) դուռն, մեծ ոտվի, կարճ մատունք: Լուսնթագն ունի աղէկ երես, աղեկ մարմին, մեծ աչք: Հրատն ունի փոքր աչք, փոքր ականջ, աչքն կապուտ, մազն կարմիր կամ խարտէշ, գազանահայեցք: Արեգական ունի գէր և սպիտակ քիչ մի խարտեշ ուժով մարմին:

Լուսաբերն ունի ծաղր երես, անուշ զրուց, սպիտակ ու կարմիր կշտէ, շատ միս, աղէկ աչքեր, սև մանր ականի: Փայլածուն ունի աղէկ աչք, թուխ երես, փոքր ճակատ, արձակ բերան, մանր ականներ, քիչ մորուք, մազն բարակ: Լուսինն ունի սպիտակ գոյն, ծաղր երես, աղէկ գոյն, բոլոր երես, աղէկ հայեցք:

Քսանեչորս դուռն:

Ձոհալն լինի վատ արարմուք, ուզէ մարդկաց վատն: Լուսնթագն լինի ըզորդ խօսք, ատէ զկուրն: Հրատն լաջաբունէ լինի, վատ լեզու: Արեգակ սիրէ (64բ) զսպրկութիւն, Լուսաբեր սիրէ զսպրկութիւն, զաղէկ հալաւն: Փայլածուն սիրէ զաղէկ հալաւն և սիրէ, որ աղէկ ասեն իւրն: Լուսինն լինի աղէկ սիրտ ու վախկուկ:

Քսանեհինգ դուռ, որ յիշէ զբնութեններն և զաւուրքն:

Ձոհալն ունի զտարպելութիւն, զդժուարութիւն, զմաղցն, զլացն, զուլմն, զաւիրութիւն: Լուսնթագն ունի զայն, որ մարդկան օգնէ յաղեկն և աղեկ ուզէ, որ ի հետ իրն լինի ով հաւատացեալ, սիրէ զդեկանն, ուզէ մարդկաց աղէկն: Հրատն սիրէ զճանապարհ երթալն, զղարիպութիւն, զկուրն, զշառն, ատէ զաղեկն, զաղեկ իրքն և սիրէ սուտ ասէ, զաւերն սիրէ, զամուսնութիւն սիրէ, զարիւն սիրէ: Արեգական սիրէ զայն, որ մեծութիւն առնէ, զդեկան ժողովելն սիրէ, և ժամ մի օգտէ և ժամ մի ահոկէ, բարձրցնէ, (65ա) ցածցնէ, երբ ի շարաֆն լինի՝ թագաւորցնէ, երբ ի հպուտն լինի՝ զմեծութիւն մարդոյն տանի: Լուսաբերն սիրէ զխաղաղն ըզսատրանճն, զնատրն, շատ սուտ ասէ, սիրէ զգինիխմութիւն, զշատ ի կին երթալն: Փայլածուն սիր-

ըէ զատուպուզելմն, զգիտութիւն, զասելն, զխօսելն, լինի քաղցրիսօս, աղեկ ձայն թալֆէ, զմալն, զբանն թէզ առնէ: Լուսին ունի զսուտն, լինի աղէկ սիրտ, ի կին պակաս երթայ:

Քսանեկեց դուռն, որ յիշէ զմարդկացն զցածութիւն ու զբարձրութիւն:

Ձոհալն (Երեակ) տալիլ առնէ ի վերայ ծառանուն, ի վերայ փոքր մարդկացն և կերտերուն, և ի վերայ գողերուն: Լուսնթագն տալիլ արնէ ի վերայ ոգերնուն, և ի վերայ մեծ մարդկացն և դատեստնուն, և ի վերայ գիտուն և եպիսկոպոսաց: Հրատն ի վերայ հեծելվորաց: Արեգակն ի վերայ թագաւորաց, և մեծունաց, և գլխաւորաց, և իշխանաց: (65բ) Լուսաբերն ունի ի վերայ հարստնուն և ամիրացն, կանեցն և աւեր կանեց, և ի վերայ տղայոց: Փայլածուն ի վերայ վաճռուկեներուն և գրագէտ մարդկացն և տղայոցն: Լուսին ի վերայ թագաւորաց և մեծունաց:

Քսանեյոթն դուռն, որ յիշէ զհաւատքն:

Ձոհալն ունի զՂհուտն և զինչ որ սև հագնին: Լուսնթագն ունի զհայն ու զասորիսն, զհոռոմն և զինչ խաչապաշտ կայ և զայնոք, որ սպիտակ են հագել: Հրատ ունի զկռապաշտքն և զայնոք, որ կարմիրն հագել: Արեգակն ունի զայն, որ զինք կու պաշտեն, Լուսաբերն ունի զմալմներն: Փայլածուն ունի զասելն ու զխօսիլն զպաթրն յամէն հաւատ, Լուսին զնաւմուսն յամէն հաւատ:

Քսանեութ, որ յիշէ զսուրբաթն զաստղերուն:

Ձոհալն հալեոր է, ի յաջ ձեռն մարդ ու գլուխ, ի ձախ ձեռն մարդ ու ձեռք, հեծել է զայլ, ձաղ կուտով կու քչէ զգայլն: Ի յազգ մի այլ սուրբաթ(66ա) հեծել է

խարտէջ ձի, ի վերայ գլխոյն հաւկիթ, ի ձախ ձեռն ասպար, ծածկել է գերեսն և ի յաջ ձեռն մերկիկ թուր:

Մուշթարին կտրիճ մարդ, ի յաջ ձեռն մերկիկ թուր, ի ձախ ձեռն աղեղն, հեծել է ձի, ի սուրբաթ մի, այլ մարդ մի ի վերայ աթոռի, ի վերայ գոյնուգոյն հալաւ, ի ձախ ձեռն թաւիթ: Մառեխն կտրիճ մարդ, հեծել է երկու առիւծ, ի յաջ ձեռն քամած թուր, ի ձախ ձեռն ասպար, ի մեկ այլ սուրբաթ, հեծել է խարտէջ ձի, ի վերայ գլխոյն հաւկիթ մի կայ, որ կարմիր ըռունպն ի ձեռն, և ի յաջ ձեռն մարդու գլուխ, և իւր հալաւն կարմիր:

Արեգակն մարդ մի, ի յաջ ձեռն գաւազան մի, գերթ զաղեղն ի վերայ իւր է հաստել, հեծել է ըղտու ձագ մի, չորս պախրէ զինքն կու քաչէ, մէկ այլ սուրբաթն մա(66բ)րդ մի, որ ինք նստել է, երես մի ունի քան զասպար մի: Ձոհրայն կնիկ մի, հեծել է յուղտ և ի ձեռքն տառապու ու կու քչտէ, և ի մէկ այլ սուրբաթն մի կնիկ մի նստած, մագն քրքրած և իւր յաջ զեհն կնիկ մի և այլ յինքն կու հայի, և իւր հալաւն կանաջ և դեղին կայ և խանփուլն ի կուրցքն ի վայր կախ ու խալխալանի յոտքն:

Յօտարիտն կտրիճ մի տայ, ուզէ հեծել, ի յաջ ձեռն օձ և ի ձախ ձեռն պնակիտ, որ կարդայ, ի մեկ այլ սուրբաթն մարդ մի, որ նստել է ի վերայ աթոռի, ձեռն զիր կու կարդայ, ի վերայ գլխոյն թագ, ի վերէն հալաւ կանանչ և դէղին: Լուսինն, ի յաջ ձեռն խիշտ, ի ձախ մատնահաչիւ և կու համարէ երեսուն, ի վերայ գլխոյն թագ, և նստել է յուղտու (67ա) ձագու վերայ և քարչեն զնա չորս ձի:

Այլ դուռն, որ յիշէ զթէպիթ աստղերուն, որ կոչի հաստատ:

Ասացին ոմանք՝ մի՞թէ հաստատ աստղերն ուժով են, քան զայս յոթ: Ոմանք մի ասացին, թէ այս յոթ են ուժով, քան զթէպիթ աստղերուն ուժով են քան զայս յոթ: Այսպէս ասացին, թէ տեսաք, որ երբ մեկ մի յայս թէպիթ աստղերուն երուս կամ ի տալեհն, ուրդի կամ ի տասն տուն նա մեծցնէ զմարդն, ի մեծութիւն հասցնէ: Եւ յայս յոթանցս շատոք են ուրդել ի տալեհն և ի տասն տուն և չեն հասցել մեծացուցել զինչ որ տան ոք երկու: Այն, որ թէպիթ աստղերն բարձր են քան զայս յոթ, և այն որ բարձր լինի, նայ իւր թէպիթ լինի: Եւ ասացին ոմանք, մի՞թէ այս յոթ ուժեն քան զնոքա: Այսպէս ասացին թէ տեսաք զայս թէպիթ աստղ(67բ)երուն, որ ամէն մէկ զմէկիմ ուժ ունի յայս յոթանցս, և կայ երկու, նայ մեք անով ասացաք, թէ ասլն այս եօթն են, ու նոքա պակաս են քան զդոքայ, երկու այն է, թէ հաստատ աստղերն չունին ի զատէ ի զատ երկինք, զերթ այս եօթն այնով իմացաք, որ յայս եօթն ուժով են քան զնոքայ, երեք այն է, որ հաստատ աստղերն ընճու չունին և ոչ ըստ թրխամորթ, որ կոչի դարձ, և ըղորդ գնալ և ոչ շուտ իւրեքն ի բրձէ բուրձ կու փոխին: Եւ այս յոթ աստղերս ամէն զայն ունին, նայ մեք այնով իմացաք, որ այս եօթն ուժով են, չորս այն է, որ այս յոթն աստղերս, որ ի մօտ է յաշխարհս, նայ նոցա ուժն շուտ հասանի ի մեզ քան զայն, որ բարձր են: Յօթն այն է, որ թէպիթ աստղերուն մեկ ի մեկ չեն ի հայիլ ու չեն ի խառնել, զինչ որ այս յոթն, և ամեն յիւր(68ա)եանց բնութեան վերայ են, զինչ Աստուած զիւրեքն սահմանել է: Եւ այլ ասացին այն առաջինքն, թէ այս հաստատ աստղերս հանօք է ուժով իւրեանց գործքն, զի իւրեանց գնացքն յուշ է, երբ իւ-

րենքն ի մէկ տարածայ կու մտանեն, նա շատ ժամ կու կենան յինք, և մեք զիտեմք, որ վատ ուժն, որ շատ կենայ ի բան, լաւ է քան զուժովն, որ շուտ անցնի: Եւ այս է խօսքն երկուսին և այն, որ մենք ասենք թէպիթ աստղերն ուժով են, ապա ի մէնջ հեռու են, ապա իմացաք թէպիթ աստղերուն թաւիրն իրք մի ցուցանէ, և այս է իրք մի, և այլ իմացիր, որ այս թէպիթ աստղերս ի յայն երկիրն, որ յիւր վեր լինի, նա հաւն աւելի գորութիւն առնէ և զգործքն, այլ յիշենք զիւրեանց բնութեանքն, և այլ յիշենք զայնոք որ առ(68բ)աջի յուտմէն, որ թարգմանի մեծութիւն հինգետասան աստղ, որ խիստ ուժով ֆել ունին առաջին:

Խոյն կայ յինքն աստղ, որ է անուսաւ Իրինահր, և է պայծառ աստղ, տա զմուլքն ի ծովերն ու տայ հրկէզ չարկամն ի հաւն, թէ հանց որ Երեւակի մօտն լինի ուժովորցնէ զինքն խիստ: Եւ թէ Լուսնթագ հաւն լինի, նա չթողու, որ շառ չլինի, զմուլքն տայ առանց շառի:

Յուլն կայ յինքն երկու աստղ, մէկին ասեն Տապրան, որ է յինքն Յլուն աչքն և է ինքն հարաւային, ունի զբնութիւն զՄառեխին, և ինքն է կտրող ի վերայ ժամանակին, որ ասեն Ղատեհ, և ասացին ոմանք, մի՞թէ այս տայ ուժ և յաւելցնէ ի ժամանակն, թէ հանց որ Մառեխն ի մօտ լինի կամ յառաջ երեք դարած կամ հետեւ երեք տարած, նայ ուժ կալնու ի վերայ թագաւորացն և ի վերայ(69ա) դեկնի և սպանէ զչարկամն, թէ հանց, որ Ձոհալն ի հետ իւր լինի, նայ խիստ մեծութիւն տայ ու զչարկամն կտորէ ի վերայ ցամքու և ի վերայ ծովու, և թէ Մուշթարին ի մօտ լինի, նա տայ զմուլքն ու զմեծութիւն առանց վախելոյ և առանց կռուի և խաղաղութենով և ասելով: Եւ Արեգակն թէ

չորեքտասան դարած կամ յառաջ կամ յետև ի մէջն լինի, նա տա մուլք գաշխարհս, որ գերթ Ըսքանդարն լինի, և թէ Զոհալն ի մօտ լինի, նա տայ զմուլքն խնդալով և ի կանաց սրտանուշ լինի: Եւ թէ Մառեխն ի մօտ լինի կոտվ տայ, և թէ Օտարիտն գիտութեամբ տայ, և թէ Լուսին ի մօտ լինի, մարդիք խիստ օգնական լինին: Եւ թէ այս աստղերու երկու երեք լինի, դու ամէնուն հուքմ արա մեւս աստղերուն ի Յլին ի յասխութքնէ, նա զմուլքն տա հրկէ ըզչարկա(69բ)մն, հնազանդէ զթագաւորք, երբ ի մօտ յինքն լինի: Աստղ մի յայս եօթեանցս դու նոյնպես հուքմ արա, որպէս ասացաք, և թէ դարաճայն ի յայն բնութենին վերայ լինի, և եթէ շատ աստղեր լինի, նա որ աստղ, որ ուժով լինի, յայն բնութենին վերայ հուքմ արայ, ուր այն աստղն լինի, նա խիստ ուժ տայ ուրեան, և թէ չէ նա երբ յայս եօթանցս աստղէս հանդիպի, նա այնոք ուժ տան ուրեան:

Եկաւորն կայ ինքն երեք աստղ, մէկին յայուր և ասեն ուրեան Մուսիքուլ յայնան, ի հիւսիսոյ կողմն է, զբնութիւն ունի զՄառեխին ու զՕտարիտին աստղերուն, ի գանձի և մեծութեան և կարողութեան կալնու ի վերայ չար կամնուն Մառեխին, երբ ի մօտ լինի Լուսնթագ երկոտասան դարաճայ կամ յառաջ կամ վերջք: Լուսաբեր, Փայլածու չորեքտասան կամ յառաջ (70ա) կամ յետոյ ի եօթանացս, որ երբ Փայլածու հետ Լուսնին լինի մուղարինայ, նայ խիստ զօրաւոր բան առնէ, միւս աստղն Մանքապիճաւզան աջն է հարաւային, ունի բնութիւն Զոհալին ու Փայլածուին, և ունի զօրութիւն, որ պակասեցնէ ի մարդոյն աւուրցն: Ասացին ոմանք, որ զասլմաթն կու գուգեն, թէ բազում

զօրութիւն ելանէ ի յայսմ աստղէս, աւելի տլսմաթն, որ ինքն խիստ ուժով ու մեծ բան լինի, առաւել թէ Զոհալ կամ Մուլթարի կամ Հրատ ի մօտ լինի, կամ որ աստղ, որ եօթանցն լինի, երեք Զոհալն է և է Եկաւորն, և է հարաւոյ դեհն և անչափ ուժով, որ մարդ չկարէ պատմել զնորա զօրութիւն, և զինչ արուեստ կայ ի տլսմաթն՝ յինքն կայ: Երբ ուզես, որ արուեստ մի առնես ի նորայ վերա, դու արայ, որ այն աստղն, որ յիւր վերայ առնես ի հար(70բ)աւային կողմն ի մօտ լինի, զօրաւոր և սքանչելի առնէ զարուեստն ի յիւր վերայ: Եւ զայս աստղերս ի հանց ցեղ տեղ առնէն, որ յայտնի լինի ու ընդդէմ չարկամու լինի: Եւ այն լինի, որ Զոհալն մօտ յինքն լինի և այլ աստղեր ի Զոհալն վատ հայեցք ունենան, նա խիստ ուժով բան առնէ:

Խեցգետին երկու աստղ կայ յինքն: Առաջին անուն Զօհրայի ամանի հարաւային է՝ զԼուսնթագին բնութիւն ունի և քիչ մի Մառեխէն: Եւ դորայ զօրութիւն մեծ է. ոմանք մի յիմաստասիրացն ասացին, թէ դայ վատ է, և դորայ տաքութիւն կարէ աշխարհիս բովանդակ լինել յայրումն, և այլք ասացին ոմանք մի յաստղաբաշխացն, թէ դորայ տաքութիւն միջակ է, չէ աւելի, և իւր բնութիւն տաքութիւն գերդ զԼուսնթագին է: Երկրորդ աստղն այն է և իւր անուն Շաւհրայի Շամի, և է հարաւային ի լան(71ա)քն ունի զբնութիւն զՕտարիտին և քիչ մի Մառեխէն և քան զՇաւհրայի ամանին տկարագոյն է դորա ուժն, և երբ յայս յօթն աստղէս միւս մի ի մօտ յինքն լինի, ի վերայ այն աստղի բնութեան որ ի մօտ է, ի բան առնէ:

Առիւծն և կայ յինքն երկու աստղ, մեկին ասեն Խալպլասաթ, որ կոչի Սիրտ Առիւծու, և է հիւսիսային,

ունի բնութիւն Մառեխին և սակաւ մի Զոհալին է, և սակաւ մի Մառեխէն, և այլ ասացին տլսմաթին տէրքն, թէ տայ մարդոյն ուժ և խելք և մուլք և ասել և լսել և իւր տլսմն, որ գործէ ի յՕձն է և յԱռիւծն ի մեծ և ի փոքր, թէ Լուսին և Զոհալի հետ լինի, նա չարկամնոյ համար զուգեն, և թէ Զոհրեին, նա մելիքութեան, և թէ յՕտարիտն, նայ խելօքութեան և գիտութեան, և թէ հանց, որ Մառեխն լինի, պատերազմ ու հեծել կրակի բան, և թէ Արեգակն լինի, նա խիստ ի մեծութիւն հա(71բ)սցնէ, ի յորդոց յորդիք մնա եւ այսպէս խառնակէ ընդ իրար զաստղերն, երբ երկու կամ երեք լինի, և հուքմ արա երկրորդ այն աստղերուն, որ յԱռիւծուն ագոյն վերայ է, և ի յայն աստղն խիստ մեծ է և ուժով, թէ էնց որ Մառեխի հետն լինի, նա խիստ ուժով լինի, և թէ Արեգակն ի մօտ լինի, իշխանութիւն կալնու ի վերայ ամէն բանի և տա մեծ մուլք, և թէ ի մալուտն հանդիպի, այնոր օրինակ չհանդիպի:

Կըչեռն է և կայ յինքն երեք աստղն: Մէկին ասեն Սմաքրամէ, հիւսիսային է, ունի զբնութիւն Զոհալին և յՕտարիտին, և ասեն այս աստղիս Շամյայի, որ ասէ Մուսեղնի, զի իւր գոյնն մամի է, և իւր զօրութիւն տայ զմուլքն, որ նրբ ի յայս չորս աստղէս մօտ յինքն լինին կամ Զօհալ լինի իւր այրուծն մէկ տարածէ մինչ երրորդն, և Մուշթարին նոյնպէս, և երբ Մառեխն ի մօտն լինի, նոյնպէս Արեգակն ինը դարած ի գատ (72ա) լինի կամ պակաս քան զինը, որ երբ յայս չորրորդ աստղէս, որ յիշեցաք այրուծ կամ շարաֆ կամ ոչ կենա, կամ այլ ուժերուն առնու, որ այլ աստղերն տան և թէ հանց, որ աստղերն ի հաւն ուժ չտայ, որ խարիպ

լինի, և թէ է վատուժ կալնու, նա մալլութիւն տայ և տարպելութիւն: Եւ մեւս աստղն Սամաքի Աղգալն է. հարաւային է, և ունի բնութիւն Զոհրային և քիչ մի զՕտարիտին: Եւ ասեն ոմանք, թէ այս այն աստղն է, որ մարդոյն զմեւս մարդոյն խորհուրդն յիմացնէ և այլ, զոր վերոյ յիշեցաք, թէ յորժամ յօթանցն ի մօտ կամ հեռի լինի, նա զայս այլ այնպէս գիտեայ երեք խատ, որ այս հարաւային է և ինքն յայս բաներուս խիստ մեծ է և իւր գործն զերթ զսիւլին Ֆելն է և գործէ, զոր կամիմք յիշել, երբ այլ յառաջ երթամք:

Ջատին է նասրի ու ողէհէ հիւսիսոյ է, (72բ) և ունի բնութիւն Զոհրային և Օտարիտին, և իւր գործն սակաւ է, քան զսամաքրամէհին, և դորա գործքն ի յամիրայի ի յօզըրնին զրագիտերն և զլիսաւորքն: Զոհալն յորժամ իմաստ լինի մեկ տարածայ, և Զոհալե մինչ ի հինգ, Մառեխն մինչ ի քսան, Արեգակ մինչ առաջին բուրձն, Օտարիտին ու Մուշթարին մինչ ի հինգևտասան տարածայ կամ չորեքտասան տալուն: Եւ Ֆլմութ, որ հարաւային է, որ թարգմանի Զգան Բերան, ունի բնութիւն Զոհալին և զՕտարիտն: Եւ ոմանք ասեն ի վերայ այս աստղիս, թէ խիստ զօրաւոր է ի վերայ այս բաներուս: Եւ այս են աստղերուն, որ զօրաւոր գտաք ի յառաջ ի բարձրութիւն և որ յերկրորդ բարձրութիւն, են այսօքիկ: Եւ են քառասուն հինգ աստղ. երկու կայ ի Տուպլատխար, որ թարգմանի Փոքր Արջ, և է այս աստղերուս ի սարատան հինգևտասան դարած ու դադիղայ տասն, և լայնքն է ի հիւսիսի կողմն յօթանասուն դարած, և երկու աստղերն է(73ա) քսան վեց դարած ի սարատան, և իւր լայնքն ի հիւսիսոյ կողմն յօթանասուն չորս դարած: Եւ յառաջին աստղերուն, որ

յիշեցաք, իւր տլըսմն աղեկ է, որ զմարդն ի գողուն անվնաս պահէ: Եւ այս երկու աստղէս, որ յիշեցաք, ի վնաս կար մարդու, անվնաս պահէ, և ի Տուպիաքպարն, որ կոչի Մեծ Արջ, կայ յինքն թէ աստղ մի սպանող է, երբ զիւր տլըսմն գուգեն վատ մարդկացն համար և անհաւատ ի քաղաքն ի մօտ, որ երբ յինքն հասնին, այն մարդիքն մեռնին: Երկրորդ աստղ և այն է, որ ի վայրի մօտ ի փորն է ի յայս ի Տուպիաքպարիս, և այս աստղս, որ երբ գտլըսմն իւր վերայ գուգեն, է մեկ մի լինի այն աշխարհքն ի մորելսէ և յոչլէ և ամենայն ցասմանէ, որ վաստկին վնաս առնէ: Երրորդ աստղն այն է, որ ի ձախ անդամն է ի յայս ի Տուպիաքպարիս, զայն տլըսմն գուգեն, որ յայն ասխարհքն շներն փախչին աւ(73բ)ելի կատղածն և գազանն և ճանճն այլ կու փախչին: Չորրորդ աստղն այն է, որ ի յագին ի յայս ի Տուպիաքպարիս: Եւ այս ագիս երրորդ աստղն է գուգած, և այս աստղս այն է, որ մենք կու յիշենք, որ ագէտակն ի մօտ դէս յանդամն դորայ տլըսմն աղէկէ, որ զկորերն փախցնէ և զինչ այսպէս ժժմանք կայ: Եւ հինգերորդն այն է, որ այլուի ագին ի մէջն աղէկ է, որ փախցնէ գոջիլն յերկրէ: Չաստղն այն է, որ յագուն հետև է՝ աղէկ է, որ փախցնեն զմընճեխն, զբզեզն և զինչ որ թընկենա: Եւ պիտի գտլըսմն այնպես գուգել, թէ տաք լինի, նայ հով իրաց պատկեր գուգեն, և թէ հովնա, գտաքն գուգեն, և այլ յիշենք զբաղի աստղերն, որ ի բան կու գան յայս գիտութիւնս: Համալն Քֆլխաւիպ ի բարձրութիւն է, երեք հիւսիսի է, ունի բնութիւն Ձոհալին և Մուշթարի աստղմ, որ խիստ (74ա) ուժ ունի յայս բաներուս:

Յուլն կայ յինքն երկու աստղն: Մին այն է պայծառ

աստղն է, որ Ասլխաւն է, երկրորդն ի բարձրութենէ հիւսիսի է, բնութիւն ունի զՄառեխին և զՕտարիտին, կտրող է, և ինքն խիստ զօրաւոր է: Աստղերուն զամէն զչարկամն փախցնէ, և ինքն խիստ յաղթող է յայս բաներուս: Երկրորդն ասեն Ջամբահամիլ Ըռասըլխօյ: Երկրորդ բարձրութիւն է, ի հյուսիսի կողմն է, բնութիւն ունի զՄառեխին և զՕտարիտին, և կտրող է ի յայն աստղերուն է, որ ի տլըսմաթերն խիստ ուժ ունի:

Եկաւորն և իւր առաջի աստղն ասեն իւրենն Ըռասիթում Իմուղատամ, և ինքն ի կանանց աստղերուն է: Թէ ուզես, որ աղէկ առնէ, և թէ ուզես, որ վատ առնէ, թէ ուզես խայտառակէ, թէ ուզես պահէ, և թէ ուզես, որ տլըսմ առնես, որ ի վերայ քաղաքին, որ կան ի նմայ աղէկն և սպրկիկն ապրին, և(74բ) վատերն մեռնին կամ ցրուին, դու զԱրեգակն և զՄուշթարին ի մօտ գիտ և զՁոհրենին խիստ ուժով, յիւր շարաֆն կամ յիւր բարձրութիւն և թէ ուզես, որ աւերկաննին մնան, դու զՄուշթարի ու զՄառեխ գիտ ի մօտն և ապա առնես նա աղէկնին հատնին: Մեկ այլ աստղն այն է, որ է երրորդ Ըռասիթումի և ունի մոմի գուն: Եւ այս այլ ի կանանց աստղերուն է, որ յերբ գտլըսմն ի յիւր վերայ գուգես և ի քաղաքն դնէս և կամ յերկիրն և Ձոհրայ և Մուշթարի ի մօտ լինի, նա կանանիքն սպրկիկ լինին և իւրեանց շատ գուակ լինի, և թէ Ձոհրային և Մառեխին լինի ի մօտ, նա կանանիքն աւեր լինի և տղայք շատ լինի:

Խեցգետինն և իւր առաջի աստղն այն է, որ ի Սաւֆինան է, և իւրինքն վեց տաստղն են: Առաջին պայծառ է և է ինքն Իքօֆլաթն, և այս աստղս տա մուլք և ի վերայ չարկամին: ուժովցնէ: Եւ երբ Արեգակն և Մուշ-

Թարին ի մօտ լինի, նայ (75ա) խիստ մեծ բան տայ՝
զաղէկութիւն առանց վատի, և թէ այլ աստղերն վատ
լինի ի հետ՝ ի վերայ վատութեան հուշմ առնու: Երկ-
րորդ ի յայս վեցէս այն որ ի վայրն է, և այն՝ այն
աստղերուն է, որ բարձրութիւն կու տայ և զվատն ի
զատ պահէ, երբ աղէկ աստղն մի ի մօտ բերես և
զինքն ի տալեղն բերես, թէ քաղաք շինես կամ բերդ,
նա իսկի չարկամ չկարէ զինքն աւերել: Երրորդ
աստղն այն է, որ ի հետ երկրորդին ու գէտ գառաջին
աստղի զՖէլն ունի, թէ յիւր վերայ զուգես տլըսմն,
յայնժամ վատ աստղերն ի հետ իւր մուղարինա առնեն
ի վերայ քաղաքի մի, այն քաղաքն աւերի և շենք այլ
չբռնեն:

Ասատն յինքն կայ երեք աստղ: Ի յառաջն ամի յայս
երեք աստղէս այն, որ ի մէջն է, որ յարեւելից դեհն կու
լինի ի յայն աստղերուն է, որ ուժ կուտայ ի կռիւն, և
երբ զտլըսմն(75բ) զուգեն, որ ի հետ իւրեանց վերցնեն
և կամ ի մեծ մատնու ակն դնեն, որ ակն աշմն լինի, ի
վերայ ակին առնեն զտլըսմն, և թէ Մառեխն յայն
տեղն լինի՝ սպաննումն և արիւն առնէ, և թէ Զոհալն
լինի՝ նայ այն չարկամն ու հեծելն մեռնի, ի ցրտուն և
ի ձուռնէն և ի գետն ընկղմի: Եւ այս եղաւ սաբապ, որ
ընկղմեցան ի Մովսիսէ փարաւունքն: Երկրորդ աստղն
ի յիրմէն, երբ զտլսմն ի վերայ իւր զուգի և ի վերայ
աստղերուն, որ ի մօտ լինին, և զինքն դնեն ի քաղաք
և ի բերդ կամ ի տուն, և չարկամն իւր զաստ առնէ,
ասրի ի վերայ չարկամնուն և ի վերէն մուտ չկարէ
առնել, և թէ զինքն ի մատնուն ակն զուգեն, և մարդ
ի մատն դնէ և ի վերայ չարկամացն երթան, և չար-
կամն ի վերայ իւր մուտ չկարէ առնել: Երրորդն այն

է, որ չորրորդ աստղն ի վեցէն, որ ի Սաւֆինայն է
աստղն, որ մօտ ի յայն է, որ մթնագոյն է, խիստ (76ա)
բարձր է և աղէկ գործ ունի, աղէկ է, որ զվնասարար
գազանքն փախցնեն ի յերկրէն: Չորրորդ բանն, որ
հինգերորդ աստղն իւր ի Սօֆինայն է, այն պայծառ
աստղն, որ ի Սօֆինայն է, որ ի հարաւոյ դեհն է, իւր
տլսմն պահէ, ի յայն երկիրն ցուրտ չլինի, երբ ի յայս
յօթէս, որ յիւր բնութենէն ունենա, ի մօտ բերես՝ նա
յայլ ուժով առնէ զտլսմն: Հինգերորդ բանն այն է,
աստղն որ յՕձն է, որ իւրենն Հայիայ ասեն, և աստղէն
անուն Շճահ է և պայծառ է, և յայն երկու աստղէն ա-
ռաջինն է, որ ոչ լինին ի մօտէ, խիստ մեծ առնէ, երբ
ուգես, որ ժողովես զօձերն ի տեղմն, և երբ ուգես, որ
փախցնես, նա աղէկ աստղեր բեր ի մօտն:

Յաղրապն Ղալպն: Յաղրապն, որ թարքմանի Կարճի
Սիրտ և է հարաւային, ունի զՄառեխին բնութիւն և
քիչ մի Զոհրաին է, և է ինքն կտրօղ, տայ բարձր
մուլք, յաղթէ զչա(76բ)րկամն, և է ինքն աստղերուն ի
մարգարէիցն աւելի, թէ Մառեխն և յՕտարիտն ի հետ
լինին, և թէ Մառեխն և Լուսինն ի հետ լինին, նայ
այլ ուժով բան առնէ, և երբ յիւր սուրաթն զուգեն և ի
հեծելն պահեն, չարկամն չյաղթէ զհեծելն, և թէ մարդ
զիւր սուրաթն զուգէ ի վերայ մատանու ակին, որ լինի
ակն ազուլթ ու կարմիրաշմլ կամ տահնա, իսկի իրք ի
ծածուկ չմնա ի վերէն, զամէնն իմանա և զոր ինչ ասէ՝
զամէն զորդ բռնէն:

Ջատին Նասրիայ Տայիրն: Եւ է ինքնս ի յայն մեծ
աստղերուն, որ խիստ զօրաւոր բան կառնեն, և ինքս
խիստ ի պատերազմ ուժ տայ և զչարկամն կտորէ և ի
վերայ թագաւորաց ուժ կալնու, որ երբ Մառեխն ի

մօտ յինքն լինի, և էնց Լուսին, որ երբ ի մօտ լինի, և թէ երկուսն լինի ի մօտն, (77ա) յոյժ զօրաւոր և յաղթող ուժ տան:

Այլ դուռն, որ յիշե գխուտպերուն ֆելն, որ թարգմանի ցրցերն երկնիցն: Յառաջ յիշենք զհարաւային ցիցն, որ Թանկալաւշան յինք շատ օգտութիւն է ասացել: Առաջին այն է, որ զինչ որ էգ ի մարդոյ և յանասնոյ կայ, որ պատեղուոր լինի և յուշ բերէ, հայի ի զուպտն ի հարաւուն և ի սէուհէլն, ի յայն պահն բաժանի ծնունդն, թէ մարդն լինի նա ասեն, որ հայի, և թէ անասուն՝ նա ուրդի որ հայի: Երկրորդ այն է, որ երբ մարդ, որ կնիկն ի մօտն պակաս երթայ առանց այն, որ հալւոր լինի կամ դեղ լինի խմել, նայ շատ նայի գիշերն յայս խուտպս, որ հարաւային է, նայ այլուի յիւր բնութիւն դառանայ: Երրորդն այն է, որ երբ ուզես, որ զճանճն սպանանես, դու առ սև խրպաղ ի տաք ու կանկնեց (77բ) ի Զոհալ աստղին դիմաց շատ գիշերնի, ուսուցանէ զայն խրպաղն Զոհալին և ասէ, թէ դայ սպանանէ զճանճերն յամէն գիշեր, շատ ցուցանէ և ծեծէ զայն խրպախի սակն և տերեւն զճղերն: Նա ճանճերն, յորժամ ի վերէն նստին և կամ զհոտն աւնսուն, մեռնին: Զորրորդն այն է, երբ ի մարդն շատ կոծիծ ելնէ, երբ ուզես, որ երթայ առնու այն մարդն, որ զկոծիծն ունի, ամէն կոծի մեկ տերև և դարապի տերև, և առնու զայն տերևն ի ձախ ձեռն և ցուցանէ զինքն հարաւային խուտպին: Եւ առ հայելին երկուսն մեկ բնութիւն ունին և ասէ, թէ «առեյ եմ, ել այս տերևս, որ կտրէ դայս կոծիծս, որ կայ ի վերայ մարմնոյս»: Քառասուն երկու հեղ ասէ, և յայնժամն ծեծէ և ի վերայ կոծիծն ցանէ, նայ ի վայր գայ: Հիգերորդն

այն է, որ երբ հային, որ Զոհալն ու ինքն ի մէկ տեղ լինին և (78ա) մարդ յիւրենքն նայի և շատ գիշերք նայի, նա բշկէ զմարդն ի մէլախօլիէն, որ է սևութիւն: Եւ յայս դալիլ կառնէ, որ այս երկու աստղ ունի զօրութիւն, որ ուրախութիւն տայ մարդոյն, և վասն այն ըզհնդկաց աշխարհն, որ յայս խուտպս ի վերայ նորա կու գայ ի շուրջ, նա այն աշխարհին մարդիկքն ուրախ են հանապագ: Վեցերորդն այն է, որ ի կնկան ի տղին պահարանն ցաւ կենայ, նա կանգնի ու հայի յինքն, և ան երկու նժուաղ աստղն, որ ի մօտն կայ և թէ Զոհալն այլ երևի, և նա այլ նայի և զձեռն ի վեր կալնու և յիւր դիմաց զմատուենքն բանայ և խփէ զերգ զայն, որ իրք կամենայ առնուլ, ի յօթէն և յօթ տարպա առնէ, և տանի այն տեղացն ամօթոյն դիմաց ի յագ յօթ շաբաթն մինչ միւս շաբաթն յամէն գիշեր յօթ տարպայ: Եւ ասէ ամէն գիշեր, թէ առի ձեռօքս ուժի հարաւային խուտպեն (78բ) և յիւր հարաւային աստղերուն ողջացուցի զցաւս այս ըոհաւանիաթովս, որ սրբեն, նայ այն ցաւէն բշկի: Եւ այս նշանքս, որ երբ ի բաղնիք մտանէ և հայի յիւր ամօթոյն, նայ յիրմէն գիճութիւն քամի վատ հոտ, և այսպէս առնէ, որ անպատճառ ութ օրն, որ է շաբաթ օրն: Յօթերորդն այն է, որ վասն կատղած շանէ ասացած տաֆա, որ է զերգ ըղունկն: Ութերորդն այն է, որ ի յառաջի ելն զինչ ուղտ հայի յինքն, նայ մեռնի, և յայն ուղտն քանի հասիաթ կայ, վասն այնոր չգրեցի, որ ի մեր աշխարհս չի երևնալ:

Այլ դուռն: Յիշեմք զհիւսիսային խուտպն, որ է ցից երկնից, որ ի մեր աշխարհէս հեռանայ: Թէ քանի օգտութիւն և զօրութիւն և խասիաթ կայ, առաջին այն է,

որ ի վեր աչք ջարապ լինի, որ է քոս կարմրամատ, որ կարմրի(79ա) աչք ամառն և ցաւի կանգնի մարդ, որ զցաւն ունի ընդդէմ խոտապին կիրակմտին յայն ժամն, որ երկու պահ ի գիշերն անցել լինի: Եւ սայլն այլ հայի և առնու արծաթի միլ մի և շիմշամ աղէկ վարդէ ջուր և զայն ի դեղդիրն թանա ի վարդաջուրն և յաչքն քաշէ և ասէ՝ «զայս է ազգ և խաւմ հիւսիսոյ դուտալի: Եւ աստեղք հիւսիսոյ խոտապի բժշկեցէք զիմ աչքս ի յայս ցաւոցս, որ ես ի յիւրմէն հիւանդ եմ և կու նեղէ զիս, ողորմեցէք ինձ և հանգուցէք զիս երարողք և քակեցէք յիմ աչիցս և խըլեցի յինէ, զի այս է իմ լուսատու ի մէջ մարդկաց»: Զայս ասա և զմիւրն քաշէ վարդէջրով յաչքն և հայի ի խոտապն: Եւ յայն աստղերն, որ յիւր բոլորն կան, առնէ զայս մէկ կիրակմտէն մինչ ի միւս կիրակմտուն յամէն գիշեր, և քանի կարէ (79բ) շատ քաշէ զվարդէջուրն արծաթի մլով յաչքն: Նայ այն ցաւերն ըռամատն շոյտ երթայ քան զճարապն:

Երկրորդ ֆայիտան այս է, որ ով ի յարաղան ունի, որ է դեղնցաւ, կանգնի այն աստղերուն և խոտապին դիմաց և ասէ՝ «է աստղեր հիւսիսային կողմնան խոտապիտ, ողջացուցէ՛ք զիս ի յայս ցաւոցս»: Եւ յառաջ զճախու ձեռն ի վեր կալնու ի յօդն և զմատուռնքն բանայ և խփէ, իբրև զայնու յօթէն իրք առնու, և զայս խօսերս ասէ և նայի լերդին, յոթ հաղ առնէ և յոթ բարև տայ ի յուրբաթէ այս մինչ ի միւս ուրբաթն, որ ջանայ և յամէն հաղ, որ զբարևն տայ, ասէ թէ՛ «խոտապի աստղեր ողջացուցէք զիս» և զճախ ձեռն ի վերայ լերդին դնէ:

Երրորդ ֆայիտայ այն է, որ առիւծն և ինծն և

զայլն և զ(80ա)ինչ որ այլ գազան կայ, որ ի նոքա կու նմանին երբ ի հիւանդանան, կու նային, դէմ այս խոտապիս, որ շատ կու նային, նա կու ողջանան:

Չորրորդ ֆայիտայն այն է, որ զինչ գան, որ ի մարդն կենա, կամ ուռեց հանէ ի վերայ խոցին ձուկն, կամ կանաչով կամ կապուտով, և զիւր մարմին զամէն պուտպուտ առնէ կանաչ ու կապուտ, և կանգնի գիշերն հիւսիսի խոտապին դիմաց և յիւր միտքն ասէ, թէ այն յոթ աստղերին գովքն ասեմ, որ բոլոր ի շուրջ կան, և զայս ասա՝ «յոթ սուրբ աստղեր, որ հիւսիսի էք և կու յըզըրկէք զհոգին, ու զմեծութիւն մօտ յադամայորդին, տարէք զայս ուռուցս ի յինէն, և ողջացուցէք զիս յիւրմէն, և պահեցէք զիս յիւր վատութենէն», և թքնու ի վերայ ձկանն: Արայ ի մեկ կիրակէն մինչ ի միւս կիրակին, նա ուռուցն երթայ:

Հինգերորդ ֆայիտայն այն է, (80բ) որ ասացին իմաստնասէրքն, թէ աւելի օգտուութիւն այս սուրբ խոտապին ի յաչից ողջցնել է իւրենք, և այն աստղերն, որ իւրենց բոլոր է, և այն է, որ ի հովութենէ և ի գիծութենէ ցաւի, նա ի հարաւոյ խոտապն հայի: Եւ թէ հաւն չհայի, նա խալպի յասատն ու խալպի յաղրապն, և զինչ որ ի տաքութենէ ցաւի, նա ի հիւսիս ի խոտապն նա, և այլ զինչ ռանջ լինի՝ նա ի հովութենէ, նայ ի հարաւոյ խոտապն նայի, և զինչ տաքութենէ ի հիւսիսի: Եւ այլ ասաց թանկալաւչան, թէ շատ հիւանդութիւն ես այս խոտապերովս բժշկեմ:

Դուռն, որ յիշէ այլ զի՞նչ աստղերն ունին ի կենդանակերպն: Առաջին այս է. իմացիր, որ երկու լուսաւորքն քան զամէն աւելի գործքն ունին յաշխարհս, աւելի Արեգակն: Եւ այլ իմացաք, որ Արեգական բնու-

թիւն տաք ու չոր է: Երբ Արեգակն ի յամ(81ա)առն կու գայ, նայ կու շողնայ և յաւելի շող յայնժամ կու լինի: Երբ Առիւծն կուգայ, նա մեք այնով իմացաք, որ Առիւծն իւր տուն էր: Եւ Լուսին տեսաք, որ միւս լուսաւոր ինքն էր, և իւր գործքն հետ Արևի յաշխարհս խիստ է, և իւր դարձ չկայ ոչ Արևի: Եւ Արև գտաքութիւն ունի, և Լուսին զգիծութիւն: Եւ կենդանութիւն տաքովն ու գիծովն, և Լուսին զերդ նայիպ է Արեգական, ու Լուսնի լուսն Արեգակէն է, նա իմացաք, որ իւր ուժն հետ Արեգակին է:

Եւ այլ տեսաք զԽնցքետին, որ է հով ու գէճ, մեք այնով իմացաք, որ զԼուսընկին բնութիւն ունի, նայ իւր տունն հետ Լուսընկին է: Եւ այլ ասացին ոմանք մի յաստղաբաշխաց, թէ առաջին դարածէն յԱրևծուն է, մինչև երեսուն դարած յԱյծեղջիւրն Արեգակն է: Եւ յառաջին դարածէն ի Զրհոսէն մինչև երեսուն դարածն ի Խնցքետին Լուսնին է: Եւ այս վասն այն եղաւ, զի(81բ)յՕտարիտէն մինչ ի Զատին նորա տալեհն աւելի է և ի Զատոյն մինչ ի Սարաթանն նորա թալեհն պակաս է, նա որ աւելի է, նա մեծ լուսաւորին է, և փոքրն՝ փոքր լուսաւորին: Եւ այլ բազի երեք աստղերս առին ամէն մին յայս երկու լուսաւորէս տուն տուն, նա եղաւ ամէն մէկի երկու տուն: Եւ յայնժամ, որ Զոհալն վատ երևի, իւր բնութիւն հակառակ եղաւ դոցա բնութեան: Նա իւր տնուին այլ մուղապիլայ ուրդեցաւ դոցա տնուուն, և Զոհրե աղեկ աստղեր, նա իւր տնուին թաթլիթ եղաւ դոցայ տնուուն և Մառեխն, որ վատ է, նա իւր տնուին թարպեհ եղաւ դոցա տնուուն, և յՕտարիտն, որ միակ է, ոչ աղէկ է և ոչ վատ, նա իւր տունն հայեցք ի դոցա տնուին չունի:

Զոհրե ոմանք մի աստղաբաշխացն ասացին այսպես, եթէ երբ տեսաք, որ Օտարիտն քան զԼուսին ի վեր է, նա մեք տես(82ա)աք իւր տնուին ի մօտ երկու լուսաւորին պիտի լինի, Սմբուլան մօտ ի յԱսատն, և Ճօվզան մօտ ի Սարատանն: Եւ տեսաք, որ Զոհրայն այլ ի վեր է և խիստ չի հեռանայ յայս լուսաւորացս: Նա մեք իմացաք, որ Միզան մօտ ի Սմբուլան է և Սաւֆրան մօտ ի Ճաւզան: Եւ այլ բարձր Մառեխն է ի հետ, նա ի հետ իւր տնուին են: Յաղրապ ու Ճօզան և այլ ի հետ տեսաք զԶոհրե բարձր ի հետն, նա ի հետ իւր տնուին հուլթնութիւնն այլ ի վեր տեսաք Զոհալն, այլ ի հետ եղաւ իւր տնուին Զատին ու Տալուն:

Եւ այլ տեսաք, որ Զոհալն ունի զսեւութիւն և զմթնութիւն և զվատութիւն, և Արեգակն և Լուսին ըզլուսաւորութիւն ու զպայծառութիւն: Եւ այս երկուս հետ իրաց չարկամ են: Վասն այն իւրեանց տնուին դիմաց իրաց մուղապիլայ եղաւ: Եւ Զոհրե ունի զհաստութիւն ու (82բ) զդեկանն: Օտարիտն՝ զիմաստութիւն, զխելք և այլ երկու իրաց չարկամ են: Վասն այն եղաւ Օտարիտին տունին մուղապիլայ Մուշթարէ տնուն:

Եւ Մառեխն ունի զկռիւնն և զարիւնն, Զոհրան՝ զխնդումն: Եւ այս երկուս իրաց չարկամ են: Վասն այն Զոհրային և Մառեխին տնուին մուղապիլայ եղաւ իրաց, և ամեն աստղեր իւր երկու տուն ունին: Մեկ այն, որ իւր բնութեանովն, և յայն, որ վերայ գերթ զինքն է, ուժով է ի վերէն, և այն, որ գերթ զիւր բնութիւնն չէ, նա այն պակաս է: Օտարիտն եղև ի Սմբուլան խիստ ուժով, զի իւր տուն և իւր շարաֆ է: Եւ Զոհրայն եղև ի Սաւֆրան խիստ ուժով, զի էգ է գերթ

զինքն: Եւ Մառեխի Համալն եղև ուժով, զի որձ է
զերթ զինքն: Զոհրե Խօվսն եղև, զի որց է զերթ
զինքն: Զոհալն ի Տալուն եղև ուժով, զի որց է զերթ
զինքն: Եւ այլ իմացիր, որ ամէն աստղի տան մուղա-
պիլայ այն աստղին ոպալ է, որ թար(83ա)գմանի
մաղց: Եւ այլ ցուցանեմք զշարաֆն զաստղերուն և
շարաֆն աստղին այնպէս, զինչ մեծութիւն թագաւո-
րաց: Արեգական շարաֆն ինըտասան տարածան ի
Համալն, Լուսնին շարաֆն երեք տարածան Յուլն ի
սաւֆրան: Զոհալի շարաֆ քսան մեկ տարած է ի Մի-
զանն: Զոհրեի շարաֆն քսանութ, հինգետասան դա-
րած ի Խեցգետինն, Մառեխի շարաֆն քսան ութ ի Այ-
ծեղճիւրն, Մուշթարի շարաֆն քսան յոթ ի Զուկն, Օ-
տարիտն շարաֆն հինգետասան ի Կոյս, Ըռասին շա-
րաֆն քսան երեք դարած է յԵկաւորն, Տանապն շա-
րաֆն երեք տարած է յԱղեղնաւորն: Եւ ի Հնդաց ոմն
մի աստղաբաշխաց այսպէս ասացին, թէ Արեգական է
շարաֆ տասն տարած Խոյին և Զոհրեին շարաֆն
հինգ տարած է ի Խեցգետինն, և Զոհալի շարաֆ քսան
դարած է ի Կշեռն: Եւ այլ իմացիր, որ ամէն շարաֆն ի
տան մուղապիլայն աստղին հրպուտ է և հրպուտն
նոյնպէս է, որպէս մին մի ի բարձրութենէ ի ցածրու-
թիւն ընկնի, և Արեգակն ի վերա կենդանութեան է, և
մեծ լուսաւոր Արեգակն է, և կենդանութիւն իւրով է և
գմահն(83բ) Զոհալին ունի, և մեծ վատն է վասն այն
իւրեանց շարաֆնին մուղապիլայ դէմ իրաց, և այլ ի
հետ աղեկ Զոհրաին է և վատ Մառեխին: Նա վասն
այն եղաւ մուղապիլայ դեմ իրաց, և այլ գտաք զՕտա-
րիտն, որ ունի գիտութիւն և Մուշթարին ունի
խնդումն, եւ զծաղրն: Եւ այս երկու չարկամ են իրաց,

նա վասն այն եղաւ մուղապիլայ իւր շարաֆն: Եւ որ-
պէս Լուսնին տունն ի Արեգակի մօտ է, նա նոյնպէս
շարաֆ եղաւ ի Յուլն:

Այլ դուռն, որ յիշե զմութալիթայն: Կրակային մու-
թալիթայն Համալն, Ասատն, Խօվսն, և իւրեանց մութա-
լիթային տէրքն ցերեկն Արեգական այլ ի հետ Զոհրեին,
գիշերն ի հետ Զոհրեին է, և այլ ի հետ Արեգական և
իւրեանց ընկեր է ցերեկն ու գիշերն Զոհալին, և հողա-
յին մութալիթայն, որ է Յուլն, Կոյսն, Այծեղջիւրն, ցո-
րեկն է այս մութալիթայիս տէր Մուշթարի, այլ ի հետ
Լուսնին, գիշերն Լուսին, այլ ի հետ (84ա) Մուշթարի, և
ընկեր իրենց ցերեկ և գիշեր Մառեխն: Եւ երեք մութա-
լիթայն հողմային է և այն է Զրհոսն, Երկաւորն, Կշեռն,
և այս մութալիթայիս տէր ցերեկն է Զոհալն և այլ ի
հետ Օտարիտն, և գիշերն Օտարիտն, և այլ ի հետ Զո-
հալն և ընկեր իւրեանց գիշեր, ցերեկ Զոհրե: Եւ չորս
մութալիթայն ջրային է և այն է Խեցգետն, Կարիճն,
Զուկն, և այս մութալիթայիս տէր ցերեկն Մառեխն, այլ
է հետ Մուշթարին գիշերն Զոհրայն, այլ ի հետ Մա-
ռեխն և իւրեանց ընկերն է գիշեր ու ցերեկ Լուսինն:

Ասաց Քուշիարն, թէ այս որ ընկեր կասեն գիշեր ու
ցերեկ Պողէմիոսն ձգել է զայն, ապա շատ ոք ասա-
ցին, թէ այն այլ պիտի, և ոմանք մի ասացին ջրային
մութալիթայն, թէ ցերեկն յառաջ Մուշթարի և ապա
զՄառեխն, գիշերն Մառեխն և ապա Մուշթարին: Եւ
այն, որ մեք ասենք առաջի խօսքն է և այլ ամէնոնց
բրձի մինչ հինգետասան դարածն Արեգակն է, հինգե-
տասանէն մինչ երեսուն Լուսնին է: Եւ (84բ) էգ բուռ-
ճն հինգետասան դարած Լուսնին է, հինգետասանէն
մինչ երեսուն Արեգական է:

Եւ այլ դուռն, որ յիշենք զուճուհն, որ կոչի Երես Մառեխին: Խոյին տասէն մինչ ի քսան Արեգական է, որքան զՄառեխին երկինքն ի վայր է, և ի քսանէն մինչ երսուն Մուշթարին է, որքան զԱրեգական ի վայր, Յուլն մինչ ի տասան դարած Օտարիտին է, որքան զՄուշթարին ի վայր է: Տասանէն մինչ քսան Լուսնին է, որքան զՕտարիտին ի վայր է: Եւ այսպէս ամէն բրձերն ի Չոհալէն մինչ ի Լուսին:

Այլ դուռն, որ յիշէ զդարածան: Եւ այս այլ զպուրճն երեք բաժին է արել, և զայս Հնդկաց իմաստասէրքն են ասացել: Ամէն բուրճն մինչ տասն տարածն իւր տէրն ունի և ի տասանէն մինչ քսանհինգ տան տերն ունի և ի քսանէն մինչ երեսուն ինը տանն տէրն ունի, որպէս Խոյն զՄառեխն, որ իւր տէր է, ունի մինչ ի տասն: Արեգական, որ հինգ տան տէր է, ունի տասանէն մինչ ի քսան Չոհրեին, որ ինը տան տէր է, ունի քսանէն (85ա) մինչ երեսուն: Եւ այսպէս ամէն բրձերն:

Այլ, որ յիշէ զհտուտն: Եւ այլ իմացիր, որ ամէն ոմանք իրենց ազգ մի հտուտ ունին: Եւ Բաբելոնացիք ազգ մի, և այսոք որ տլսմաթին տէրքն են, զԲաբելոնացն ունին: Եւ մեք զայն կու յիշենք Համալն մինչ վեց դարած: Չոհրեան ունի սպիտակէ կրակ բանի: Աղեկ է և ի վեցէն մինչ երկուտասան Մուշթարի քսան և եօթ խիստ սպիտակ է, անտի մինչ քսան Օտարիտին է, խիստ խոր է, սպիտակ է, գրած կայ ի վերայ իւրն, և անտի մինչ քսան և յօթ Մառեխն է, ճոհար է, կարմիր է բանին, որ ի կրակն առնեն. յայնկից մինչ երեսուն Չոհալն է, խիստ սև է:

Յուլն յառաջէն մինչ ի ութ Մուշթարի չոր է, իւր

ասլն ի գետնի բոյս է, մինչ չորեքտասան Օտարիտ է, անտի մինչ քսան Չոհրե, անասուն է չորեքոտնի, որ եղջիւր ունի, անտի մինչ քսան և հինգ Չոհալ է, գետնի է, չոր է, խիստ սև է: Անտի մինչ երեսուն Մառեխն է, շնչաւոր է, որ ուտէ երեք ազգ միս:

Եկաւորն(85բ) մինչ վեց Օտարիտն է, թուռն է, փոքր աչք, միս ուտէ: Մինչ մետասան Չոհրե է, մարդ է, մսակեր է: Անտի մինչ յօթևտասան Չոհալն է, շնչաւոր է, սև է զէթ սատանայ:

Խեցգետինն մինչ եօթն Մառեխն, գազան ջրային է, միս ուտէ ու ճուհար, որ ի ջուրն, և ի կրակն է զուգած: Անտի մինչ երեքտասան Մուշթարին է, ճոհար, որ ջրէն ելել և չէ աղէկ հոտ: Անտի մինչ ինըտասան շնչաւոր է, Օտարիտին է, որ ի ջուրն կու լինի և ոչ կու մեծանա և ոչ կու փոքրանայ, երկու գոյն ունի: Անտի մինչ քսան և վեց Չոհրեան է, իրք է, որ կուտվի, սպիտակ: Անտի մինչ երեսուն Չոհալն է, անշահ իրք է, սև, որ ինք կարմրութիւն կայ:

Առիւծն մինչ վեց Չոհրեան է, ճոհար է սպիտակ, որ խկի օգտութիւն չի գալ, չոր է զէթ զքար յերկան: Անտի մինչ մետասան Չոհրային է, (86ա) յերկայն է, չոր է: Անտի մինչ յօթևտասան Չոհալ է, ճոհար է սև, պակաս օգտութիւն կու գայ իրմէն: Անտի մինչ երեքտասան Օտարիտն է, երկու ազգ ճոհար է, մեկ չոր է, մէջն փոր է, գոյնն յիստակ է, չորեքոտնի է, որ միս ուտէ:

Կոյսն մինչ յօթն յՕտարիտ է, բոյս է, իւր հունդն փոքր է, յերկայն է, մինչ հինգևտասան Մուշթարի է, բոյս է, որ իւր պտուղն չէ մեծ, քիչ քաղցր, իւր մէջն լաւ է քան զեզրն: Մինչ քսան Երկու Չոհրե է, բոյս է, զէր է, պատուական է: Մինչ քսան և ութ Մառեխն է,

բոյս է, որ յիւր ծառն խիստ փուշ, կարմիր, չոր: Մինչ երեսուն Զոհալ է, հոտած, սեւ:

Կշեռն մինչ եօթն Զոհալ է, շնչաւոր է, յերկայն, սև է, շատ ուտող է: Մինչ հինգետասն յՕտարիտ է, շնչաւոր է, յիւրմէն կայ, որ կու թռչի և կայ, որ չի թռչիլ, ոտք չունի մարդոյ, չարկամ է: Անտի մինչ քսան երկու Մուշթարէ է, շնչաւոր է, (86բ) ծանր հոգի, անշահ: Անդի մինչ քսան ինը Զոհրան է, շնչաւոր է, թռչունն մըթնագոյն: Անտի մինչ երեսուն Մառեխն է, շնչաւոր է, միս կուտէ:

Կարիճն մինչ եօթն Մառեխն է, շնչաւոր է ջրային, միս ուտէ և վնաս առնէ ջրային կենդանեաց, շատ ոտուի ունի: Մինչ չորեքտասան Մուշթարի է, ճոհար է ի ջրային իրաց, որ իւրմէն օգտութիւն կու գայ: Անտի մինչ քսան երկու Օտարիտն է, շնչաւոր է, որ ի ջուրն կու կենայ, յերկայն, յիւրմէն օգտութիւն կու գայ և յիւր մսէն կուտուի: Անտի մինչ քսան եօթն Զոհրե է, շնչաւոր է, ի ջուրն ի չոր, կանաչ: Անտի մինչ երեսուն Զոհալ է, ճոհար է անշահ, նման է ի թռչուն աղտոտ, սեւ:

Աղեղնաւորն մինչ ի երկուտասան Զոհրե է, առաջի կէսն ջաւհարմ է, որ նման է ի քար, միւս կէսն ջաւհարմ ի պատուական կանաչ: Մինչ եօթնտասան Մուշթարի է, առաջի կէսն շնչաւոր է, միւս կէսն ջոհար է, յագիզ կանանչ: Անտի մինչ մետասան Օտարիտն է, կէսն շնչաւոր է, միւս(87ա) կէսն ջոհար է անշահ: Մինչ վեշտասան Զոհալին է, ջոհարմ է, որ հալուի ի կրակն կարմիր: Մինչ երեսուն Մառեխն ջոհարմ է սեւ, որ ի կրակն կու զուգվի:

Այծեղջիւրն մինչ եօթն Օտարիտն է բոյն, և մինչ

չորեքտասան Զոհրե է, ճաւհար է, սպիտակ թռչուն, նման է ի ջուր և ի բոյս, և մինչ քսաներկու Մուշթարի է, շնչաւոր է, չորեքոտնի, որ եղջիւր ունի: Մինչ քսան վեց Զոհալ է, ջոհարմ է պինտ, որ ի կրակն կու զուգլի և չի հալիլ: Անտի մինչ երեսուն Մառեխն է, ջաւհարմ է պինտ, որ կու հալուի ի կրակն և կու քշտէ ի կարմիր:

Զրհոսն մինչ յոթ Օտարիտին է, շնչաւոր է, որ յիւրմէն մարդկացն գէն կու հասնի: Մինչ երեքտասան Մուշթարի է, շնչաւոր, որ կու թռչի, և մինչ քսան Զոհրէ է, շնչաւոր է, որ բաժին մի մարդ կու նմանի և է թռչուն: Մինչ քսան վեց Մառեխն է, թռչուն, որ միս ուտէ և այծու նման է: Մինչ երեսուն Զոհալ է, շնչաւոր է, առաջին գազան է և վերջին դև է:

Ձուկն մինչ երկուտասան Մուշթարի է, երկու ազգ է, մեկ շնչաւ(87բ)որ է և բոյս, և միւս ի ջրէն կելնէ և նման է մարգրտի: Մինչ վեշտասան Զոհրե է, շնչաւոր է, ջրային, ահուկար, որ ահուկ է գինչ որ ի ջուրն կայ: Մինչ ութնտասան Զոհալ է, ցանէ ի ծովերն, է և մարդ մի, որ շալկել է երկաթ և քար:

Այլ դուռն, որ յիշէ զաթնայաշխարհաթն հայեցք ի յասողին ի դարածն, թէ ի բուրճն քանի է գնացել, և առ ամեն դարածի երկուտասան դարած, և առ ամէն դաղիդայի երկուտասան դաղիդայ գինչ որ լինի, նա դու ի յայն բրճէն, որ այն ասողին էր, նա դու երեսուն երեսուն ձգէ, յորտեղ քո հաշիւն հասնի, նա հօն է աթնայաշարիաթն: Ասողին օրինակ քեզ այդ, որ գտաք տալեհն զԱղեղնաւորն, քսան վեց դարած հինգետասան դաղիդայ զարկաք երկուտասան, եղաւ վեց հազար, երկուտասան թողաք, երեսուն երեսուն ի

կուսակցն ի վեր ընկաւ ամենայնապարհապէս, տալեհին ի Միզանն չորեքտասան դարաճ, և եփ աստղ մի աստղի մի ամթ(88ա)նայնապարհապէս լինի, նայ յայնց է գերթ զայն, որ է դալաս առնէ ի յայն աստղն, և աստղ մի ի տան մի յամենայնապարհապէս լինի, նայ այնպէս է որպէս ի յայն տունն է:

Այլ դուռն, որ յիշէ զհազն ու զՖարահն, որ թարգմանի հանգստութիւն և խնդումն: Հազն այս է որց աստղ, որ ցորեկոյ է, ցերեկն է ի վերև գետնիս և գիշիրն ներքոյ, և էգ աստղն, որ գիշերոյ է, գիշերն վերև գետնիս և ցորեկն ներքոյ ու Ֆարահան այս է, որ յՕտարիտն ունի ի տալեհն ու Ջոհրան երեք, Լուսին երեք, Մուշթարին հինգ, Մառեխ վեց, Արեգակն ինը, Ջոհրե մետասան, Ջոհալն երկոտասան:

Այլ դուռն, որ յիշէ զդաստուրիամեն, այսպես է, որ լինի աստղն յիւր տունն կամ իւր շարաֆն, և աստղ մի յինքն նայի իւր տանէն կամ իւր շարաֆէն ի յոթ ատէ, որպէս Ջոհրան ի Միզանն ի տալեհն, ու Ջոհալն ի ճատին չորս, կամ Ջոհալի Միզանն ու Մառեխի ճատին: Եւ իմացիր, որ երբ աստղն, որ յիւր հազն լինի կամ ի Ֆարահն կամ ի(88բ) տասթուրիամեն, նա իւր զօրութիւն խիստ ուժով լինի և իւր բանն խիստ մեծ:

Դուռն չորեքտասան, որ ցուցանէ զսուրամեն զդարաճնոյն, և յառաջ քան զմտանեն յինքն՝ յիշենք իւրեանց զարարողութեներն:

Յառաջի սկիզբն գիտացիր, որ գրած է, թէ ամէն դարաճ ազգի ազգի պատկեր ելանէ, և այն ծածկեալ խորհուրդ է ասացած յայն տեղի, և մարդ, որ քաջ իմաստուն լինի և խորհրդաւոր, նայ այն ապա կարէ հասանել, և այն, որ խնդիրքն այն է, որ զամենայն

դարաճ ու զինքն կու յիշէ, թէ մարդոյ կերպարանք յայն իշխանութիւնն վարէ և ի վերայ մարդկացն, և յոր յանասնոյ կերպարանք ելանէ, այն իշխանութիւն յանասնոց վերայ ունի, և որ յառիւծոյ կամ գազանի, նա ի վերայ թէգութեան յիշխանութիւն առնէ և որ աղուոր գուններ ելանէ, նայ այն ուրախութիւն տա, և այն, որ զինչ աղեկ իրք(89ա) ելանէ, նա տայ մեծութիւն և խնդումն և ուժ: Եւ այն, որ զինչ ազգի ազգի իրք ելանէ յինքն, որ յիրար չի նմանիլ, նա այն ի վերայ ազգի ազգի իրաց զօրութիւն տայ և ի վերայ չարկամի, և որ ուզի, մարդկացն ի մէջն չարկամութիւն ձգէ և բաժանէ ի միմեանց, և այն զինչ որ յիշելի է, սուրամ իրաց վատ կամ ջուր, վատ կամ շնչաւոր վատ, նա այն ի վերայ վատութեան զօրութեան տայ, և այն, որ այլ յիշել է, թէ մարդոյն պատկեր ելանէ և ի հետ սլիհ կամ երկամթ, նա զօրութիւն տայ ի վերայ ուժի և արիութեան, և այն, որ կու յիշէ, թէ մեռած կամ հիւանդ ելանէ սուրամեն, նա ի վերայ տկարութեան տա և մեծ ունջ առնէ: Եւ զայլ և զմնացել դարաճին, որպէս գրեցաք, նոյնպէս գիտացիր:

Սկիզբն երկու: Միաբան ասացին իմաստասէրքն առաջինքն և վերջինքն, թէ ամէն դարաճի Ֆալաքնին դարանջն ունին զօրութիւն, ունին (89բ) և աւուրք ազգի ազգ, որ երբ ընկնի դարաճայ մի յայս երեք հարիւր վաթսուն ի տարուն տալեհն տէրն, ի դարաճ մի յայսոց և յայն տարուն գնացք, թէ աղէկ և թէ վատ, ի վերայ այն տարաճին լինի, և թէ աստղն մի հանդիպի կամ ի խիրան, կամ ի տարոյն տալեհն, կամ ի ցրցերն, կամ ի Ֆասլին տալեհն, կամ յըջթմայ ըստ զպալին տալեհն, կամ ի մօլուտի տղայի, կամ բան մի, որ մարդ

կուզէ առնէ ի դարաճի մի վերայ, որ այն բանն լայեղ լինի, այն աստղն ֆել առնէ:

Սկիզբն երեք: Ամէն ազգի ի սուրաթն ի դարաճնունն ազգ մի ասացած է, ապա այն ի Տուժտուժն է ասացել, որ Ապօտատիսն զինքն ընտրել է և Զօռտուշտն զինքն ընտրել է, մեք այլ զայն աղէկ տեսաք, նա ասաց թէ, երբ ուզես, որ բան առնես յայս թղթէս նա դու գիտես զբան, որ ուզես առնես, և փնտոէ զինքն ի յայս դարաճնիս: Եւ երբ(90ա) գտնուս զայն դարաճան և գիտենաս ըզպուխուրն ու զանունն, ու տես զայն աստղն, որ ի յայս եօթն աստղէս, որ զայն բնութիւնն ունի, տես զհատին տէրն, և զոչին տէրն, և զմութալիթին տէրն, և զաթնայաչարիային տէրն, և զտանտէրն: Եւ յերբ իմանաս զդարաճին տէրն, նա դու տես զօրն զայն աստղին ու զպահն ի յայն օրն յայն ժամ, թէ այն աստղն է՞ գ է, նայ դու յայն գիշերն արա, որ իւրն է, և յայն սահաթն, որ իւրն է, և զայն զդարաճին սուրաթն, հանի թուխթ և զիւր անունն յիր ներքեւն զարկ մանդալ դանկով և գրէ ի բրձերուն անունն և զեօթն աստղին ի վերայ ու զիւրեանքն Հնդի գրով գրէ: Երբ զայն առնես, յայն ժամ տես զպուխուրն զայն տարաճին, և պուխուր արար և ուզէ ի դարաճին տէր ոչն ի յիւր անուանէն զքո խնդիրքն, զինչ ուզես, նա ինքն կատարէ խիստ շոյտ: Եւ թէ քան երեք օր յամէ՝ նա միւս տարպայ, (90բ) այլ արա մինչ երեք տարպայ, արա որ լինի ամէն ինն օր, և յամէն երեք աւուր զլուխ տարպայ մի արա: Ապա տե՛ս, որ չղալտիս զանունն զդարաճնոյն և աստղին, թէ չէ չլինի, և այլ իմացիր զգիտութիւնն զդարաճնունն ֆալաքին, որպէս ասացաք: Ով կարէ իմանալ՝ մեծ գիտութիւն և իմաստութիւն է:

Սկիզբն չորս: Այս բանիս տէրն պարտ է, որ գիտենայ թէ յինքն որ աստղի հատ է մուլաֆիղէ բանին: Եւ այն բանն խիստ ուժով լինի, և այլ պիտի գիտել ի հաստատ աստղերուն դարաճնին զիւրեանց գնացք և լայնքն, որ երբ տեսնուս աստղ մի որ ի դարաճիս ընկել է, որ իւր բնութեամբ է, նա բանն խիստ ուժով լինի, և թէ հակառակ լինի, նա բանն վատ ուժ լինի:

Ասացել են իմաստունքն, թէ ամէն շնչաւոր և բոյս և սուրաթ ազգ մի խասիաթ ունի: Որպէս առիւծն յորժամ սպի(91ա)տակ խօսող տեսնու, նա փախչի, և գիշերն ի կրակ տեսանու, փախչի, երբ տեսնու յորս պարան քաշէ մարդ՝ փախչի, այսիւ իմացան թէ զինչ յաչխարհս պատկեր կայ: Իւր օրինակն ի վերի ֆալաքն կայ, և որ ի վայրս սուրաթնի են, յայնոր հրամանքն են ասացուածք ամէն դարաջայ, որ ելանէ յինքն սուրաթ մի, որ զօրութիւնն ունենայ ի վերայ բաներու: Եւ այն որ յաջմէն և ձախմէն թէ հանց, որ իր բնութեամբն նա օգնէ իւրն, հանց որ թէ հակառակ է, չթողու, որ ինքն բան առնէ և այլ ամենայն տարաջայի, որ ի արեւելից է շան է, նա իւր դիմաց եօթն տանն տարաջայն պիտիր իջնու, տես թէ իւր բնութեամբ է, նա օգնէ իւրն, և թէ հակառակէ, պակաս ցուցանէ իւր զօրութիւնն:

**Ի ՏԱԿՃԱՅ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՅ ԳՐՈՑ ՔԱՂԵԱԼ
ԲԱՆՔ ՅՈՎԱՆԷՍ ԵՐՁԸՆԿԱՑԻՆ**

ՅԱՂԱԳՍ ԱՊԱՑՈՒՑԻ

Ապացոյց ի ֆքրելոյն լինի, և ֆքրելն է զհասն, (91բ) որ է խոկալն. և սեռ ապացուցին ֆքրելն է: Ու զհասն այն է, որ զսեռն բաժանէ մինչ յանհասն, որ է արձակիլ:

Եւ է այսպէս, որ ասէ՝ այս իրքս յերկուս բաժանի՝ կամ կենդանի է կամ անշունչ, և ապա որ է՝ զայն քակտէ:

Աւրինակ յանշնչից ոսկին, որ ասեն այս սպեքայս այնչափ ոսկի է, այնչափ արծաթ է, այսչափ պղինձ: Ոսկոյն մարմինն զիւր գիճուլթիւն¹⁷ և զիւր տահնիաթն և զզօրութիւն ի հողոյն առեալ է, և մատանին տաքութիւն զինքն ի լրման եփեալ է՝ զլրին և զհողին յաւելուածն առեալ, որ այլ ոչ կարօտի բաժանման. հրոյ եփե[ա]լ է և արծաթն, բայց գիճուլթիւնն և գետնոյն յաւելուածն հաստել չէ: Եւ պղղընձին եփն միջնակն է, զի ժանգ է, որ եփումն առեալ է. այլ յիշել է գիճուլթիւնն և սև է դարձել ի քանին տաքութեանէն, ապա հուրն գնա (92ա) այրէ և ցրուէ, որ այլ չըմնա գիճուլթիւն ջրային և տահնիաթն հողային:

Իսկ ոսկին, որ հաստատեալ է, բնաւ ոչ այրի. և այն է արձակիլն խիասին, յորժամ ասեն ամենայն մարմին մասաւոր արեւ է, և մարմին ջրխառնած ի ճօհարէն:

¹⁷ Բնագրում սխալմամբ գրված է «գիտուլթիւն»:

Մարմին երկայնութիւն և խորութիւն և բարձրութիւն է, տարեք է և պարզ ճօհար է: Այսպէս իմացիր զամենայն մարմին ֆալաքնոյն, որ է տեսակացեալ ի նիւթոյ: Եւ նիւթն բնաւ բնութիւնն չունի, զի թէ ունէր՝ կամ պակաս էր կ[ամ] աւերէր (°): Է այս, զոր մեք կու տեսանենք, օղն է, չէ ֆալաքն. զի մեր զգայարանքս քան զհինգ կամ զտաս ֆարսախ աւելի չտեսնու, ապա յայտ է, որ խելացն ֆքրելովն գտանի ֆալաքն, որ է իմացականին և ոչ զգայարանօք: Եւ թէ ասես՝ թէ աստեղքն ընդէ՞ր երևին. վասն առաւել մեծութեան իւրեանց և նրբութեան օղոյն ի մեր տեսութեանս անկանի, որպէս Զոհալն ի եւթն (92բ) երկինքն ի վայր զիւր լոյսն ի պաղ գիճուլթիւն աչաց մեր հասուցանէ որպէս պատկեր մի, որ ի ջուրն երևի:

Եւ ֆքրելն չորս իրօք լինի՝ խելացն իմացմամբ, և փորձելով, և զգայութեամբ, և հաւատալով:

Խելացն արդարութեամբ, յորժամ ասեմք, հինգ ի հինգ քսանհինգ է, և կամ քսան անգամ ի հինգ՝ հարիւր, կամ յորժամ ասեմք՝ Արեգակն լուսաւոր է, կամ ասեմք եռանկիւն՝ եռանկիւն լինի կամ սուր կամ կանկնած:

Իսկ փորձելն ի մէջ խելացն և զգայութիւն (իմա՛ զգայութեան) լինի, որպէս վարօղն սաւֆրային, սակամոնին և սաւղային զարիկոնն, զոր գիտէ խելքն, որ ոչ է պատահմամբ, այլ բնութեամբ, զի թէ պատահմամբ էր, լինէր ժամ մի, և ժամ մի ոչ լինէր:

Իսկ զգայութեամբ է, որպէս այրելն հրոյն և կտրելն թրին, երկայնութիւն և լայնութիւն մարմնոյն, զոր-

դուլթիւն և ծոռութիւն գրոյն, յաւելուլն¹⁸ և պակասիլն տուրնջեան և գիշերոյն:

(93ա) Իսկ հաւատալն, որպէս շինուածն Երուսաղէմի և կամ մարգարէիցն և թագաւորացն թուակաւնքն և սոցին նմանեաց, որ չկենայ կարծիք ի հաւատալն: Եւ յայս չորիցս ոչ մնայ ինչ արտաքոյ ի Ֆքրելն:

Վասն որոյ գիտելի է, որ ամենայն տեսակս սկիզբն ունի, զոր խելքն իմանայ, որպէս ասացաք զճանապարհ քակելոյն անշնչին, այսպէս և զամենայն իր ի սահմանս գտցես: Երբ անուներն սեռ լինի, վայրէ ի տեսակս և զտեսակն՝ յանհատն, զի այս երեքովս լինի եղիասն:

ՎԱՍՆ ՆԻԻԹԻ ԵՒ ՏԵՍԱԿԻ

Գոյացութիւն, քանակն¹⁹ և որակն նիւթ և տեսակ լինին միմեանց, քանակն՝ տեսակ, և որակն՝ նիւթ. օրինակ, շապիկն՝ տեսակ և կտաւն՝ նիւթ: Եւ կտաւն՝ տեսակ և մանածն՝ նիւթ, մանածն՝ տեսակ և բամբակն՝ նիւթ, բամբակն՝ տեսակ և բոյսն՝ նիւթ, բոյսն՝ տեսակ և տարերքն՝ նիւթ, տարերքն՝ տեսակ և մարմին իւր՝ (93բ) նիւթ, մարմին՝ տեսակ առ գոյացութիւնն որ է ճաւհար, և գոյացութիւնն իւր՝ նիւթ. և ճաւհարն պարզ պատկեր է ամենայնի. և այսպէս սկսեալ յոտիցն մինչ ի բարձրութիւն և ըստ այլու՛մ օրինակի:

Ձինչ ձև որ ի գոյութիւնն ի տես գայ, որ է ճաւհարն, անտեսակ կոչի, և տեսակովն լինի բաժանումն էակացս: Եւ տեսակն, որ ի միոյ նիւթոյ լինի, բազում են,

և նիւթն մի, որպէս յերկաթոյ և՛ թուր, և՛ դանակ, և՛ այլ բազում իրս:

Եւ նիւթն չորս ազգք լինին: Առաջին, նիւթ արհեստից, որպէս փայտ հիւսան և երկաթն դարբնի:

Երկրորդն, նիւթ բնութեան կոչի, որպէս չորս տարերքդ և զամենայն ինչ, որ ի ներքոյ Լուսնիս են: Յայս նիւթէս տեսականան մինչ ի մարգազ գետնոյս մայտայնինն և բոյսքն և կենդանիքն, և որ ի նոցունցն լինին և յապականիլ խառնուածոյ, այլ ի նոյն տարերսն դառնան՝ հուրն առ հուր և յայլսն ամենայն: Եւ այն (94ա) զօրութիւն պարզ ճոհար է, որ է առաջին շարժումն:

Երրորդն, նիւթ ընթանուր կոչին. այսպէս, ֆայլաքնին և աստեղք և որ ինչ ի նոսա կան, ուստի ամենայն աշխարհի շարախառնութիւն²⁰ և հաւասարութիւն:

Չորրորդն, զոր նիւթ առաջին կոչեն, որ ճոհար պարզ իմանալի, յոր ոչ հասանի զգայութիւն, ուստի և սկիզբն ամենայն իրաց ի նմանէ է և ինքն տեսակ է գոյացութեան, որ է ճոհարն, և ի նմայ քանակ և որակ ոչ երևի, այլ քանակն և որակն պատկերնի են պարզ, այսինքն տեսակ, որպէս ասացաւ:

Եւ առցուք օրինակ զոսկին կամ զտարպն²¹, կամ զաճն և զյակունդն, որ ոսկոյն գիծութիւն, որ ի հողոյն և սնդկէն, որ ժիպակն հաստատեալ է, զոր հուրն ոչ կարէ բաժանել և հողն և դավըն ժամանակիս ոչ ապականէ:

Իսկ զտարպն ապականէ և զիւր տահնիաթն յիր մարգազն հասցնէ. և մասունք սնդ(94բ)կին, որ ի հո-

¹⁸ Բնագրում՝ «յաւելովն»:

¹⁹ Բնագրում՝ «քանակին»:

²⁰ Բնագրում՝ «ղարախառնութիւն»:

²¹ Բնագրում՝ «զտարպն»:

ղոյն է, զիւր դարձն ի հողն տայ, զոր մարտասանք կոչեն: Նոյն յիմացիր գյակուենդն և գածն: Բայց բարի է այն ճօհարն²², որ դավրն զիւր տեսակն ի նիւթէն չկարէ փոխել, որպէս բուսականքն և կենդանիքն. զի յայրելն ծառին և յապականելն կենդանոյն դառնայ իւր նիւթսն և հուրն զհուրն ոչ այրէ, բայց երբ անցնի յիր մարքազն, երթայ ի յեթերն. և այս մաթալս (°) զգայութեամբ է:

ՅԱՂԱԳՍ ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՊԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Եօթն են մարմինք, որ ի ներքոյ Լուսնին երկնիցն են, չորս տարերք և կենդանիք, բոյսք և մատանին. և առաջին սոցա է հուրն, որ իւր երկրորդ չկա և սեռ է Արեգակն: Չորս տարերքս սեռ խաս կոչին, և կենդանիք և բոյս և մայտանինն մասնաւորք կոչին, և այս եօթն մայրեր կոչին, և խառնուածն սոցա ի նիւթոյ և ի տեսակէ, և եօթս նոցայ մարմին:

(95ա) Շառաւիղն է լուսոյն պատկեր, ջերմութիւնն՝ հրոյն, և գիծութիւն՝ ջրոյն, և տաքութիւն և հովութիւնն և շարժումն՝ օդոյն, հովութիւն և չորութիւն՝ հողն. և սոցա տարերքս պատահամբ տեսակ ընդունին և ոչ մնացական, այլ փոփոխական, որպէս ջուրն, որ ջերմանայ, և հողն տաքանայ և այլ այսպիսիք. օդն ցրտանայ: Եւ այսպէս լինի երկու տեսակ՝ մինն հաստատուն և մին ոչ. և հաստատունն այն լինի, որ թէ խափանի՝ մարմին խափանի. և այն պարզ ճօհար կոչի

²² Բնագրում՝ «ճօհար է»:

մարմնոյն, որ ճօհարն, որ ջրախառնած է, հետ մարմնոյն զինքն հաստատուն կու պահէ:

Ապա կատարե[ա]լ տեսակն այն է, որ երկայնութիւն և լայնութիւն և խորութիւն ունի, մարմինն գոյն և հոտ և համ, և որ թապաղ լինի տեսակին, որպէս հրոյն շարժիւն և տաքութիւն թապաղ է շարժելոյն և չորութիւն տաքութեանն նոյնպէս և այլ տարերացն: Ապա(95բ) լինելութիւն տարերացն նիւթ է և տեսակ լինի, որպէս լինելութիւն հրոյն ի ֆալաքին շարժելոյն, և օդն իւր նիւթոյն լինի, և շարժումն ֆալաքին պատճառք է հրոյ գործոյն. յանցանել հրոյն իւր հաստատուն տեսակն պատլի և օդ լինի: Եւ յորժամ օդն վասն հեռանալոյ Արեգական փոփոխումն ընդունի՝ ջուր լինի և ի ջրին մարքազն գայ: Եւ ջուրն յորժամ փոխի յիւր կերպէն, որ է գէջն, յերկար ժամանակ պլօր լինի կամ յակունդ և յաւելնալոյ գետնոյս գիջութեան՝ սնդիկ լինի, աղ, գած ու շ[ի]պ լինի և յայսմի նման. և ի դաշտն, ուր Արեգակն ի վերայ անցանի ժամանակ՝ յիւրմէ յակունդ գայ, և թէ Հրատին գլուխն ընկեր լինի՝ պեծատա գայ, և թէ Հրատին թարպեղ հայեցք ունենայ՝ կարմիր աղ գայ, թէ ի Լուսաբերն լինի՝ պլօր գայ, թէ ի Լուսնիթագն՝ գլուխսն ամթ լինի և Երևակն թաթլիթ և թասդիս լինի, նա ալմասն գայ. թէ սամթուասին ընկեր լինի, (96ա) գմրութ գայ: Եւ այսպէս ամենայն ինչ, որ ի գորութենէ ի գործ գայ, յաստեղաց շարժմանէն լինին:

Նոյնպէս և բոյսքն յերկու պատճառէ լինին՝ կամ ի սերմէ, կամ ինքնաբոյս՝ ի ջրէն և ի հողէն և յԱրեգական շարժմանէն է և յընկերութենէ աստեղացն և ֆալաքին և տարերացն լինի ամենայն կենդանիք և

բոյսք և մատաննին. նոյնպէս և փոփոխուամն լինի, որ է ապականութիւն, որ ապականի տեսակն, որպէս աղն ի հողոյն և ի ջրէն է, յորժամ փոխի ի տեսակէն, զոր ապականութիւն կոչեն, իր գիշուութիւն յօղիցն մարքազն ելնէ, և օղն այլ պատուական է քան զաղն:

Եւ հողոյն յաւելուածն ի հողմն մնա և այս աչաց տեսեալ եղև, որ աղն, յորժամ զհրոյն տաքութիւն տեսանէ, օղ լինի: Այսպէս լինին և այլ մարմնոցն ապականումն յիւր տեսակէն:

Իսկ պարզ ճօհարին և նիւթոյն ոչ լինի բնաւ (96բ) ապականութիւնն: Այսչափ վասն լինելութեան և ապականութեան:

Գիտացիր որ ապականութիւնքն, որ ի ներքոյ Լուսնին ֆալաքին են, եւթն ազգ են, մին ի փոփոխմանէ տարեբացն է՝ ի հրոյն յօղն, յօղոյն ի մեզ, ի մեզանէ ի հողն: Եւ այսպէս դարձեալ կրկնի ի հողոյն ի մեզ, ի մենէ յօղն, յօղոյն ի հուրն: Եւ երկրորդն այն է, որ յօղն ի տես զայ, որ ի վերին աստմանէն ասացաք:

Երրորդն՝ բոյսքն և տունկքն և ամենայն մարմին, որ աղպէտ տա:

Չորրորդ կենդանիքն են և ամենայն ինչ, որ ի ներքոյ Լուսնիս ֆալաքին են, որ ի լինելութիւն զայ, երեք պատճառաւ լինի: Առաջին պատճառն՝ գործնականն, երկրորդ պատճառք՝ տարեբքն, երրորդ՝ տեսակքն:

Արդ պատճառքն տեսականին և ապա պատճառք գործնականին, որ զորդ մայտաննոյն բնութեան ճօհարն է, յառաջի (97ա) շարժմանէն ի պարզ ճօհարէն, որն աֆիտն է:

Եւ բազում են ճօհարք մատաննուն, են որ հալին ի

հրոյ, որպէս ոսկի և արծաթ և այլն, և են, որ ոչ հալի որպէս ալմասն, յակունդն, յալեղն. են, որ վասն թուլութեան հալին և բուխար լինին, որպէս աղերն. և են, որ լոսին և բուխար լինին, բաժին մի մնան, որպէս արջասպան: Եւ որ չլինին հուրն, ի նոսա չբանի տալղն. և են փախչին՝ քալրիթն. ու եւ են, որ բոյս են, որպէս մարջանն ի ծովն, և են ի կենդանոյ, որպէս մարգարիտն: Եւ են, որ յաղբիւրէ գան, որպէս յամպարն և նաֆտն, զի ասեն՝ թէ ամբարն ի վերայ ջրին գայ ի ծովեզերն, նոյնպէս լակն և լատանն ու մոմիայն, իսկ ընտիր ճօհարնին ջուրքն, որ ի մէջ երկրին, և քարանց, և լերանց, և քարայրնոյն ծալուելէ ի բուխարնոյն, և յԱրեգականն շողոյն կու եփի և բուխար լինի, զի ճմեռն ի ջերմութիւն ի ներ(97բ)քոյ երկրի կու մտանէ ի ցրտոյն ուժէն և ամառն ցրտութիւն ի ներքոյ գետնիս իջնու ի շողէն ուժուն, որպէս ի տիւն և ի գիշերն տեսանես, որ ցերեկն ջերմանայ օղն յԱրեգական ջերմութենէն և գիշերն ցրտանայ: Նա վասն այն ջերմութեան, որ ի քարայրնին և ի մէջ լերանցն և քարանցն դադարեալ լինի, յորժամ նեղէ, ջերմութիւնն ելանէ ի դուրս և ի ցրտանալն ի տեղին նստի ի գետնոյն յաւելուածէն և յերկար ամօք ծանրա[նայ] և սնդիկ լինի, քալրիթ ու զոնեխ լինի, քալրիթ կարմիր կամ սպիտակ, զըռնեխ կարմիր կամ դեղին:

Եւ յորժամ քալրիթն ու զոնեխն յայլ պաղլա լինին և ժիպակն այլ պաղլայ, նա յիւրեանց կերպն կենան և չելնէ ճուհարն, ապա թէ երկուքն ի մէկ պաղլայ լինին և ի ժամ յղանալոյն և սերմանն և այլվար ի տեղն նստելն մէկ առ մէկ գան տարպա(98ա)ն ի տաքութիւն՝ մաղտանին զնոսա եփէ յէլմով մինչև ճօհար լինի, և

թէ մասն քարթին սաֆի լինի և մասն սնդկին ի պղտորութեան է և ի հեռութենէ եփումէն մաղտայնին միջակութիւն լինի՝ նա անտի ոսկի լինի, և թէ ցուրտն ի յայն տեղին չմտանէ ի ժամանակ մի, և թէ քարթիթն և ժիպակն սուրբ լինին և նիսպաթն դրուստ լինի, նայ ի մէջ եփմանն ցուրտն յինքն տեղի գտանէ, արծաթ լինի, և թէ սնդկին և քարթիթն և նսպաթն ի բնութեան վերև լինի, ապա տաքութիւն մաղտնոյն աւելի լինի, ոսկին այրի և պղինձ լինի:

Եւ թէ ժիպակն զուլպա լինի և քարթիթն մասն հողոյն՝ դրուստ լինի և ցուրտն ի քանն զօրանայ՝ ի նմանէ կլայեկ գայ, և թէ սնդկին ուժով լինի և քարթիթն ի լրման յըստակ և լինի, ապա սակաւ և քարին կերպն թոյլ և աւազ լինի և ցուրտն զօր(98բ)անայ, անտի տարպ լինի:

Եւ թէ մասն ժիպակին ծանր լինի և քարթիթն սպրկիկ չլինի և ի մաղտանն ժամ մի տաքութիւն և ժամ մի ցրտութիւն զօրանայ, անտի երկաթ գայ:

Եւ թէ քարթիթն ի վերայ ժիպակին զօրանայ և տաքութիւն աւելի լինի՝ անտի սուրմայ գայ և լինի որ մաղնիսիա գայ:

Եւ այսպէս է ղիասն ամենայն մայտաննոյնիս՝ յակունդն, պլօրն և յաղեղն և որ յայսմի նման յանձրևին ջրէն լինի և լատիֆ բուխարէն, որ ի մէջ լերանոյն նստի և քարայրնոյն գլուխն, որ ի բաց լինին և ծաղիսկ զմարգարիտն էութիւն, որ ի ծովէն սատաֆնին ի միմեանց ծնանին:

Եւ ոմանք ասեն, թէ ի թանձր գիճութենէն ելանկ, որ ի մէջ ծովուն ժողովել: Երբ սատաֆն մեծնա ունինքն ի ներս թանձրանա, իր մէջն կենդանի մի

երևնայ, որպէս կտոր մի միս սպիտակ ի ձգան միսն ի նման և յինքն տահնիաթն սաֆի լատիֆ լինի:

Եւ այս սատաֆս (99ա) այն կենդանոյն ուժովն կենդանանայ և շարժումն առնու, ապա ամենևին զբերան իւր ոչ բանայ, զի թէ բանա՝ լեղի ջուր ծովուն մտանէ և սպանանէ զնա. ապա երբ զիւր շարժումն ի լման առնու, ի միջոյ ծովուն ի վերայ երեսանց ելնէ և զբերանն բանա, որ յայն գոլորշեացն, որ ի ծովէն ելեալ լինի, յիւր վերա նստի, որպէս ցօղն ի վերա խոտին և յեմէ մինչև այն կենդանին ժողովն լընուի, ապա սատաֆն զբերանն յիւր ուր ածէ և ի վայր երթայ ի մէջ ծովուն: Եւ այն կենդանոյն բնական տաքութիւն զցօղն, որ էառ սնուցանէ ժամանակ մի, նայ լինի որպէս սնդիկք. ապա այն կենդանին այլ ուժածանրութեան նա յիւրմէ ի դուրս հանէ, որպէս զծնունդ մարդոյ, ապա այն սնդիկքէն ի վերա սատաֆին գայ, լինի որ մէկ կտոր մնայ. լինի որ բազում լինի և ժամանակաւ պնդանա և մարգարիտ լինի պատուական քան զայլ ճօհարին: Ասեն իմաստունքն, (99բ) թէ կլայեկն մօտ է յարծաթն, կլայեկն ի զըռնեխէն է և ի սընդկէն չէ, ի քարթէն սարպն լաւ է քան զկլայեկն և քան զայլ մաղտայնին մարգարիթան, տահնաճն և լազուարն, փիրուզա, պէճատա և յամբարին քարն և խնդամանդն և որ յայս նման:

Գիտելի է, զի ի բնութենէն, որ ընթանուր հոգի է, ընդ ամենայն պարունակսն երկնի մինչ ի գետնիս մարքազն իջանէ և զամենայն շարժէ ի գոյութիւն և ի գործ. զի ասեն, թէ լեղին չէր ի մարդն և յայլ կենդանիսն, զսաֆրայն յաղեցն չառնոյր, նայ զաղիքն այրէր, և զի ստամոքն նորա ուժովն զկերակուրն հալէ ու զխլտն, որ ի ստամոքացն վերա կու վայթի, որ թէ չէր՝

հում մնայր կերակուրն և խլտն և ապականէր, և թէ չէր Զօհալն՝ նայ չէր փայծաղն, որ զչոր սաւտայն յաղեցն ի դուրս կու քաշէ, որ թէ չլինէր այս, աղիքն ի չոր սաւտային զօրու(100ա)թենէն չորնայր և կենդանութիւն չմնար: Եւ այսպէս, թէ Երևակն չկարէ, հետ ծերութեան մահ չկայր:

Եւ մատաննին փոքրերն պատուականն յակունդն է և ի կենդանիքն փոքր ճճիքն ժրժմունքն, և ի կենդանիսն պատուական մարդն, ի բոյսերն փոքր ինքնաբոյսք են և մեծ և պատուական ամբրաւենին՝ բուսոցն տեսակն, որպէս կենդանի է, որ է զգլուխն կտրես՝ մեռանի, և թէ բեւեռ մի ի սիրտն զարկնեն՝ մեռանի, և ամենայն վերջնոցն առաջի յաստիճանէն իջանի, սկսեալ ի վերնական դասուց հրեշտակացն:

Առաջին իմաստութիւն է մարդուն ճանաչելն զինքն, որ լինի ինն իրոք: Առաջին՝ հայել ի կերպ մարմնոյն և որ ի նմայ: Երկրորդ՝ հայել ի կերպ հոգոյն և ի գործն: Երրորդն՝ յերկուցն միութիւն, և որ յերկուք են, մարմնոյն հայելն այն է՝ յանդամքն ի յամենայն, ի մորթ, ի միսն, յոսկորսն և յայլսն և զգործ ամենայն իմանալ, զգրուցին և զներքին: Եւ (100բ) ապա գիտել, թէ մարդն աշխարհ է, չորս տարերքն և նմանամ[ա]սունքն և այլ ամենայն: Եւ ի մարդն ինն ճօհար կայ. ոսկրն, դեղն, երակն, ճրագուն, արիւն, միսն, մորթն, դունկն, մազն: Տասն բնութիւն կայ ի մարդն, ի գլուխն ու զլլինքն, կուրծքն վերի և ներքի փորն, պորտն, անդամն, ծունկքն, ջիղքն, ոտքն, որ սոյն է ամենայն անդամոցն, զոսկրն, զջրերն, զկապերն: Տասն ջամու կայ ի մարդն՝ դուղն յիշողականն, լուսոյ երակ աչացն, երիկամն, աղիքն, փայծեղն,

սիրտն, լեղին. այլն կայ յայլ տեղ գրած, որ ասէ թէ ԺԲ ծակ կայ ի մարդն:

Երեք են գիտութիւն մարդկան. առաջին՝ զգալիքն և զգայութեամբն, զոր կատարեալքն և տղաքն և այլք կենդանեաց ընկերութիւն ունին զգալն. [երկրորդն՝ խելացն իմացումն, որ կատարելոցն միայն է. երրորդն՝ ապացուցականն, որ իմաստանոցն է գործ:

Կենդանիքն յաղէկն և ի վատն (101ա) ներհակաբար ունին. գերթիսն ի վարդին հոտն մեռանի և յաղբէն կենդանանայ: Սաֆրատոն ի մշկին հոտոյն հիւանդանայ, ի վարդին առողջի և այլ այսպիսիք կան:

Յերրորդին գործն բնութեամբ կոչի և զեղեղանն իմանալի գործն, որպէս աստուածային արարչութեան արուեստին գործ բնութեան, զոր ի մարմին ներգործէ, նմա հոգի կոչեն. և զոր յաշխարհս խելք և ի բուսականքն հոգի բուսոց կոչեն. և զոր առ մարդիկ՝ հոգի մարդկան կոչեն. վասն որոյ զնա հոգի ընդհանուր կոչեն:

Գիտել պարտ է, զի առաջին շարժումն ֆալաքին և աստեղացն ազդելով յերկիր ընդհանուր հոգոյն զօրութենէ զամենայն որ ի տեսակ բերէ, նմա հոգի մասնաւոր կոչեն և այս կերպս, որ ի տես երեկ կամ ի մայտանէ է, կամ ի բուսոց, կամ ի կենդանեաց և զէտոց զգանազանութիւն: Ասացաք յառաջդ և մայտաննոյն և բուսոցն և կենդանեացն ամենայնի ժամանակ (101բ) կայ, որ դարած սկիզբն ամենայն բարեաց, որպէս միակն ամենայն համարոց, նոյնպէս և խելքն սկիզբն և պատճառ է այլ իրոյն, որպէս միակն թուոցն: Եւ որպէս համարն երեքին յետոյ է երկուքին, նոյնպէս հոգին հետ խելացն է:

Չորրորդը՝ որպէս նիւթն, հինգերորդը՝ որպէս բնութիւն, վեցերորդը՝ որպէս պարզ մարմինն, եւթներորդը՝ որպէս ֆալաքնին, ութներորդը՝ որպէս տարերքն, իններորդը՝ որպէս ծնունդքն, ինն վերջք է միակացն և ծնունդն էութեան: Եւ մայտաննին որպէս տասներորդը, բոյսքն որպէս հարիւրերորդը, կենդանիքն որպէս հազրնին: Համարն զուգ լինի և Ֆարտ, զորդ ու քսուր, բնութիւն հոգևոր կենացն ֆարտն և մարմնաւորին զուգն, զորդն ըստ բնութեան հոգևոր բարեացն, քսուրն մարմնաւորիս. ի ֆալաքնոյն յաւելուլ ու պակասել լինելութիւն ու ապականութիւն:

Մարմինն ամենայն յերկուց է՝ ի նիւթոյ և ի տեսակէ. նիւթն տեսակին ընդունող է: Եւ առաջին տեսակն, որ ի նիւթոյ է, երկայնութիւն և լայնութիւն և (102ա) խորութիւն ունի, որ և զայլ տեսակքն ընդունի և զմարմինն զեռանգիւն, զքառանգիւնն և զայլն: Նիւթն առաջին պատճառ է հոգոյն և խելքն առաջին ճօհար է յԱստուծոյ, և խելքն զնավսն ի տես եբեր, և նավսն ճօհար մի ի տես եբեր, որ երկայնութեամբ և լայնութեամբ և խորութեամբ լինի. խելքն գործ յԱստուծոյ, նաֆսն գործի գործոցն Աստուծոյ, որպէս կէտն, որ մասն չունի. այսպէս իմասցիս անգորինակն Աստուած: Ի կիտէն գիծն երկայնի, որպէս նաֆսն ի խելացն և որպէս ի գծէն մարմինն է, որպէս նիւթն ի նաֆսէն և օրինակ բոլոր հաստատ մարմնոյն, որպէս կերպն և հետ մուսլախ մարմնոյն պարունակող ֆալաքն և անտի ի վերուստ հաստատութիւնն աստեղացն և ի մինչ ի կետն ի սա մարքազն բեր. և ապա ի մայտանին, ի բոյսքն, ի կենդանիքն:

Զինչ առ մարդիկ իջեալ է, յընթանուր հոգևոյն ճօ-

հար մի լինի, և ի հոգոյն ճօհարէն(102բ) զօրութիւն մի լինի ի խելացն ի զօրութենէն, որ ի ցայտմանէ խելացն է, որ ի հոգոյն իջեալ է:

Աւրինակ այսպէս, բոլոր մի ի պլօրէ ի գետինն դիր և կլթղայ մի բօլորէ յիւր վերա և բոլոր կլթղային կրակ արար. հուրն ի կլթղայն տես ցուցանէ և կլթղայն ի պլօրն, ապա ի կլթղայն երկու զօրութիւն լինի, զոր էառ ի լուսոյ հրոյն և մին՝ զոր անցոյց ի պլօրն, և պլօրն բոլոր գերկու զօրութիւն ընդունին: Եւ արդ է հուրն՝ խելքն, կլթղայն՝ յընթանուր հոգին, պլօրն՝ մարդիկ. և զի պլօրն երկու զօրութիւն ունի, մարդիկ երկու զօրութիւն՝ զխելքն և զհոգին. խելքն ի հոգին է, որպէս լոյսն ի հրոյն: Այլ օրինակ, Արեգակն յապակէ կուպայ մի ցայթէ շաղսն ի մէջ կուպային, լինի Արեգակ ի խելացն ի մանգիլն կուպայն յընթանուր հոգոյն շաղսն մարդկան. ապա մարդիկ երկու ընկալան զօրութիւն, մին զԱրեգակն ի մէջ կուպային և մին (103ա) վասն ապակոյն, զոր վասն ապակոյն՝ այն օրինակ հոգոյն և լոյս Արեգականն օրինակ խելացն: Եւ է խելքն անուն մի և բազում այլ իրաց պատճառ, որպէս սահմանեն խելքն զօրութիւն մի է, որ նովաւ բաժինք առնեն և ընտրեն զբարին և [վախչին] ի չարէն. խելքն զօրութիւն է, որ զառաջադրե[ա]լն իր մեկնէ, որ ի տարակուսանացն ելնէ, որ զօգտակարն ի ձեռն բերէ: Եւ այլ ասեն խելքն էութիւն է ի մարդիկ հաճելի, որ նովաւ [սօս[ի]] և շարժի և ընտրէ: Բաժանի խելքն յերկու՝ ի տեսական և ի գործական տեսակն, ի զօրութիւն, ի հոգին, որպիսութեամբ զընթանրականն իմանալ: Եւ գործն կատարումն է հոգևոյն, որ կերպ որ ուզէ ի գործ բերէ: Եւ այլ ասեն խելքն գործաւոր ճօհար է և ամե-

նայն իրաց կերպ յինքն է: Սահման նաֆսին անուն է ընկերութեամբ, յոր մարդ և կենդանիք և բոյսք ընկերք են. և այլ մարդիկ և հրեշտակք ընկերք են:

(103բ) Այլ նաֆս ճօհար է յետ մարմնոյն և շարժող է մարմնոյն և տա բանաւորութիւն, ընտրողութիւն և կամ գործով, կամ զօրութեամբ. զիւելքն և զնաֆսն յընթանուր կոչեն, զի այն հասիցն թտարօղ են:

Կարգ ուսումնականին. նախ պարտ է զհամարողականն ուսանիլ, զի թուլթն է իմաստութիւն: Եւ ապա գեղլիտիսն, որ կերպարան և դիրքն է աշխարհիս: Եւ երկինքն թաղլուխ յերկրաչափութիւն ունի: Եւ ապա զաստեղաբաշխականն, որով զվերին աշխարհն ճանաչէ:

Ապա զբանաւորութեան ուսումն, որով զխօսիցն իմանայ զօրութիւն և զարուեստ, որ առանց խոկալոյ խօսիլ չկարէ: Եւ ապա զբնութեան և զբժշկութեան ուսումն ուսանի՝ զմարմնոց մարդկան բաժանումն և զգեղերն կազմել և զցաւերուն պատճառնին: Եւ ապա մտանէ յընթ[ան]րական ուսումն և ապա յապացուցականն:

Ապա ի մոլճառ(104ա)ատ ճօհարնին և յասլն նիւթոցն, և ապա զմոլճառատ հոգին ու զիւելքն ճանաչէ և ելանէ սօքօք ի սրբութիւն Աստուծոյ զյարութիւն և զնոր աշխարհն գիտել. և այս են գիտութիւն ուսմանցն:

Առաջին ռատաթն է, որ է չորս արհեստն՝ համարողականն, երկրաչափականն, աստղաբաշխականն, երաժշտականն, երկրորդ՝ բանաւորութիւն, երրորդ՝ բնաբանականն: Երրորդ՝ աստուածաբանականն, և բազում և մեծ իմաստութիւն կայր առ գտօղն համարողականին, որ եզիտ զիւր խասիաթնին մեծ Ֆիթաղորոս հաքիմն:

Մասն թե աշխարհ որպէս մեծ կենդանի է, և թէ որպէս բազում զօրութիւն կայ ի կենդանին, նոյնպէս և յաշխարհս քարշողական, ըմբռնող, այլայլօղ և այլն: Եւ ըմբռնողն է այսպէս. իրք որ կարէ պատկեր առնուլ և ըմբռնել, որպէս ջուրն ոչ կարէ պատկեր առնուլ, մինչ ի հող խառնի և բնութիւն է բուսոցն, որ ի վայրացն զգիճութիւն յինքն (104բ) քարշէ: Նոյնպէս օղն զիւր նման օղն զհաւան ի միջոյ լերանցն քարշէ: Որ թէ լերանց գլուխն ի ծածուկ չէր, հողմն ի դուս ելանէր: Որպէս ստամոքն զկերակուրն քարշէ և ըմբռնէ, և տունկք և բոյսք՝ զջուր, նոյնպէս և երկիր լինի. ի մայտանին քարշէ և շինէ: Եւ է աշխարհս մեծ կենդանի և գետինս ի միջոցի որպէս սիրտ, և գետք և ջուրք որպէս երակքն և այլ մանր կենդանիքն յայս մեծ կենդանոյ փորս կան անբաւք:

Աշխարհս կենդանի է մի մեծ, եւթն աստեղքն յինքն եւթն անդամ է, որ սիրտ ու աղիք, ստամոք, տամաղն, փայծեղն, թոքն, երիկամունքն և գետինս ի մէջ այս կենդանոյս. և կենդանիք, որ ի գետինս են և զեռունք, որպէս խլտ, որ ի կենդանին լինի, և ազդումն որպէս ի վերուստ ի Ֆալաքն լինի, ապա ի տարերքն, ապա ի բոյսքն, ապա ի մաղտանին. ամէն աստղ յերկինս իւրն բաժին կայ, որպէս յայլ տեղ(105ա) յիշած է, և չորս տարերացս թտարօղ բնութիւն է, որ սկիզբն է առաջին շարժմանն: Եւ երկնիւ և աստեղօքն յայս չորս տարերքս հասցնէ:

Արդ՝ բնութիւն ի նմանութիւն հիւսան, Ֆալաքն որպէս ձեռք, տարերքն որպէս փայտ և երկաթ, և որ ինչ

ի նոցանէ լինի՝ աթոռ և թուր, այսպէս կենդանիք, ու²³ բոյսք ու մայտանն: Եւ որպէս Ֆալաքն է յաշխարհս շարժող հոգին և ըստ չորից տարեբացն, չորս խլտն, և որպէս ի գետինս բոյսք և մատան՝ ի մարդն տեսանի ամենայն, որպէս ասացած է: Եւ այսպէս զգլխոյն փորուածքն զգայարանացն դիրքն, որ պատեհուոր է ամենայն և կամ չորս որպէս վրան մի երկնին ու շաւրիաննին և ոսկրտին որպէս սիւն է: Եւ խար կայ ի փայտերն և բանաւոր հոգին տէր և բնակիչ: Եւ երեք զօրութիւն կայ ի մարդն բանականն. ի լերդն և յաղիքն կենդանականն, ի սիրտն. բանական՝ յուղեղն, ուր և հոտոտելիքն և բանական: Եւթն է քարշողականն և (105բ) այլն: [Առաջին]՝ քարշողն այն է, որ կերակրոյն որ ի սոսորդն ի վայր անցնիլն քարշէ զիւր յինքն: Երկրորդ՝ պահօղն, որ յիջանելն ի ստամոքն պահէ մինչ ամենայն տեղն զիւր քաշէ: Երրորդ՝ հալօղն, որ հալի և արիւն դառնայ: Չորրորդ՝ բաժանականն, յամենայն մարմին սփռելով, որ ամէն անդամ յինքն դարձնէ: Հինգերորդ՝ յաղթութիւն, որ մայտայնն յաղթէ ի վերա ամենայնի: Վեցերորդ՝ ծնընդականն, որ յաղեցն յամենայն մարմին, որ մարմին լինի: Եւթերորդ՝ չկայրէ յիստակ բան վասն եւթնեանս:

Ապա հոգևոր զօրութիւնն երեք է. առաջին՝ զգայութիւն, այլ չկայ ի սիրտն: Արեգակն զօրութիւն կուտայ յաղիքն, Մուշթարին ի սաղն, Լուսին ի ստամոքն, և յերիկամն՝ Զօհրայն, ի տամաղն՝ Յօտարիտն, ի լեղին՝ Մառեխն: Եւ այսպէս մարդն փոքր աշխարհ է. ոսկորքն, լերունքն և գետին՝ երկնին, ի ծովէ գետերն, տամաղն ու կուրծքն՝ Ֆալաքնին:

²³ Բնագրում՝ «որ»:

(106ա) Երևելի արարածքս մեծ աշխարհ ասի և մարդ փոքր աշխարհ, և որպէս մարդ հոգի է և մարմին, նոյնպէս աշխարհ. և զոր ինչ կայ ի մեծ աշխարհս՝ մարմնեղէն և հոգեղէն, կայուն և գնայուն, գոյացուցութիւն և պատահումն, չոր և դալար, ամենայն կայ և ի փոքր աշխարհ և փոքրովս մեծն իմանին: Եւ ամենայն որ յաշխարհի կայ՝ սկիզբն ունի և վախճան. սկիզբն գոյութիւն է ամենայնի և վախճանն քակտումն է մասանցն: Եւ գոյութեամբ մի են և մասամբ բազումք, և բաժանումն ի մարմնոյն մասուն անկան և միաւորութիւն ի հոգիսն, զի հոգիքն նուրբ են, նոյնպէս և խառնուածն նրբաբար, և մարմինն թանձր է: Նոյնպէս և մասանցն խառնուածն. թէպէտ խառնուածն թանձր է, այլ մասանցն ժող[ով]ումն նրբագոյն է զօրութեամբ. և կազմութեան գոյութեան յերկու պատճառաց է: Առաջին է նիւթն: Երկրորդն՝ որպէս ոսկէզ[որ]ծին նիւթ է ոսկին կամ արծաթն, և նիւթին պատճառ արուեստն, որ առնէ (106բ) մայտանի և թէ վասն որոյ վասն մատին: Եւ դարձեալ, ամենայն գոյացութիւն չորս սահմանով է. պատճառն և նիւթն, ներգործութիւն և գործողն: Եւ թէ չէր նիւթն, ուստի՞ լինէր գոյացութիւնսն. և թէ չէր գոյ[աց]ութիւն, ուստի էր զօրութիւն. և թէ ոչ էր զօրութիւն, ուստի էր ներգործութիւն. վասն որոյ սօքօք գոյացան ամենայն արարածք:

Դարձեալ, սկիզբն ամենայն իրաց գործաւորն է, և գործաւորն յայտնէ զներգործելն, և ներգործելն՝ զներգործելոյն գոհութիւնն, և գոհութիւն յայտնէ գորակութիւն: Եւ գործն շարժիլ ասէ, և շարժելն ջերմային է և ջերմն արոյ է և գործքն անշարժ է, և անշարժն պաղ է, և պաղն իգական, և պաղութիւն և ջերմութիւն ծնաւ զչորութիւն և զգիծութիւն, զի ծնաւ չորութիւն զպաղութիւն և զիջութիւն զտաքութիւն. և եղեն չորս տարերք և մայր, որ ծնան զմեծ աշխարհս և զփոքր, մեծ(107ա) աշխարհիս մարմին է երկինք և երկիր, գլուխ է երկինքն և ոտք է երկիրս. և են կազմե[ա]լ ի չորից տարերաց և եւթն մոլորականք. երկոտասան կենդանակերպքն խառնեն զօրութեամբ և բաժանին ներգործութեամբ: Եւ վերին երկինքն գլուխ է, և ի գլխոյն բաժանին երակքն, որ տան զօրութիւն հոգւոյն, և երկոտասան կենդանակերպքն և կուրծքն և փորն, ուստի ելանեն այլ զօրութիւնք և սփռեն յանդաման որպէս մոլորականքն, որ յազգեն յաշխարհս որպէս երակօք մարմնոյ. և այսպէս ի վերին երկնիցն ի գլխոյ և ի փորոյն կենդանակերպիցն և ի մոլորականացն ազգեն զօրութիւն իբր յանդամս:

Եւ մարդ, որ է փոքր աշխարհ, զգայական զօրութեամբքն առնու, որ են աչք երկու, ականջք երկու, քթափողք, բերան: Ի սոցանէ սփռուին զօրութիւնն յամենայն յանդաման: Նախ ի կուրծան, ուր սրտմըտական է. անտի ի սիրտն և ի ստամոքն, ի թոքն և ի լերթն, և յերիկամունսն երկու (107բ) և ի փայծեղն և յայլ մարմին: Եւ զօրութիւնքս այս երկու են. նաւսըն

ի վեր բարձրանայ և թանձր ի վայր իջանէ, և զօրութիւն նախախնամական է, որ բաժանի յամենայն անդամսն: Եւ են երկոտասան կենդանակերպքն ըստ չորից տարերցս — Խոյն, Առիւծն, Աղեղնաւորն հրային, Յուլն, Կոյսն, Այծեղջիւրն հողային, Եկաւորն, Կշեռն, Ջրհոսն օդային, Խեցգետինն, Կարիճն, Ձուկն ջրային: Եւ են սոքայ թտալոզ եւթն մոլորականացն: Երեքէն միջակէն հաւասար են կենդանակերպիցն բնութեան, և չորս ոչ, այլ աւելի և պակաս: Եւ միջակք և հաւասարք են Արեգակն, Լուսին, Լուսնթագն: Եւ որ աւելի և պակաս են՝ Ջօհալն, Մառեխն, Ջօհրայն, Օտարիտն: Երեւակն հողային, Հրատն հրային, Լուսաբերն հողմային, Փայլածուն ջրային և Լուսնթագն:

Այս հինգս ամէն երկու տուն ունին, իսկ Արեգակն և Լուսին մի տուն ունին և բար(108ա)ձրութիւն և ցածութիւն: Խոյն հրային և Կարիճն ջրային և են տուն Հրատին, Յուլն և Կշեռն հողային և հողմային՝ տուն Լուսաբրին, Եկաւորն և Կոյսն հողմային և հողային՝ տուն Փայլածունին, Խեցգետինն ջրային՝ տուն Լուսնին: Առիւծն հրային՝ տուն Արեգական, Աղեղնաւորն և Ձուկն հրային և ջրային՝ տուն Լուսնթագին: Այծեղջիւրն և Ջրհոսն հողային և հողմային՝ տուն Երեւակին, Վիշապն հակառակ է եւթն մոլորականացն և զօրաւոր ի վերա եւթնեանցն: Եւ իւր փառաւորութիւն և բարձրութիւն և ցածրութիւն ի կենդանակերպսն գրած է:

Եւ այսպէս նմանութիւն մեծ աշխարհի և փոքրին:

Գլուխն է Խոյն, Յուլն՝ աչքն, ուսք և ձեռեր՝ Եկաւորն, կուրծքն և կողն՝ Խեցգետին, փորն՝ Առիւծն,

պորտն և մսանքն՝ Կոյսն, երկու բոմբքն և ծածուկ անդամքն՝ Կարիճն, երկու բարձքն՝ Աղեղնաւորին, երկու ծունկն՝ Այծեղջի(108բ)ւրին, երկու սրունքն՝ Զրհոսին, երկու թաղ փոխն՝ Զուկն: Այսպէս համեմատին անդամք մեծ աշխարհիս ընդ փոքուն, որ է մարդն: Նոյնպէս ունի փոքր աշխարհ զմեծին բնութիւնն՝ զտաքութիւն և զպաղովութիւն, զչորութիւն և զգիծութիւն, ջերմ է հուրն, որ է խարտեչ մաղցն, գիծութիւն օղն ի պաղովութենէ, որ է ջուրն, պղղամն ի չորութենէն, որ է հողն, սաւտայն, որ է սև մաղցն և ի գիծութենէն, որ օղն արիւնն:

Եւ մոլորականքն ի զգայականսն նմանին այսպէս:

Աջ ականջն Զօհալն է, ձախն՝ Մուշթարին, աջ ակն՝ Շամս, ձախն՝ Ղամբեր: Աջ քրթափողն՝ Օտարիտ, ձախն՝ Զօհրէ, բերանն՝ Մառեխ: Եւ այս զգայականքս ի գլուխն է, որ նման է բարձր երկնիցն, և են մոլորականքս իբր զօրութիւն հոգոյն: Նոյն զօրութիւն են և ի կուրծան և ի փորոտիսն, եւ են որպէս երկոտասան կենդանակերպքն ի մէջ երկնի և երկրի: Այսպէս կուրծքն և փորն (109ա) ի մէջ գլխոյն և ոտիցն: Եւ են նման եւթն մոլորականացն զուղն, լեարդն, թոքն, փայծեղն, երկու երիկամունքն և լեղին, գլուխն է խոյն, յորում փառաւորութիւն Արեգական, նոյնպէս զուղն կայարանք Արեգակն է: Պարանոցն Ցուլն, ի նմայ փառաւորի Լուսին, նոյնպէս հռչակն և թոքն ճանապարհ շնչոյն է Լուսինն, կուրծքն խեցգետին, յոր փառաւորի Լուսնթագն: Նոյնպէս սիրտն, որ ի մէջ կրծիցն կայ, Լուսնթագին զօրութիւն հոգէկան: Եւ սոքայ են միջակ

բնութեամբ, լեարդն Հրատին և հրային, լեղին Փայլածուին և ջրային, երկամունքն Լուսաբերին և հողմային, փայծեղն Երեւակին և հողային: Ասէ մտացն և խելացն հոգիք Արեգական է և է յուղեղն և անուն սուրբ Թօրոս, թափանցիկ հոգին և շունչն անուանի պրմտուս, որ է ի թոքն և ի թռչափողն: Եւ հոգի հեզութեան և խելաց և (109բ) ուսման և մըտացն անուանի իմատրուս, որ է Լուսնթագին և է ի սիրտն սըրտմտականն: Եւ պատերազմի հոգիքն անուանին հեմատուս, որ է ի մասին Հրատին, և կայարան լեարդն: Հոգիք նախանձու և խափէութեան, կեղծաւորութեան և չար խորհրդոց անուանին պլմատուս և են ի Փայլածուէն և կայարան լեղին: Հոգիք տրտմութեան և սգոյ և ցնորից անուանին պատմոս և են յերեւակէն և կայարանք փայծեղն: Իսկ հոգիք ցանկութեան և զգայութեան և ստամոքաց անուանին քինատուս և են ի Լուսաբերէն և կայարանք երիկամունքն: Եւ սոքա խառնուած ունին ընդ միմեանս: Եւ են եւթն երակ յուղեղն, որովք Արեգական հոգիք տարածին ընդ մարմին, ի սիրտն եւթն երակ, որ ունի ի Լուսնթագէն, հոգի զօրութեան և սփռեն ի լեարդն, եւթն երակ ի Հրատէն զհոգոյ զօ(110ա)րութիւնն ունին և բղխեն ի լեղին եւթն երակ, զօրութիւն հոգոյ ի Փայլածուէն ունին և բղխեն և զօրացուցանեն: Եւ յերիկամունսն եւթն և զօրութիւն ի Լուսաբերէն, որ բխեն և ի փայծեղն, եւթն ունին յերեւակէն հոգոյ զօրութիւն և այլ գրեալ էր այս երակաց անուանք:

Եւ այս երակս յայլ բազումս բաժանին և սօքօք ճա-

նաչի առողջութիւն և տկարութիւն և տրտմութիւն և ուրախութիւն. և այս ի կենդանակերպիցն և ի մոլորականացն ունի զազդումն զօրութեան. ի մարդն ԳՃԿ (360) ոսկր է, ի Լուսընթագէն է, եւթնհարիւր ջիլ է, և է Լուսաբերին, եւթնհարիւր երակ է և է զօրութիւն ի Հրատէն, ՇՂ (590) կաթ արիւն, կաթն մթխալ մի և հոգի զօրութեան ի Փայլածունէն, իննսուն վեց հազար մագ է ի մարմինն և զօրութիւն յերևակէն, ՊԻ (820) մթղալ ճրագուն է և հոգի զօրութեան յԱրեգակնէն, ՅԿ (360) մթղալ զուղն զօրութեան (110բ) և հոգի [ի] Լուսնէն: Եւ այսպէս այս անդամքս ունին զօրութիւն ի կենդանակերպիցն և մոլորականացն և որպէս լոյս Արեգական զաշխարհս լուսաւորէ սոքա զանդամս մարմնոյ փոքր աշխարհի:

Արար Աստուած զսիրտն, որպէս երկոտանի. զլերթն որպէս չորքոտ[ա]նի. թոքն, որպէս թռչուն, փայծեղն որպէս ջրային կենդանիք. զերիկամունսն որպէս ցամաքային սողունս: Եւ դարձեալ մարմին մարդուն նման է հողոյն: Արտասունքն ի ջուրն, երակքն ի քարանցն, երակսն, ոսկերքն ի լերինս, մագն բուսոց և տնկից լերկ տեղիսն, որ ի մարմինն՝ լերկ գետնոցն և դաշտաց: Զանք մարդոյն նման Հրատին, երեսն՝ արևելք, ծոծորակն՝ արևմուտք: Աջ ձեռն՝ հարաւ, ձախն հիւսիս: Եւ այսպէս փոքր աշխարհ ունի զմեծին և՛ զզօրութիւն, և՛ զբնութիւն, և՛ զներգործութիւն, և՛ զիմացականութիւն:

Այլ շրջագայու(111ա)թիւն երկնից և կենդանակերպքն և որպէս մոլորականքն, երբ են հաւասար՝ ըն-

թանան, և եղի հակառ[ակ]: Նոյնպէս երբեմն փառօք և իմաստութեամբ և գեղեցկութեամբ յաջողի մարմնոյն յանդամոց և եղի տառապանօք, ցաւօք, հեծութեամբ: Եւ կենդանիք, որ մեծ աշխարհիս կան և ի փոքրս ի մարդն, որք յորպիսութենէ կենդանակերպիցըն և մոլորականացն պէսպէս շարժմանէն ի պղտոր նիւթոյ յաջ և ի ձախ, ցած և բարձր և ի տառապանաց շարժմանէն, որք նոյնպէս են. և անասունքն խոնարհ գլխով և ոչ որպէս բանականքս ի շնորհս, ի խելքս և յիմաստս և ի գեղեցկութիւնս, այլ կենդանիք, զազանք և անասունք:

Եւ Քրիստոսի՝ տվօղին ամենայն իմաստնոյ՝ փառք: Եւ զանպիտան զրչակս յիշեայ:

Աղպետ (արաբ.) - վերջ, արմատ, հլք.

Աճ - տե՛ս Զած.

Ամբրաւենի - արմավենի.

Ամթ - տե՛ս Ամիթ.

Ամիթ (հուն.) - կվարցի բաղադրութիւնն ունեցող մանուշակագուլն քար, որին վերագրվել է հարբեցողութիւննից գերծ պահելու հատկութիւն, ամետիստ.

Ասլ (արաբ.) - արմատ, ծագում.

Աֆիտ - տե՛ս Սֆիթ.

Բուխար (արաբ.) - շոգի, գոլորշի.

Դադիղա (արաբ.) - ըռպե

Դանապ - վիշապի տուտ.

Դավր (արաբ.) - ընթացք, շրջան, փոխանցում.

Դարած - աստիճան.

Եդիաս - տե՛ս Ղիաս.

Եդլիտիս (արաբ.) - երկրաչափութիւն (Եվլիդեսի անուննից).

Եդտիար - կամք

Զած (արաբ.) - արջասպ, ծծումբ.

Զմրութ (հուն.) - զմրուխտ, կանաչ գուլնի թանկարժեք բյուրեղաքար.

Զունիս (պրս.) - սնդիկի սուզածո, սնդիկի ծծմբիտ.

Զոհալ (արաբ.) - Երևակ, օգտա-

գործվում է նաև որպես արծաթի գաղտնանուններից մեկը.

Զօհրայ (արաբ.) - Արուսյակ, օգտագործվում է նաև որպես պղնձի գաղտնանուններից մեկը.

Թաթլիթ (արաբ.) - եռյակ.

Թաղլուխ (արաբ.) - պատկանելութիւն, վերաբերութիւն, կախում, առընչութիւն.

Թայմա (արաբ.) - քամու անուն

Թապազ (արաբ.) - ենթակա, բնավորութիւն

Թասդիս (արաբ.) - վեցյակ.

Թարպեղ (գուցե թաթպեղ) - համեմատ, համապատասխան.

Թարսուզ (արաբ.) - կարգադրող, կարգավորող, խորհուրդ տվող.

Թուլթ (արաբ.) - մեկ երրորդ, երրորդական մաս.

Փիպակ - սնդիկ.

Լազուար(դ) (պրս.) - կապուտաքար, լտ. Lapis lazuri.

Լայիս - արժանի, վայել.

Լատան (պրս., արաբ.) - հոտավետ խեթ, լտ. Ladanum.

Լատիֆ (արաբ.) - վայելուչ, նուրբ, փափուկ.

Խաս - հատուկ, մասնավոր, ընտիր.

Խասիթ (արաբ.) - հատկութի-

ւոն, բնութիւն, բնավորութիւն.

Խիաս - տե՛ս Ղիաս.

Խլտ (արաբ.) - խառնուրդ, բաղադրութիւն, բաղկացութիւն.

Խնդամանդ - տե՛ս Մխնատիս.

Կթղայ (արաբ.) - գավաթ, սրվակ, բաժակ.

Կուպայ (արաբ.) - գմբեթ

Հազն - հանգստութիւն

Հաքիմ - գիտնական, իմաստուն, բժիշկ.

Ղամեր (արաբ.) - Լուսին, նաև արծաթի գաղտնանուններից մեկը.

Ղարիկոն (արաբ. հուն.-ից) - ծառի վրա բուսող սունկ, ագարիկոն.

Ղիաս (արաբ.) - բաղդատում, դատողութիւն, մտահանգում, հավաքաբանութիւն.

Ղուլպա (արաբ.) - անոթ, երկարավիզ աման.

Ճուրայպա (արաբ.) - քամու անուն.

Ճօհար (արաբ.) - գոհար, էութիւն, բնութիւն, գոյացութիւն, մարմին.

Մադինա - քաղաք.

Մադիսիայ (արաբ. լտ.-ից) - մազնեզիում.

Մադտան - տե՛ս մատան.

Մադրիս - արևմուտք.

Մայտան - տե՛ս Մատան.

Մանդիլ (արաբ.) - ճանապարհի տարածութիւն՝ իջևանից իջևան, դիտանցիա.

Մաշրիկ - արևելք.

Մաուիս (արաբ.) - Հրատ, նաև երկաթի գաղտնանուններից մեկը

Մատան (արաբ.) - հանք, հանածո, հանքաքար, մետաղ.

Մարգալ (արաբ.) - կենտրոն, վայր, գտնվելու տեղ, ընդերք.

Մարդաշիթա (լտ.) - լուսո քար.

Մարտասանք (արաբ.) - արճճի շլակ.

Մթիպալ (արաբ.) - կշռաչափ, 1/10 ունցիա, 4,26 գրամ.

Միզան - կշեռք.

Մխնատիս (արաբ.) - մազնեզիտ, մազնիս, երկաթ ձգող.

Մճրա - երկայնութիւն, ճանապարհ.

Մոմիայ - տե՛ս Մումիայ.

Մութալիթա - տարերք, չորս տարրեր.

Մուճառատ (արաբ.) - միայնակ, առանձին, զատ, բացարձակ

Մումիայ (արաբ.) - բիտում, բնական բիտումային ասֆալտ.

Մուլթարի (արաբ.) Լուսնթագ, նաև անագի գաղտնանուններից մեկը.

Մուսթաղիմ - ճշմարտացում,
Հաղորդում
Մուսլախ (գուցե մուսլահ) - ա-
ռողջարար, վերջնական.
Յակունդ (արաբ. հու.-ից) - հա-
կինթ, թանկագին քար.
Յալեղ - տե՛ս Յաղեղ.
Յաղեղ - սարգիտն.
Յամպար (արաբ.) - անուշահոտ
յուղ.
Յալ (արաբ.) - ստացում, բա-
ղադրում.
Նալս (արաբ.) - հոգի, շունչ,
անձ. բարբառային՝ ցանկութ-
յուն.
Նիսպալթ (արաբ.) - առնչութ-
յուն, հարաբերություն, կապ,
դիրք.
Նըրիս - հիվանդություն
Նապաթ - տե՛ս Նիսպալթ.
Նուզլա - իջվածք, հիվանդութ-
յուն.
Շաղս (արաբ.) - անձ, անձնավո-
րություն.
Շամլ - քամու անուն
Շամս (արաբ.) - Արեգակ, նաև
ոսկու գաղանուններից մեկը.
Պալլամ - մախաց
Պաղլա - պաղլեղ, շիպ, դեղ
Պատլի (արաբ.) - փոխվել, փո-
խակերպվել.
Պեճատա (պրս., արաբ.) - անբա-
ժան.
Պիլոն - տե՛ս Պլոր.

Պլլամ (արաբ.) - մաղաց, խուլս.
Պլոր (արաբ.) - բյուրեղ.
Պուրճ (արաբ.) - կենդանակերպ,
համաստեղություն.
Ջամո (ջամ) - մարմին
Ռասն - վիշապի գլուխ
Ռատաթ, ռիադիաթ (արաբ.) -
բաժանում, թվաբանություն
Սակամոն (արաբ. հուն.-ից) -
բուժիչ խոտ (Convolvulus
scommonia), նաև նրանից
պատրաստված դեղ.
Սամթոաս (արաբ. պրս.) - աջ-
կողմյան, աջ կողմը.
Սատաֆ (արաբ.) - զաղտակուր,
պեռլամուտր.
Սարպ (գուցե՝ Սուրպ) - արճճի
գաղտանուններից մեկը.
Սաղայ (արաբ.) - մաղձ.
Սաֆրայ - տե՛ս Սաֆրայ.
Սաֆի (արաբ.) - հստակ, վճիտ,
անկեղծ, մաքուր.
Սաֆի լատիֆ (արաբ.) - վճիտ և
նուրբ.
Սավտա (արաբ.) - սև մաղձ.
Սաֆրայ (արաբ.) - դեղին մաղձ.
Սիպա (արաբ.) - քամու անուն.
Սիֆաթ (արաբ.) - դեմք, խառն-
վածք.
Սպիքայ (արաբ.) - ոսկու ձուլ-
վածք.
Ստարպ - արջասպ.
Սֆիթ (պրս.) - սպիտակ.
Տալղ (արաբ.) - փայլար.

Տահնահ (°) - տե՛ս տահնիաթ.
Տահնիաթ (արաբ.) - ձեթ, ճարպ.
Տահիկ - արաբ, արաբական.
Հետագայում՝ մահմեդական,
նաև օսմանցի թուրք.
Տամ (արաբ.) - արյուն
Տամաղ (արաբ. պրս.) - քիմք,
ճաշակելիք, ուղեղ.
Տապուր (արաբ.) - քամու անուն
Տարպ (արաբ.) - մետաղ, երկաթ,
տեսակ.
Տարպայ (արաբ.) - բազմապատ-
կում, անգամ.
Ուստուլաբ (արաբ. հուն.-ից) -
անկյունաչափ, աստղաբաշ-
խական գործիք, աստրոլա-
բիա.
Փիրուզա (պրս.) - թանկագին
կապույտ քար, լուրթ.
Քան (արաբ.) - հանք, հանքա-
խորշ.

Քալրիթ (պրս.) - ծծումբ, լուցկի.
Քսուր (արաբ.) - կոտորակներ,
մնացորդներ.
Օտարիտ (արաբ.) - Փայլածու,
նաև սնդիկի ծածկանուննե-
րից մեկը.
Ֆալաբ (արաբ.) - երկինք, երկ-
նային շրջան, ճակատագիր,
բախտ.
Ֆարահ - խնդում
Ֆարո (արաբ.) - կենտ, միայ-
նակ.
Ֆարսախ (պահլ. պրս. արաբ.-ից)
- փարսախ, երկայնություն
չափ = մոտավորպես 5 կմ.,
կամ 30 ասպարեզի.
Փիքը (արաբ.) - միտք, մտածո-
ղություն, խոհ, դատողութ-
յուն, մտածում
Փքրեկ - մտածել, խորհել, ճանա-
չել.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան (Ս. Արևշատյան).....5

[Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք]19

Յաղագս ասացուցի.....114

Վասն նիւթի եւ տեսակի.....116

Յաղագս լինելութեան եւ ասականութեան.....118

Խստալոյս իմաստասիրի Յովհաննէս Եզընկացոյ.....131

Օտար բառերի բառարան.....138

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՅԻ

Ի ՏԱՃԿԱՅ ԻՄԱՏԱՍԻՐԱՅ
ԳՐՈՅ ՔԱՂԵԱԼ ԲԱՆՔ
(«Ռասաիլ իխվան ալ-սաֆա»)

PIECES FROM THE WRITINGS OF ARAB
PHILOSOPHERS
SELECTED BY JOHANNES ERZINKATSI
("Rasail ikhwan al-safa")

Տեխնիկական խմբագիր՝

Ս. Ճանճապանյան

Համակարգչային շարվածք և էջադրում՝

Ա. Խանգաղյան

Նկարչական ձևավորումը՝

Գ. Գասպարյանի

Պատվեր 38, տպաքանակ 500, գինը՝ պայմանագրային:
«Նաիրի» ՍՊԸ հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91: